ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2015 թվականի **թիվ 137** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի հաստատման վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 3-րդ եւ 30-րդ կետերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքը

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2015 թվականի հոկտեմբերի 12-ի
թիվ 137 որոշմամբ

Տեխնիկական առաջադրանք

Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման

1.Ընդհանուր տեղեկություններ

1.1. Համակարգի անվանումը

Լրիվ անվանումը՝ Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ինտեգրված համակարգ)։

Պայմանանշանը ԻՏՀ ԵԱՏՄ։

1.2. Պատվիրատուի եւ համակարգը մշակողին անվանումը

1.2.1. Ինտեգրված համակարգի ստեղծման աշխատանքների պատվիրատու-համակարգողը, ինչպես նաեւ ինտեգրված համակարգ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ինտեգրացիոն հատվածի պատվիրատուն Հանձնաժողովն է։

1.2.2. Ինտեգրված համակարգ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային հատվածների (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ, ազգային հատված) պատվիրատուները սահմանվում են անդամ պետությունների կողմից։

1.2.3. Ինտեգրված համակարգի ստեղծումը, գործառման ապահովումը եւ զարգացումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից, որն ապահովում է դրա գործունեությունն ու զարգացումը անդամ պետությունների ազգային հատվածների պատվիրատուների հետ փոխգործակցությամբ հաշվի առնելով ինտեգրված համակարգի զարգացման ռազմավարությունը Ինտեգրված համակարգի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքներն իրականացվում են լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ Հանձնաժողովի կողմից մշակվող պլանների հիման վրա:

1.2.4. Ազգային հատվածների պատվիրատուներն իրականացնում են իրավունքներ եւ կատարում պարտականություններ ազգային հատվածների ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման ամսով:

1.2.5. Հանձնաժողովը սեփականատիրոջ իր իրավունքներն իրականացնում եւ պարտականությունները կատարում է ինտեգրման համակարգի այնպիսի բաղադրիչների առնչությամբ, ինչպիսիք Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածը, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսներն ու համակարգերն են, ինչպես նաեւ կազմակերպում է դրանց նախագծումը, մշակումը, ներդրումը, աշխատանքների արդյունքների ընդունումն ու հետագա ընթացքը

1.2.6. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ համակարգերի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքները կատարողների ընտրությունն իրականացվում է մրցույթային հիմունքներով Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

1.2.7. Ազգային հատվածների ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքները կատարողների ընտրությունն իրականացվում է մրցույթային հիմունքներով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.3. Համակարգի ստեղծման հիմքերը

1.3.1. Ինտեգրացիոն համակարգի ստեղծման հիմքը «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն է (այսուհետ՝ Պայմանագիր)։

1.3.2. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 3 հավելված) 3-րդ կետին համապատասխան՝ ինտեգրացիոն համակարգի ստեղծման աշխատանքները պետք է անցկացվեն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԱՓԱԻՏՀ) ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հիման վրա, որի իրագործումն իրականացվել է 2011-2014 թվականներին։

1.3.3. ԱՓԱԻՏՀ-ի ստեղծման, գործառման եւ զարգացման աշխատանքներն անցկացվել են «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործառման եւ զարգացման մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագրին, Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 60 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման հայեցակարգին եւ Մաքսային միության Հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 771 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքին համապատասխան՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 260 որոշմամբ հաստատված Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ընդհանուր գործընթացների իրագործման համար առաջնահերթ ցանկը (Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում դրանց իրագործման ժամկետներով)։

1.3.4. Ինտեգրված համակարգի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետեւյալ փաստաթղթերի դրույթները՝

1) «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ ներդաշնակեցման մասին» 1973 թվականի մայիսի 18-ի միջազգային կոնվենցիան.

2) Մաքսային համաշխարհային կազմակերպության՝ Համաշխարհային առեւտրի անվտանգության եւ դյուրացման շրջանակային ստանդարտները (2005 թվականի հունիս).

3) Միավորված ազգերի կազմակերպության՝ 2005 թվականի նոյեմբերի 23-ի «Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդագրությունների օգտագործման մասին» կոնվենցիան.

4) «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիրը.

5) «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ փոխադարձ վարչական օգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

6) «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների եւ պետական այլ մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակմանը ներկայացվող պահանջների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

7) «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին նախնական տեղեկատվություն ներկայացնելու եւ փոխանակելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

8) «Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

9) ««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելուն առնչվող որոշ հարցերի, այդ ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման առանձնահատկությունների եւ բռնագանձված գումարները փոխանցելու կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

10) «Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը.

11) «Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը.

12) «Ազատ պահեստների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը.

13) «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը.

14) «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը.

15) «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ քրեական գործերով եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնության եւ փոխգործակցության մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի համաձայնագիրը.

16) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների

միջեւ փոխադարձ առեւտուր իրականացնելիս օզոնաքայքայիչ նյութերի եւ դրանք պարունակող արտադրանքի տեղափոխման եւ օզոնաքայքայիչ նյութերի հաշվառման մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրը.

17) «Մաքսային միության մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի եւ դրանց պրեկուրսորների տեղափոխման կարգի մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագիրը.

18) «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիրը.

19) «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիրը.

20) «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտի տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի տեղեկությունների փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիրը.

21) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի մայիսի 29-ի «Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների մասին» թիվ 68 որոշումը.

22) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում եւ Միասնական տնտեսական տարածքում թեթեւ արդյունաբերության արտադրանքի առանձին տեսակների դրոշմավորման համակարգի մշակման մասին» թիվ 88 որոշումը.

23) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2015 թվականի

մայիսի 8-ի «Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրականացման միջոցառումների պլանի մասին» թիվ 19 որոշումը.

24) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի սեպտեմբերի 18-ի «Միջպետական տեղեկատվական փոխգործակցության ժամանակ ծառայությունների եւ իրավաբանական ուժ ունեցող էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման հայեցակարգի մասին» թիվ 73 որոշումը.

25) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի հոկտեմբերի 9-ի «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի վերաբերյալ հիմնադրույթի մասին» թիվ 94 որոշումը.

26) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի նոյեմբերի 12-ի «2015-2016 թվականների համար Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման միջոցառումների պլանի մասին» թիվ 131 որոշումը.

27) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2015 թվականի փետրվարի 4-ի «Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրագործման միջոցառումների պլանի կատարման 2015 թվականի մանրամասնեցված պլանի մասին» թիվ 4 որոշումը.

28) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ «Մաքսային միության հանձնաժողովի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի «Մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների մասին» 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 135 որոշումը եւ Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային մուտքի օրդերի ձեւի եւ մաքսային մուտքի օրդերի լրացման եւ կիրառման կարգի մասին» թիվ 288 որոշումը.

29) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Մաքսային միության միասնական մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման վերաբերյալ համաձայնագրի նախագծի մասին» թիվ 306 որոշումը.

30) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի փետրվարի 5-ի «Մաքսային միության միասնական մաքսային տարածքով թմրամիջոցների եւ հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի պրեկուրսորներ չհանդիսացող թունավոր նյութերի տեղափոխման վերաբերյալ համաձայնագրի մասին» թիվ 11 որոշումը.

31) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի մարտի 6-ի «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջեւ ծառայողական եւ քաղաքացիական զենք տեղափոխելու վերաբերյալ համաձայնագրի նախագծի մասին» թիվ 33 որոշումը.

32) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրականացման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի վարման եւ կիրառման կարգի մասին» թիվ 180 որոշումը.

33) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործման ժամանակ տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշումը.

34) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Եվրասիական տնտեսական

հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն տրամադրելու եւ Մաքսային միության հանձնաժողովի ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի մի քանի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 224 որոշումը.

35) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշումը.

36) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշումը.

37) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ հիմնադրույթի հաստատման մասին» թիվ 125 որոշումը.

38) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունվարի 27-ի «2010 թվականի հուլիսի 1-ից ղազախա-ռուսական սահմանում մաքսային ձեւակերպումը չեղարկելու ապահովման միջոցների մասին այն ժամկետներում մաքսային հսկողության պահպանմամբ, որոնք նշված են Մաքսային միության մաքսային միասնական տարածքի ձեւավորման փուլերում եւ ժամկետներում» թիվ 159 որոշումը.

39) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 20-ի «Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց

ընդհանուր ռեեստրների ձեւերը, դրանց վարման եւ ձեւավորման կարգը հաստատելու մասին» թիվ 261 որոշումը.

40) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 28-ի «Մաքսային միությունում սանիտարական միջոցների կիրառման մասին» թիվ 229 որոշումը.

41) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային միության Հանձնաժողովի պաշտոնական կայքում Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ապրանքների դասակարգման վերաբերյալ ընդունված նախնական որոշումների ժողովածուի ձեւավորման եւ վարման կարգը կարգավորող փաստաթղթերի մասին» թիվ 297 որոշումը.

42) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին» թիվ 318 որոշումը.

43) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի «Մաքսային միության մաքսային տարածքում բույսերի կարանտինի ապահովման հարցերի մասին» թիվ 340 որոշումը.

44) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի «Մաքսային միությունում սանիտարական միջոցների կիրառման հարցերի մասին» թիվ 341 որոշումը.

45) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի «Մաքսային միությունում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ոլորտի հարցերի մասին» թիվ 342 որոշումը.

46) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային միությունում անասնաբուժասանիտարական միջոցների կիրառման մասին» թիվ 317 որոշումը.

47) Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի

«Մաքսային միությունում տեխնիկական կարգավորման մասին» թիվ 319 որոշումը.

48) «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» միջպետական ստանդարտների համալիրի մեջ մտնող անդամ պետությունների միջպետական ստանդարտները (ԳՕՍՏ-երը) (ԳՕՍՏ 34.602-89 եւ ԳՕՍՏ 34.601-90)։

1.4. Աշխատանքներն սկսելու եւ ավարտելու ժամկետները

Աշխատանքներն սկսելու ամսաթիվը՝ 2015 թվական։

Աշխատանքներն ավարտելու ամսաթիվը՝ 2017 թվական։

1.5. Աշխատանքների ֆինանսավորման աղբյուրներն ու կարգը

1.5.1. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ համակարգերի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին։

1.5.2. Պետական տեղեկատվական ռեսուրսների եւ լիազորված մարմինների, ինչպես նաեւ ազգային հատվածների տեղեկատվական համակարգերի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է անդամ պետությունների բյուջեների միջոցների հաշվին։

1.6. Աշխատանքների արդյունքները ձեւակերպելու եւ պատվիրատուին ներկայացնելու կարգը

1.6.1. Ինտեգրված համակարգի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքների արդյունքները ձեւակերպելու եւ պատվիրատուին ներկայացնելու կարգը պետք է համապատասխանի սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին, ինչպես նաեւ աշխատանքների կատարման պայմանագրերի պայմաններին։

1.7. Սահմանումները

Սույն տեխնիկական առաջադրանքի նպատակներով օգտագործվում են

հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ինտեգրացիոն հարթակ՝ ինտեգրված համակարգի ենթահամակարգ, որն ապահովում է ազգային հատվածների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ինտեգրացումը.

ինտեգրացիոն անցուղի՝ ծրագրային եւ ապարատային միջոցների համալիր, որը գործարկվում է ինտեգրված համակարգի յուրաքանչյուր հանգույցում եւ ապահովում է ազգային հատվածների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի կցորդումն ինտեգրացիոն հարթակի հետ.

ընդհանուր գործընթաց՝ անդամ պետություններից մեկի տարածքում սկսվող, իսկ մեկ այլ անդամ պետության տարածքում ավարտվող (փոփոխվող) գործառնություններ եւ ընթացակարգեր, որոնք կանոնակարգված (սահմանված) են Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով ու անդամ պետությունների օրենսդրությամբ.

էլեկտրոնային հաղորդագրություն՝ տեղեկատվական–հեռահաղորդակցական ցանցով ուղարկողից ստացողին փոխանցվող ձեւայնացված տեղեկատվություն (տեղեկություններ, տվյալներ), որն այդ թվում կարող է պարունակել կամ չպարունակել էլեկտրոնային փաստաթղթեր.

ԷԹՍ՝ էլեկտրոնային թվային ստորագրություն (էլեկտրոնային ստորագրություն).

էլեկտրոնային փաստաթղթի իրավաբանական նշանակություն՝ էլեկտրոնային փաստաթղթի հատկություն, որը թույլ է տալիս տվյալ փաստաթղթի բովանդակությունը ընկալել որպես իսկական.

էլեկտրոնային փաստաթղթի իրավաբանական ուժ՝ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթի հատկություն, որի ներկայացման եւ շրջանառության ձեւերը (դրա իսկական եւ ամբողջական լինելը) հաստատված են վստահված երրորդ կողմի կողմից, եւ որն էլեկտրոնային փաստաթղթերի միջազգային (անդրսահմանային) փոխանակումն իրականացնելիս հնարավորություն է տալիս

էլեկտրոնային փաստաթղթերն օգտագործել ըստ նշանակության եւ դատական վեճերին ու դատաքննություններին՝ որպես ուղղակի ապացույցներ։

«Վստահված երրորդ կողմ», «նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ», «ընդհանուր տեղեկատվական ռեսուրս», «վստահության անդրսահմանային տարածք», «լիազորված մարմին», «փաստաթղթի էլեկտրոնային տեսք», «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունները սույն տեխնիկական առաջադրանքում օգտագործվում են «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրությամբ (Պայմանագրի թիվ 3 հավելված) սահմանված նշանակություններով։

«Իրավաբանական ուժ» եւ «իրավաբանական նշանակություն» հասկացությունները սույն տեխնիկական առաջադրանքում օգտագործվում են էլեկտրոնային փաստաթղթերի մասով։ Էլեկտրոնային փաստաթղթի «իրավաբանական ուժ» եւ «իրավաբանական նշանակություն» հասկացությունների բացատրությունն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 73 որոշմամբ հաստատված՝ «Միջպետական տեղեկատվական փոխգործակցության ժամանակ ծառայությունների եւ իրավաբանական ուժ ունեցող էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման մասին» հայեցակարգի IV բաժնին համապատասխան։

2. Ինտեգրված համակարգի ստեղծման նշանակությունը եւ նպատակները

2.1. Ինտեգրված համակարգի նշանակությունը

2.1.1. Ինտեգրված համակարգը նախատեսված է Միության շրջանակներում տվյալների եւ էլեկտրոնային փաստաթղթերի միջպետական փոխանակման

ապահովման, անդամ պետությունների համար ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ստեղծման, ընդհանուր գործընթացների իրականացման, ինչպես նաեւ Միության մարմինների գործունեության ապահովման համար։

2.1.2. Ինտեգրված համակարգը պետք է ապահովի տեղեկատվական աջակցությունը հետեւյալ ուղղություններով՝

1) մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորում.

2) մաքսային կարգավորում.

3) սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցների տեխնիկական կարգավորում, կիրառում.

4) ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում եւ բաշխում.

5) հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրում ու բաշխում.

6) վիճակագրություն.

7) մրցակցային քաղաքականություն.

8) էներգետիկ քաղաքականություն.

9) արժութային քաղաքականություն.

10) մտավոր սեփականություն.

11) ֆինանսական շուկաներ (բանկային ոլորտ, ապահովագրական ոլորտ, արժութային շուկա, արժեթղթերի շուկա).

12) Միության մարմինների գործունեության ապահովում.

13) մակրոտնտեսական քաղաքականություն.

14) արդյունաբերական եւ ագրոարդյունաբերական քաղաքականություն.

15) դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների շրջանառություն.

16) այլ հարցեր՝ Միության լիազորությունների սահմաններում (իր զարգացմանը զուգահեռ ինտեգրված համակարգի ընդգրկման տիրույթում ներառվող)։

2.1.3. Ինտեգրված համակարգի մշակման եւ ներդրման ընթացքում պետք է ակտիվացվեն եւ համակարգվեն ազգային հատվածների կատարելագործման գործընթացները, որոնք ինտեգրված համակարգի շրջանակներում ապահովում են լիազորված մարմինների եւ Միության մարմինների տեղեկատվական համակարգերի տեղեկատվական փոխգործակցությունը։

2.2. Ինտեգրված համակարգի ստեղծման նպատակները

2.2.1. Ինտեգրված համակարգի ստեղծման նպատակներն են՝

1) Միության գործառմանն առնչվող բոլոր ոլորտներում ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական ապահովումը.

2) ընդհանուր գործընթացների իրականացման ժամանակ տվյալների եւ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ապահովումը.

3) Միության մարմինների գործունեության տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովումը.

4) մաքսային, հարկային, տրանսպորտային եւ պետական հսկողության այլ տեսակների արդյունավետության բարձրացումը՝ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ.

5) ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին, այդ թվում՝ Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգին հասանելության հավասար հնարավորությունների ձեւավորումը եւ ապահովումը.

6) վստահության անդրսահմանային տարածքի ստեղծումն ու զարգացումը:

2.3. Ինտեգրված համակարգի խնդիրները

2.3.1. Ինտեգրված համակարգի շրջանակներում իրականացվող խնդիրների շարքին են դասվում՝

1) ընդհանուր գործընթացների իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ապահովումը.

2) ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ստեղծումը եւ դրանց հասանելության ապահովումը.

3) Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծումն ու վարումը՝ դասակարգման եւ ծածկագրման միասնականացված համակարգի հիման վրա.

4) Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին (այդպիսի միջազգային պայմանագրերի եւ ակտերի նախագծերին) հասանելիության ապահովումը.

5) անդամ պետությունների տեղեկատվական ռեսուրսներին հասանելիության ապահովումը՝ Միության իրավունքին համապատասխան.

6) տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի ստեղծումն ու գործունեության ապահովումը.

7) ընդհանուր գործընթացների իրականացման ժամանակ լիազորված մարմիններին պետական հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը.

8) միջպետական տեղեկատվական փոխգործակցության ժամանակ տեղեկատվության պաշտպանության ապահովումը.

9) Միության մարմինների գործունեության տեղեկատվական աջակցությունը.

2.3.2. Ինտեգրված համակարգի շրջանակներում խնդիրներն իրագործելիս պետք է օգտագործվեն ԱՓԱԻՏՀ-ի ստեղծման ժամանակ մշակված ենթակառուցվածքային, տեխնոլոգիական եւ տեղեկատվական-ծրագրային լուծումներ։

3. Ավտոմատացման օբյեկտների բնութագիրը

3.1. Ավտոմատացման օբյեկտների մասին կարճ տեղեկություններ

3.1.1. Ինտեգրված համակարգի ստեղծման ժամանակ ավտոմատացման օբյեկտներն են՝

1) Հանձնաժողովը.

2) Միության դատարանը.

3) ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիների լիազորված օպերատորները.

4) անդամ պետությունների վստահված երրորդ կողմի (այսուհետ՝ ՎԵԿ) լիազորված օպերատորները.

5) ընդհանուր գործընթացների իրականացմանը մասնակցող լիազորված մարմինները։

3.1.2. Ավտոմատացման առարկա են Միության՝ ըստ սույն տեխնիկական առաջադրանքի 2.1.2. կետում նշված ուղղությունների գործունեության կարգավորման հետ կապված գործընթացները։

3.1.3. Ինտեգրված համակարգի ստեղծումը պետք է իրականացվի ԱՓԱԻՏՀ-ի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հիման վրա, որի իրագործումը կատարվել է 2011-2014 թվականներին՝ Մաքսային միության Հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 771 որոշմամբ հաստատված Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքին համապատասխան։

3.1.3.1. ԱՓԱԻՏՀ-ը ազգային հատվածներով եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածով միավորվող՝ ըստ տարածքների տեղաբաշխված պետական տեղեկատվական ռեսուրսների եւ անդամ պետությունների՝ արտաքին ու փոխադարձ առեւտուրը կարգավորող պետական իշխանության մարմինների

տեղեկատվական համակարգերի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ համակարգերի կազմակերպական ամբողջությունն է։

3.1.3.2. ԱՓԱԻՏՀ-ի ՎԵԿ ծառայությունը ԱՓԱԻՏՀ-ի միջոցներով սուբյեկտների էլեկտրոնային եղանակով փոխգործակցության ժամանակ ԷԹՍ-ի վստահության անդրսահմանային միասնական տարածք ապահովող՝ անդամ պետությունների եւ Հանձնաժողովի ՎԵԿ ծառայությունների ամբողջությունն է։

3.1.3.3. ԱՓԱԻՏՀ-ի կազմում ընդգրկված են հետեւյալ ազգային հատվածները՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային հատվածը.

2) Բելառուսի Հանրապետության ազգային հատվածը.

3) Ղազախստանի Հանրապետության ազգային հատվածը.

4) Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածը։

3.1.3.4. Ազգային հատվածների ընթացիկ վիճակի նկարագրությունը ներկայացված է սույն տեխնիկական առաջադրանքի 3.2 ենթակետում։

3.1.3.5. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ընթացիկ վիճակի նկարագրությունը ներկայացված է սույն տեխնիկական առաջադրանքի 3.3 ենթակետում։

3.2. Ազգային հատվածների ընթացիկ վիճակի բնութագիրը

3.2.1. Հայաստանի Հանրապետության ազգային հատվածի ընթացիկ վիճակի բնութագիրը

3.2.1.1. Հայաստանի Հանրապետության ազգային հատվածն ապահովում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության եւ անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցությունը։ Սույն տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է ԱՓԱԻՏՀ-ի ենթակառուցվածքի, ինչպես նաեւ Բելառուսի

Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների տվյալների հաղորդման գործող համակարգի օգտագործմամբ։

3.2.1.2. Հայաստանի Հանրապետության ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղին իրականացվել է Հանձնաժողովի ինտեգրացիոն անցուղու կազմում մշակված տիպային ինտեգրացիոն անցուղու ծրագրային ապահովման հիման վրա։

3.2.1.3. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տեղեկատվական համակարգի հետ Հայաստանի Հանրապետության ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու փոխգործակցության ապահովման համար օգտագործվում է մասնագիտացված հարմարակցիչ։

3.2.1.4. Ընդհանուր գործընթացների իրականացման համար օգտագործվում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության «Trade World Manager Portal» տեղեկատվական համակարգը։ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տեղեկատվական համակարգն ապրանքների փոխադրման հսկողության շրջանակներում տեղեկատվական փոխգործակցություն է պահպանում, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, հետեւյալ առումներով՝

1) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողման մասին ծանուցում ուղարկելու.

2) ապրանքների փոխադրման երթուղին անցնելու (փոփոխության) մասին ծանուցման.

3) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ավարտի հաստատման.

4) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողման մասին էլեկտրոնային ծանուցման ճշգրտման.

5) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ավարտման մասին էլեկտրոնային հաստատումը ճշգրտելու.

6) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողման մասին նախկինում ուղարկված էլեկտրոնային ծանուցումների չեղարկման.

7) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողումը հաստատելու մասին հարցում ուղարկելու.

8) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ավարտման մասին հարցում ուղարկելու։

3.2.1.5. Տեղեկատվական փոխգործակցությունը, ապրանքների փոխադրման հսկողության շրջանակներում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի՝ 2015 թվականի հունիսի 4-ի թիվ № 15/6 որոշմամբ հաստատված՝ ընդհանուր մաքսային գործընթացների հսկողության շրջանակներում Ռուսաստանի ԴՄԾ-ի, Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի եւ Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՊԵԿ-ի միջեւ տեղեկատվական փոխգործակցության տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան։

3.2.2. Բելառուսի Հանրապետության ազգային հատվածի ընթացիկ վիճակի բնութագիրը

3.2.2.1. Բելառուսի Հանրապետության ազգային հատվածը մշակվելու է տեղեկատվայնացման պետական նոր նախագծի շրջանակներում՝ սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով միջգերատեսչական տեղեկատվական այն համակարգերի միջոցով տեղեկատվական փոխգործակցության ձեւաչափերն ու տեխնոլոգիաները, որոնց ցանկը սահմանված է Բելառուսի Հանրապետության նախագահի՝ «Բելառուսի

Հանրապետությունում տեղեկատվական հասարակության զարգացման որոշ հարցերի մասին» 2011 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 515 հրամանով։

3.2.2.2. Բելառուսի Հանրապետության ՎԵԿ սպասարկման տրամադրման ծառայությունները նախատեսվում են կատարել Բելառուսի Հանրապետության էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման բաց բանալիների կառավարման պետական համակարգի հանրապետական հավաստագրման կենտրոնի հիման վրա։ Հանրապետական հավաստագրման կենտրոնն իրականացնում է կարգավիճակի մասին տեղեկատվության հրատարակման, տարածման, տրամադրման, գրանցման կենտրոնների, Բելառուսի Հանրապետության պետական իշխանության մարմինների, Բելառուսի Հանրապետության այլ կազմակերպությունների եւ քաղաքացիների, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիների բաց բանալիների սերտիֆիկատների գործողության կասեցման եւ վերսկսման, հետկանչման, պահպանության գործառույթներ։

3.2.2.3. Ընդհանուր գործընթացների իրականացման համար օգտագործվում են Բելառուսի Հանրապետության պետական իշխանության մարմինների հետեւյալ տեղեկատվական համակարգերը՝

1) արտաքին առեւտրի վիճակագրության տեղեկատվական-վերլուծական համակարգը.

2) Բելառուսի Հանրապետության դեղամիջոցների պետական ռեեստրը, որն իր մեջ ներառում է ըստ բժշկական կիրառման հրահանգների տեղեկատվական տվյալների բազան.

3) որակի պահանջներին չհամապատասխանող դեղամիջոցների, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածքներում հայտնաբերված կոնտրաֆակտ եւ կեղծված դեղամիջոցների տվյալների տեղեկատվական բազան.

4) դեղամիջոցների նկատմամբ հայտնաբերված կողմնակի

ռեակցիաների տվյալների տեղեկատվական բազան, ներառյալ՝ դեղամիջոցների անարդյունավետության մասին հաղորդագրությունները.

5) Բելառուսի Հանրապետության բժշկական տեխնիկայի եւ բժշկական նշանակության արտադրատեսակների պետական ռեեստրը.

6) բժշկական արտադրատեսակների անվտանգության, որակի եւ արդյունավետության դիտանցման տվյալների տեղեկատվական բազան։

3.2.3. Ղազախստանի Հանրապետության ազգային հատվածի ընթացիկ վիճակի բնութագիրը

3.2.3.1. Ղազախստանի Հանրապետության ազգային հատվածը ֆունկցիոնալ առումով ներառում է հետեւյալ բաղադրիչները՝

1) Ղազախստանի Հանրապետության ազգային անցուղին.

2) Ղազախստանի Հանրապետության ազգային անցուղու պորտալը.

3) Ղազախստանի Հանրապետության ՎԵԿ-ը։

3.2.3.2. Ղազախստանի Հանրապետության ազգային անցուղին ապահովում է Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի տեղեկատվական փոխգործակցությունը եւ դրանց միացումը ԱՓԱԻՏՀ-ի ինտեգրացիոն հարթակին՝ դրանով իսկ իրականացնելով միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգի եւ Ղազախստանի Հանրապետության ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու գործառույթները։

3.2.3.3. Ղազախստանի Հանրապետության ազգային անցուղու պորտալը նախատեսված է ինտեգրված համակարգի շրջանակներում միջպետական տեղեկատվական փոխգործակցության մասնակիցներին հասցեագրված հրապարակային տեղեկատվության հասանելիության ապահովման համար։

3.2.3.4. Ղազախստանի Հանրապետության ՎԵԿ գործառույթներն իրականացնում է հանրապետական պետական ձեռնարկությունը՝ Ղազախստանի

Հանրապետության ներդրումների եւ զարգացման նախարարության կապի, տեղեկատվայնացման եւ տեղեկատվության կոմիտեի՝ «Պետական տեխնիկական ծառայություն» տնտեսավարման իրավունքով։

3.2.3.5. Ղազախստանի Հանրապետության ազգային անցուղին ինտեգրված է Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների հետեւյալ տեղեկատվական համակարգերով՝

1) Ղազախստանի Հանրապետության մաքսային մարմինների անցուղի.

2) Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի ինտեգրացիոն անիվ.

3) «Փոխադրումների անվտանգության դինամիկայի դիտանցման եւ տվյալների տրանսպորտային բազա» տեղեկատվական-վերլուծական համակարգ.

4) Ագրոարդյունաբերական «E-agriculture» համակարգի ճյուղերի կառավարման միասնական ավտոմատացված համակարգ.

5) «E-լիցենզավորում» տվյալների պետական բազա։

3.2.4. Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածի ընթացիկ վիճակի բնութագիրը

3.2.4.1. Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածը ֆունկցիոնալ առումով ներառում է հետեւյալ բաղադրիչները՝

1) միջգերատեսչական էլեկտրոնային փոխգործակցության համակարգը.

2) Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղին.

3) Ռուսաստանի Դաշնության ԵՎԿ ծառայությունները.

Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածի կազմի մեջ կարող են ներառվել այլ բաղադիչներ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշումներին եւ (կամ) կարգադրություններին համապատասխան։

3.2.4.2. Միջգերատեսչական էլեկտրոնային փոխգործակցության համակարգն ապահովում է գործադիր իշխանության դաշնային մարմինների տեղեկատվական համակարգերի, պետական արտաբյուջետային հիմնադրամների, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ մունիցիպալ հաստատությունների, բազմաֆունկցիոնալ կենտրոնների, էլեկտրոնային եղանակով պետական եւ մունիցիպալ ծառայությունների մատուցման մեջ ներգրավված այլ մարմինների եւ կազմակերպությունների միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակումը։

3.2.4.3. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը ԱՓԱԻՏՀ-ին կից հատվածների հետ տեղեկատվական փոխգործակցության ապահովման համար միացված է Ռուսաստանի Դաշնության ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղուն։

3.2.4.4. Ռուսաստանի Դաշնության ՎԵԿ-ի գործառույթներն էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ժամանակ իրականացնում է Ռուսաստանի Դաշնության կապի եւ զանգվածային հաղորդակցության նախարարությունը։

3.2.4.5. Ընդհանուր գործընթացների իրականացման համար օգտագործվում են Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության մարմինների հետեւյալ տեղեկատվական համակարգերը՝

1) Ռուսաստանի հավատարմագրման դաշնային պետական տեղեկատվական համակարգը.

2) Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի կառավարման հարցերով դաշնային գործակալության գերատեսչական տեղեկատվական-վերլուծական ավտոմատացված համակարգի՝ «Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցակետերի եւ հատման վայրերի տվյալների բազա» ենթահամակարգը.

3) մաքսային մարմինների միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգը.

4) անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության հարցերով «Մերկուրի» դաշնային ծառայության տեղեկատվական համակարգը.

5) անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության հարցերով «Արգուս» դաշնային ծառայության տեղեկատվական համակարգը.

6) «Արդյունաբերական սեփականության դաշնային ինստիտուտ» դաշնային պետական բյուջետային հիմնարկի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության տեղեկատվական համակարգը.

7) Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմիններում սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման տեղեկատվական-վերլուծական համակարգը.

8) տրանսպորտի ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության միասնական տեղեկատվական-վերլուծական համակարգի՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի հսկողության համակարգ-Տրանսպորտային հսկողություն» ծրագրային համակարգը:

3.3. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ընթացիկ վիճակի բնութագիրը

3.3.1. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածը ներառում է հետեւյալ բաղադրիչները՝

1) ԱՓԱԻՏՀ-ի ֆունկցիոնալ ենթահամակարգերը՝

Հանձնաժողովի տեղեկատվական պորտալը.

տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը.

վիճակագրության ենթահամակարգը.

նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը.

ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը.

2) ԱՓԱԻՏՀ-ի ապահովող ենթահամակարգերը՝

ինտեգրացիոն հարթակը.

նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգը.

տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը. դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը.

3) Հանձնաժողովի ՎԵԿ ծառայությունները՝ ինտեգրված համակարգի ՎԵԿ ծառայության կազմում:

3.3.2. ԱՓԱԻՏՀ-ի ինտեգրացիոն հարթակը նախատեսված է ընդհանուր գործընթացներ իրագործելիս ըստ տարածքների տեղաբաշխված պետական տեղեկատվական ռեսուրսների եւ արտաքին ու փոխադարձ առեւտուրը կարգավորող անդամ պետությունների պետական իշխանության մարմինների տեղեկատվական համակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակման աջակցության, ինչպես նաեւ ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին այդպիսի տեղեկատվական համակարգերի միջոցներով հասանելիության ապահովման համար:

3.3.2.1. Ինտեգրացիոն հարթակը ներառում է հետեւյալ բաղադրիչները՝

1) Հանձնաժողովի հատվածի ինտեգրացիոն անցուղին ապահովում է Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակումը՝ ինտեգրացիոն հարթակին Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի միացման ճանապարհով.

2) ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիներն ապահովում են Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակումը՝ ինտեգրացիոն հարթակին

լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միացման ճանապարհով:

3.3.2.2. Ինտեգրացիոն անցուղիներն իրար միացված են տվյալների փոխանցման պաշտպանված կապուղիներով:

3.3.2.3. Ինտեգրացիոն անցուղիներն իրականացնում են հետեւյալ գործառույթները.

1) ինտեգրացիոն հարթակի եւ Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի ու լիազորված մարմինների միջեւ էլեկտրոնային հաղորդագրությունների երթուղումը.

2) հաղորդագրությունների երաշխավորված առաքումն այլ հատվածների ինտեգրացիոն անցուղիների հետ փոխգործակցության ժամանակ.

3)ինտեգրացիոն անցուղիների կողմից կատարվող գործառնությունների գրանցամատյանների վարումը՝ տեղեկատվական փոխգործակցությունների հսկողության ապահովման, առաջացող արտակարգ իրավիճակների մշակման եւ իրականացվող փոխգործակցությունների վերլուծության հնարավորության համար.

4) Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի եւ միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգերի միացումը՝ էլեկտրոնային հաղորդագրությունների հաղորդակարգերի եւ ձեւաչափերի կերպափոխման ապահովմամբ (անհրաժեշտության դեպքում).

5) այլ հատվածների ինտեգրացիոն անցուղիների եւ ՎԵԿ ծառայությունների հետ տեղեկատվական փոխգործակցությունը:

3.3.2.3. Հանձնաժողովի տեղեկատվական պորտալը նախատեսված է Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսներին կենտրոնացված հասանելիության ապահովման, ինչպես նաեւ ԱՓԱԻՏՀ-ում տեղեկատվական փոխգործակցության իրականացման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքի կազմավորման, վարման եւ

հրապարակման համար։

3.3.2.4. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգն իր մեջ ներառում է անդամ պետությունների արտաքին ու փոխադարձ առեւտրի, սոցիալ-տնտեսական զարգացման, անդամ պետությունների ներքին ապրանքային շուկայի հետ կապված զարգացման գործընթացների դինամիկայի վերաբերյալ, ինչպես նաեւ աշխարհի երկրների արտաքին եւ փոխադարձ առեւտրի ու համաշխարհային շուկաների իրավիճակի դինամիկայի վերաբերյալ տեղեկատվություն եւ նախատեսված է Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսներին Հանձնաժողովի աշխատակիցների հասանելիությունը web-միջերեսի օգտագործմամբ ապահովելու համար՝ վերլուծական հաշվետվական ձեւերի եւ չկանոնակարգված հարցումների ձեւավորման նպատակով, ինչպես նաեւ տարբեր աղբյուրներից ներբեռնվող, այդ թվում՝ ինտեգրված համակարգի վիճակագրության ենթահամակարգի շրջանակներում ձեւավորվող տվյալների վերլուծական մշակման համար։

3.3.2.5 Վիճակագրության ենթահամակարգը նախատեսված է վիճակագրության ոլորտի լիազորված մարմիններից ստացվող տնտեսական, մասնաճյուղային, սոցիալ-ժողովրդագրական եւ ֆինանսական ու ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության տվյալների հավաքման, պահման, մշակման եւ կուտակման համար՝ Հանձնաժողովի պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ դրա տարածման նպատակներով։

3.3.2.6. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի որոշումների, այլ նախագծերի, ծրագրերի եւ միջոցառումների պլանների իրականացման հաշվառման եւ դիտանցման համար։

3.3.2.7. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը նախատեսված է ռիսկերի ոլորտների նույնականացման, վերլուծության եւ մշակման գործընթացների ավտոմատացման, արտաքին եւ փոխադարձ առեւտրի իրականացման ժամանակ ռիսկերի հնարավոր ոլորտների որոշման համար՝

Հանձնաժողովի կողմից կայացվող որոշումների տեղեկատվական-վերլուծական աջակցությունն ապահովելու նպատակով։

3.3.2.8. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգը նախատեսված է ընդհանուր գործընթացների իրականացման ժամանակ օգտագործվող՝ նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, դասակարգիչներ եւ այլ տեղեկատվություն պարունակող տվյալների բազաների վարումն ապահովելու, ԱՓԱԻՏՀ-ի միջոցներով անդամ պետություններին նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաեւ Հանձնաժողովի տեղեկատվական պորտալի միջոցներով շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմինների միջավայրում այդպիսի տեղեկատվության տարածման համար։

3.3.2.9. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում մշակման եւ պահպանման, ինչպես նաեւ ազգային հատվածների հետ փոխգործակցության ժամանակ կապուղիներով փոխանցելիս տվյալների գաղտնիության, ամբողջականության եւ հասանելիության ապահովման համար։

3.3.2.10. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ֆունկցիոնալ եւ ապահովող ենթահամակարգերի վիճակի եւ աշխատունակության մասին տեղեկատվություն ստանալու, ինչպես նաեւ ԱՓԱԻՏՀ-ի շահագործման գործընթացում կառավարման խնդիրների ավտոմատացման համար։

3.3.2.11. ԱՓԱԻՏՀ-ի ՎԵԿ ծառայության կազմում Հանձնաժողովի ՎԵԿ ծառայությունները նախատեսված են անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ էլեկտրոնային փաստաթղթերի անդրսահմանային փոխանակման ժամանակ իրավաբանական նշանակության ապահովման համար։

3.4. Ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացման հիմնական ուղղությունները

3.4.1. ԱՓԱԻՏՀ-ի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացման եւ ինտեգրված համակարգի ստեղծման նախադրյալներն են՝

1) Միության գործունեության ուղղությունների ցանկի ընդլայնումը, որը պայմանավորված է անդամ պետությունների միջեւ տնտեսական ինտեգրման խորացմամբ, եւ որպես հետեւանք՝ ինտեգրված համակարգի խնդիրների ընդլայնումը.

2) Հանձնաժողովի իրավասությունների ընդլայնումը՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթին համապատասխան (պայմանագրի թիվ 1 հավելված), այդ թվում՝ սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման, տեխնիկական կարգավորման ոլորտում.

3) թեթեւ արդյունաբերության արտադրանքի առանձին տեսակների դրոշմավորման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը՝ անդամ պետությունների տարածքներում ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողության եւ ապրանքների ներմուծման ու արտադրման օրինականության ապահովման նպատակներով.

4) անդամ պետությունների տարածքներում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների գրանցման եւ նույնականացման խնդիրների լուծման անհրաժեշտությունը.

5) Միության Դատարանի ստեղծումը, որի գործունեությունը պետք է ապահովվի ինտեգրված համակարգով՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության համապատասխան (պայմանագրի թիվ 3 հավելված).

6) անդամ պետությունների այն տեղեկատվական ռեսուրսների քանակի ավելացումը, որոնք, Միության իրավունքին համապատասխան, ինտեգրված համակարգի միջոցներով ինտեգրման ապահովում են պահանջում.

7) Միության շրջանակներում նորմատիվ-տեղեկատվական, նորմատիվ-

իրավական, վիճակագրական եւ վերլուծական տեղեկատվության պահանջվածության բարձրացումը եւ որպես հետեւանք՝ ինտեգրված համակարգի ենթահամակարգերով պահվող եւ մշակվող տեղեկատվության կազմի եւ ծավալի ընդլայնումը.

8) ընդհանուր գործընթացների իրականացման վերաբերյալ տիպային որոշումների ստեղծման անհրաժեշտությունը՝ նոր ընդհանուր գործընթացների իրականացման օպերատիվության բարձրացման, ինչպես նաեւ ինտեգրված համակարգին տեղեկատվական փոխգործակցության նոր մասնակիցների միացման ժամանակ ծախսերի կրճատման համար։

3.4.2. Ինտեգրված համակարգը պետք է ապահովի ընդհանուր գործընթացների իրականացումը։ Ընդհանուր գործընթացների ցանկը սահմանվում է «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 9-րդ կետին համապատասխան (պայմանագրի թիվ 3 հավելված)։

3.4.3. Ընդհանուր գործընթացների իրականացման ժամանակ օգտագործվող տեղեկությունների կազմը ձեւավորվում է լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերում օգտագործվող տեղեկությունների հիման վրա եւ սահմանվում է պայմանագրով սահմանված կարգով։

3.4.4. Ընդհանուր գործընթացների նախագծման եւ իրականացման աշխատանքները կատարվում են փուլերով՝ ինտեգրված համակարգի զարգացմանը զուգընթաց, եւ պետք է ուղեկցվեն տվյալների, փաստաթղթերի եւ գործընթացների միասնական մոդելների ստեղծմամբ՝ ԱՓԱԻՏՀ-ի ստեղծման աշխատանքների շրջանակներում մշակված ընդհանուր գործընթացների նախագծման, նկարագրության եւ աջակցման մեթոդական հանձնարարականներին եւ տեխնիկական պահանջներին համապատասխան։

3.4.5. Ընդհանուր գործընթացների նախագծման կատարված աշխատանքների արդյունքներն օգտագործվում են որպես հիմք՝

1) ընդհանուր գործընթացների իրականացման համար՝ ինտեգրված համակարգի միջոցների օգտագործմամբ.

2) կոնկրետ ընդհանուր գործընթացում ներգրավված լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի մշակման, լրամշակման եւ կարգավորման համար.

3) ազգային հատվածների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի մշակման, լրամշակման եւ կարգավորման համար:

3.4.6. Ընդհանուր գործընթացի իրականացման պահանջների ձեւավորման համար պատասխանատվություն է կրում նախագծվող ընդհանուր գործընթացի ֆունկցիոնալ պատվիրատու հանդիսացող Հանձնաժողովի դեպարտամենտը:

3.4.7. Ըստ կատարված աշխատանքների արդյունքների՝ սահմանվում են առարկայորեն կողմնորոշված գործառույթներ, որոնք ընդհանուր գործընթացի իրականացման շրջանակներում պետք է իրականացվեն Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում եւ ազգային հատվածներում:

Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, ազգային հատվածների եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի լրամշակումը՝ հաշվի առնելով նոր ընդհանուր գործընթացը կանոնակարգող փաստաթղթերը:

4. Համակարգին ներկայացվող պահանջները

4.1. Ընդհանուր առմամբ համակարգին ներկայացվող պահանջները

4.1.1. Ընդհանուր պահանջներ

4.1.1.1. Ինտեգրված համակարգ ձեւավորելիս անդամ պետությունները ելնում են հետեւյալ սկզբունքներից՝

1) շահերի ընդհանրություն եւ փոխշահավետություն.

2) ինտեգրված համակարգի համար տեղեկատվության նախապատրաստման միասնական մեթոդաբանական մոտեցումների կիրառում՝ տվյալների ընդհանուր մոդելների հիման վրա.

3) տեղեկատվության մատչելիություն, հավաստիություն եւ ամբողջականություն.

4) տեղեկատվության ժամանակին տրամադրում.

5) ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների մակարդակին համապատասխանություն.

6) լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերին ինտեգրում.

7) ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին անդամ պետությունների հավասար հասանելիության ապահովում.

8) ներկայացված տեղեկությունների՝ միայն հայտարարված նպատակներով օգտագործում՝ առանց այն տրամադրած անդամ պետությանը վնասելու.

9) օգտվողների տարբեր կատեգորիաների համար ինտեգրված համակարգի բաց լինելը՝ հաշվի առնելով հայտարարված նպատակներին համապատասխան տեղեկատվության օգտագործմանը ներկայացվող պահանջի պահպանումը.

10) լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության անհատույց հիմունքներով իրականացում՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ։

4.1.1.2. Ինտեգրված համակարգի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման ժամանակ պետք է պահպանվեն հետեւյալ պահանջները՝

1) ինտեգրված համակարգը չպետք է փոխարինի լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերին.

2) ինտեգրված համակարգն անդամ պետություններից չպետք է պահանջի լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի պաշտպանության ապահովման միջոցներում փոփոխությունների կատարում.

3) ինտեգրված համակարգում պետք է կանոնակարգված հասանելիություն կազմակերպվի ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին.

4) ինտեգրված համակարգի կառուցվածքը պետք է արտաքին տեղեկատվական համակարգերի հետ նախատեսի տեղեկատվական փոխգործակցության հնարավորություն.

5) ինտեգրված համակարգը պետք է հնարավորություն տա Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված եւ ստորագրությամբ կամ ստորագրությամբ եւ կնիքով վավերացված՝ թղթային կրիչով համանման փաստաթղթերն ըստ իրավաբանական ուժի հավասարազոր ճանաչվող էլեկտրոնային փաստաթղթերով փոխանակելու.

4.1.1.3. Ինտեգրված համակարգի ստեղծման ժամանակ պետք է հաշվի առնվեն ԱՓԱԻՏՀ-ի ստեղծման, գործառման ապահովման եւ զարգացման աշխատանքների ընթացքում ստացված արդյունքները։

4.1.1.4. ԱՓԱԻՏՀ-ի ենթահամակարգերը պետք է ներառվեն ինտեգրված համակարգի կառուցվածքի մեջ, ընդ որում, պետք է նախատեսվի այդ ենթահամակարգերի զարգացումը՝ դրանց ֆունկցիոնալ հնարավորությունների եւ պահվող ու մշակվող տվյալների ծավալի, տեղեկատվական փոխգործակցության նոր մասնակիցների ներգրավման մասով։ Առանձին խնդիրների լուծման համար թույլատրվում է ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգերի ստեղծում։

4.1.1.5. Ինտեգրված համակարգի ստեղծման ժամանակ Հանձնաժողովը եւ անդամ պետությունները պետք է առաջնորդվեն միջազգային եւ միջպետական ստանդարտներով եւ հանձնարարականներով։

4.1.2. Համակարգի կառուցվածքին եւ գործառմանը ներկայացվող պահանջները

4.1.2.1. Ենթահամակարգերի ցանկը, դրանց նշանակությունը եւ հիմնական բնութագրերը

4.1.2.1.1. Ինտեգրված համակարգը պետք է իրենից ներկայացնի տվյալների փոխանցման պաշտպանված կապուղիներով միավորվող՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի եւ ազգային հատվածների ամբողջություն։

4.1.2.1.2. Ինտեգրված համակարգի հատվածների միջեւ փոխգործակցությունը պետք է ապահովվի միասնական ինտեգրացիոն հարթակի հաշվին, որն իր մեջ ներառում է ինտեգրված համակարգի յուրաքանչյուր հատվածի կազմի մեջ մտնող ինտեգրացիոն անցուղիները։

4.1.2.1.3. Ինտերգված համակարգը պետք է ներառի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում իրագործվող ֆունկցիոնալ եւ ապահովող ենթահամակարգերը։

4.1.2.1.4. Ինտեգրված համակարգի ֆունկցիոնալ ենթահամակարգերը տարբեր կատեգորիաներից օգտվողներին (պաշտոնատար անձանց եւ Միության մարմինների աշխատակիցներին, անդամ պետությունների պետական իշխանության մարմինների աշխատակիցներին, տնտեսավարող սուբյեկտներին, ֆիզիկական անձանց եւ այլ շահագրգիռ անձանց) պետք է տրամադրեն ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին կանոնակարգված հասանելիություն, ինչպես նաեւ ապահովեն ընդհանուր գործընթացների իրագործումը։

4.1.2.1.5. Ինտեգրված համակարգի ապահովող ենթահամակարգերը նախատեսված են ինտեգրված համակարգի եւ արտաքին տեղեկատվական համակարգերի միջեւ տեղեկատվական փոխգործակցության ապահովման,

տեղեկատվության պաշտպանության ապահովման, էլեկտրոնային տեսքով տեղեկատվության փաստաթղթավորման ենթակառուցվածքի իրագործման, համակարգի գործունեության եւ ընդհանուր գործընթացների իրագործման, ինտեգրված համակարգի գործունեության տեխնիկական ապահովման նպատակով անհրաժեշտ նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների վարման համար:

4.1.2.1.6. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածը պետք է ներառի հետեւյալ բաղադրիչները՝

1) ինտեգրված համակարգի ֆունկցիոնալ ենթահամակարգեր՝

Միության տեղեկատվական պորտալը,

տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը,

վիճակագրության ենթահամակարգը,

նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը,

ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը,

դատական գործավարության ենթահամակարգը,

մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը,

մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը,

տեխնիկական կարգավորման ենթահամակարգը,

ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը,

արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը.

2) ինտեգրված համակարգի ապահովող ենթահամակարգեր՝

ինտեգրացիոն հարթակը,

նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը,

տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը,

դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը,

Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը.

3) ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը.

4) Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը:

4.1.2.1.7. Ֆունկցիոնալ տեսանկյունից ազգային հատվածները պետք է ներառեն հետեւյալ բաղադրիչները՝

1) միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը. պետք է ապահովի լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միացումն ինտեգրացիոն հարթակին, ինչպես նաեւ ազգային հատվածի շրջանակներում լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրացումը.

2) ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգը. պետք է կատարի գործառույթների ամբողջություն, որոնք ապահովում են էլեկտրոնային փաստաթղթերի անդրսահմանային փոխանակման ժամանակ վստահության երաշխիքներ, այդ թվում՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված եւ ստորագրությամբ կամ ստորագրությամբ եւ կնիքով վավերացված՝ թղթային կրիչով համանման փաստաթղթերին իրավաբանական ուժով հավասարազոր ճանաչվող էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ապահովման համար: Ազգային հատվածի ՎԵԿ-ի ծառայությունների ցանկը սահմանվում է ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում՝ սույն տեխնիկական առաջադրանքի 4.2.19.2.2 կետին համապատասխան.

3) դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը. պետք է ապահովի ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու եւ սույն կետի 2-րդ ենթակետում նշված ենթահամակարգի գործունեության վերահսկողությունը.

4) ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգը. պետք է ապահովի ազգային հատվածում տվյալների մշակման եւ պահպանման, ինչպես նաեւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի եւ այլ անդամ պետությունների ազգային հատվածների հետ փոխգործակցության ժամանակ կապուղիներով դրանց փոխանցման ընթացքում գաղտնիությունը, ամբողջականությունը եւ հասանելիությունը: Տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության, հասանելիության եւ պահպանվածության համար ազգային հատվածում ընդունվում եւ իրագործվում է տեղեկատվության պաշտպանության իրավական, կազմակերպչական եւ տեխնիկական միջոցների համալիր՝ համապատասխան անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

4.1.2.1.8. Ինտեգված համակարգի ընդհանուր սխեման ներկայացված է նկարում:



Նկարում օգտագործվող հապավումներն ունեն հետեւյալ իմաստը՝

ԼՄ ՏՀ՝ լիազորված մարմնի տեղեկատվական համակարգ.

ՄՏՓՀ՝ միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգ.

ԱՀՊԵ՝ ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգ.

ԴԿԵ՝ դիտանցման եւ կառավարման ենթահամակարգ.

ՎԵԿ՝ վստահված երրորդ կողմ.

ԻԱ՝ ինտեգրացիոն անցուղի.

ԱԱ՝ արտաքին համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգ (արտաքին անցուղի).

ՆՏՏ՝ նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների,

ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգ.

ՏԱԵ՝ տեղեկատվական անվտանգության ենթահամակարգ.

ԵՏՀ ՀԿ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հավաստագրման կենտրոն.

ՎԵԿ ՀԿ՝ վստահված երրորդ կողմի ծառայության հավաստագրման կենտրոն:

Նկար: Ինտեգրված համակարգի ընդհանուր սխեմա

4.1.2.1.9. Ազգային հատվածների տարրերի կազմը կարող է ճշգրտվել՝ հաշվի առնելով անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերը:

4.1.2.1.10. Ֆունկցիոնալ առումով ազգային սեգմենտում չներառված լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերը պետք է ապահովեն անդամ պետության տարածքում ընդհանուր գործընթացների իրագործումը: Այն դեպքում, երբ ընդհանուր գործընթացների համար անհրաժեշտ գործառությունը չի ապահովվում լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերով, եւ լրամշակումների ծավալը բավականին մեծ է, կարող են օգտագործվել Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շրջանակներում իրագործվող եւ ինտերգված համակարգի ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգով տրամադրվող տիպային որոշումները:

4.1.2.1.11. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերի ցանկը կարող է ճշգրտվել սույն տեխնիկական առաջադրանքի իրագործման փուլում:

4.1.2.2. Միության տեղեկատվական պորտալը

4.1.2.2.1. Միության տեղեկատվական պորտալը նախատեսված է Միության, դրա մարմինների եւ դրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվությանը, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ ինտեգրված համակարգի միջոցներով ձեւավորվող Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին, այդ թվում՝ նորմատիվ-

տեղեկատվական, նորմատիվ-իրավական, վիճակագրական եւ վերլուծական տեղեկատվությանը՝ օգտվողների տարբեր կատեգորիաների կանոնակարգված հասանելիությունն ապահովելու համար:

4.1.2.2.2. Միության տեղեկատվական պորտալը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում իրագործված՝ Հանձնաժողովի տեղեկատվական պորտալի ինտեգրման, «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի՝ Միության պաշտոնական կայքի (հետագայում՝ Միության պաշտոնական կայք) եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքի (հետագայում՝ Հանձնաժողովի պաշտոնական կայք) հիման վրա, դրանց ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) Միության մարմինների գործունեության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացումը.

2) մեքենաընթեռնելի ձեւաչափերով Միության բաց տվյալներին շահագրգիռ անձանց կանոնակարգված հասանելիության տրամադրումը.

3) Միության մարմինների ակտուալ եւ արխիվային ակտերի միասնական պահոցի վարումը եւ շահագրգիռ անձանց դրան հասանելիության տրամադրումը.

4) շահագրգիռ անձանց միջպետական էլեկտրոնային ծառայություններին հասանելիության տրամադրումը.

5) անդամ պետությունների գնումների վերաբերյալ ընդհանրացված տեղեկատվությանը կանոնակարգված հասանելիության տրամադրումը, այդ թվում՝ անդամ պետությունների առեւտրային հարթակներից տվյալների համախմբումը.

6) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (հետագայում՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ),

Եվրասիական տնտեսական միության Միասնական մասքային սակագնին (հետագայում՝ ԵԱՏՄ ՄՄՍ) եւ մեքենաընթեռնելի ձեւաչափերով դրանց կից օժանդակ (տեղեկատու) տեղեկատվական նյութերին հասանելիության տրամադրումը:

4.1.2.3. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը

4.1.2.3.1. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը նախատեսված է տարբեր աղբյուրներից տվյալների հավաքագրման եւ դրանց վերլուծական մշակման, բազային ցուցանիշների մոդելավորման, կանխատեսման եւ գնահատման համար, որոնք բնութագրում են Միության զարգացման ուղղությունները եւ անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղենիշերի իրագործումը կոնսոլիդացված տեղեկատվության, վերլուծական հաշվետվական ձեւերի եւ հրապարակումների ձեւավորման եւ վերլուծության հիման վրա:

4.1.2.3.2. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա գործառնական հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) տվյալների վերլուծական ցուցափեղկերի կազմի ընդլայնումը, տվյալների մշակման լրացուցիչ ալգորիթմների իրագործումը՝ տվյալների վերլուծական ցուցափեղկերի, հարցումների, վերլուծական հաշվետվական ձեւերի եւ հրապարակումների ձեւավորման, ինչպես նաեւ տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելների կառուցման ժամանակ.

2) տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի միջոցներով իրագործվող վերլուծական խնդիրների եւ տնտեսագիտական ոլորտում գործընթացների փոփոխությունների վերլուծության եւ միտումների գնահատման, դիտանցման հետ կապված խնդիրների կազմի ընդլայնումը.

3) նոր տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելների կառուցումը՝ վերլուծական խնդիրների իրագործման նպատակների եւ կանխատեսումների կառուցման համար.

4) արտաքին աղբյուրներից տվյալների ավտոմատացված հավաքագրման ապահովման եւ տվյալների բաց աղբյուրների սեմանտիկ վերլուծության անցկացման հնարավորությունների մասով տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնումը:

4.1.2.4. Վիճակագրության ենթահամակարգը

4.1.2.4.1. Վիճակագրության ենթահամակարգը նախատեսված է վիճակագրության ոլորտում լիազորված մարմիններից վիճակագրական տվյալների հավաքագրման, Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման նպատակով դրանց պահպանման եւ մշակման համար:

4.1.2.4.2 Վիճակագրության ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) լիազորված մարմինների կողմից տարբեր տեխնոլոգիական ձեւաչափերով եւ կառուցվածքներով վիճակագրական տվյալների ներկայացման ժամանակ տվյալների ավտոմատացված մշակման մեխանիզմի իրագործումը.

2) վիճակագրության ենթահամակարգի մետատվյալների վարման ժամանակ օգտվողների զգուշացումների եւ ծանուցումների մեխանիզմի իրագործումը.

3) վիճակագրության ենթահամակարգի մետատվյալների զտման, որոնման եւ ներկայացման մեխանիզմների կատարելագործումը.

4) վիճակագրության ենթահամակարգի գործիքակազմի եւ օգտվողի միջերեսի կատարելագործումը եւ զարգացումը.

5) Միության կազմ նոր անդամ պետությունների ընդունման հետ կապված վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման եւ ներկայացման մեխանիզմների ընդլայնումը.

6) ինտեգրված համակարգի այլ ենթահամակարգերի, ինչպես նաեւ ինտեգրված համակարգի նկատմամբ արտաքին տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմների ընդլայնումը եւ զարգացումը:

4.1.2.5. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը

4.1.2.5.1. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի որոշումների, այլ նախագծերի, ծրագրերի եւ միջոցառումների պլանների հաշվառման եւ իրականացման դիտանցման համար:

4.1.2.5.2. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) միջոցառումների պլանների իրագործման ժամանակ կատարողական կարգապահության վերահսկողության հնարավորությունների զարգացումը.

2) միջոցառումների պլաններն իրագործելիս վերլուծության հնարավորությունների զարգացումը.

3) նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգերի միջոցներով ավտոմատացվող նախագծերի, ծրագրերի եւ միջոցառումների պլանների տեսակների կազմի ընդլայնման մեխանիզմի կատարելագործումը.

4) Հանձնաժողովի այլ տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցության իրագործման հնարավորությունների զարգացումը.

5) օգտվողների միջերեսների եւ հաշվետվական ձեւերի կարգաբերման

հնարավորությունների ընդլայնումը՝ նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգի ներկառուցված միջոցների օգտագործմամբ:

4.1.2.6. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը

4.1.2.6.1. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը նախատեսված է Միության գործունեության եւ զարգացման վրա հնարավոր ազդեցություն ունեցող արտաքին գործոնների վրա ռեակցիաների վերահսկման եւ ապահովման, Միության ռիսկերի արտաքին եւ միջգերատեսչական ոլորտների դիտանցման, Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության ռիսկերի գնահատման եւ Միության գործունեության եւ զարգացման վրա Հանձնաժողովի որոշումների չնախատեսված ազդեցության ռիսկերի նվազեցման մասով ռիսկերի ոլորտների նույնականացման, վերլուծության եւ մշակման գործընթացների ավտոմատացման համար:

4.1.2.6.2. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) այն աղբյուրների ցանկի ընդլայնումը, որոնց հիման վրա իրականացվում է ռիսկերի առկա եւ հնարավոր ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրում եւ կուտակում.

2) ռիսկերի ոլորտների նույնականացման, վերլուծության եւ դիտանցման գործիքների կատարելագործումը:

4.1.2.7. Դատական գործավարության ենթահամակարգը

4.1.2.7.1. Դատական գործավարության ենթահամակարգը նախատեսված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի իրագործման հարցերով ծագող վեճերի քննման, ինչպես նաեւ Միության դատարանի իրավասությանը վերաբերող այլ վեճերի քննման հարցերով Միության դատարանի գործունեության ավտոմատացված աջակցության համար:

4.1.2.7.2. Դատական գործավարության ենթահամակարգը ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.7.3. Միության դատարանի կողմից վեճերի քննության ժամանակ դատավարության արդյունավետ իրականացման համար ինտեգրված համակարգի կազմում անհրաժեշտ է ստեղծել առանձին ենթահամակարգ, որը կապահովի ստացված դիմումների եւ միջնորդությունների հաշվառումը, վեճերի քննության ընթացքում ի հայտ եկող փաստաթղթերի եւ նյութերի հաշվառումն ու պահպանումը, ինչպես նաեւ կապահովի վեճերի քննության ժամկետների վերահսկողության, Միության դատարանի ակտերի պատրաստման եւ պահպանման գործառույթների աջակցությունը:

4.1.2.8. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը

4.1.2.8.1. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը նախատեսված է հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման հետաքննությունների անցկացման գործընթացի ավտոմատացված աջակցության եւ այդ գործընթացի շրջանակներում իրականացվող Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառության ավտոմատացման համար:

4.1.2.8.2. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.8.3. Ինտեգրված համակարգի կազմում հետաքննությունների անցկացման գործընթացի ավտոմատացված աջակցության համար անհրաժեշտ է ստեղծել առանձին ենթահամակարգ, որը կապահովի՝

1) Հանձնաժողով մուտք եղած եւ ապրանքների ներմուծման ժամանակ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցների կիրառման նպատակով հետաքննությունների անցկացման արդյունքում ի հայտ եկող փաստաթղթերի եւ նյութերի հաշվառումը եւ պահպանումը.

2) հետաքննությունների անցկացման ժամանակ շահագրգիռ անձանց հետ Հանձնաժողովի տեղեկատվական փոխգործակցության հնարավորությունը.

3) հետաքննությունների արդյունքների վերաբերյալ շահագրգիռ անձանց ծանուցումը:

4.1.2.9. Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը

4.1.2.9.1. Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը նախատեսված է էլեկտրոնային տեսքով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի, ԵԱՏՄ ՄՄՍ-ի եւ դրանց կից օժանդակ տեղեկատվական (տեղեկատու) նյութերի, ինչպես նաեւ մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների ցանկի ստեղծման, վարման եւ օգտագործման գործընթացների ավտոմատացված աջակցության համար:

4.1.2.9.2. Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված՝ ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.9.3. Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը պետք է ստեղծվի տեղեկատվական-ծրագրային լուծումների հիման վրա, որոնք մշակվել են ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում «Մաքսային միության եւ Մաքսային միության միասնական մաքսային սակագնի արտաքին տնտեսական գործունեության, դրանց միջազգային հիմունքների եւ կից օժանդակ տեղեկատվական (տեղեկատու) նյութերի էլեկտրոնային միասնական ապրանքային անվանացանկի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացի իրագործման ժամանակ:

4.1.2.9.4. Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգի ստեղծումը պետք է ապահովի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի, ԵԱՏՄ ՄՄՍ-ի եւ կից օժանդակ տեղեկատվական (տեղեկատու) նյութերի, ինչպես նաեւ

մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների ցանկի վերլուծության եւ վարման մասով խնդիրների իրագործումը՝ հաշվի առնելով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի կոնկրետ ապրանքային խմբի (ենթախմբի, դիրքի կամ ենթադիրքի) հետ կապված ոչ սակագնային կարգավորման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ փաստաթղթերի նախագծերի ձեւավորումը, Միության իրավունքի մաս կազմող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի հետ կապված ակտերում, ինչպես նաեւ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ի միջազգային հիմունքների էլեկտրոնային տեսքով վարման եւ օգտագործման մասով փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերլուծությունը եւ հայտնաբերումը:

4.1.2.10. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգերը

4.1.2.10.1. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգը նախատեսված է տեխնիկական կարգավորման ոլորտում գործընթացների տեղեկատվական աջակցության ապահովման համար, ներառյալ՝ Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) մշակումը, Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) իրագործման համար անհրաժեշտ միջպետական ստանդարտների ցանկերի ձեւավորումը եւ արդիականացումը, Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) իրագործման համար անհրաժեշտ միջպետական ստանդարտների մշակման ծրագրերի ձեւավորումը եւ արդիականացումը, այն արտադրանքի ցանկի վարումը, որի նկատմամբ Միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ, սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների, համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ստացված փաստաթղթերի ռեեստրների վարումը, ինչպես նաեւ տեխնիկական կարգավորման ոլորտում այլ տեղեկատվական նյութերի պահպանման եւ կառավարման համար:

4.1.2.10.2. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.10.3. Ինտեգրված համակարգի տեխնիկական կարգավորման ենթահամակարգը պետք է ստեղծվի այն տեղեկատվական-ծրագրային որոշումների հիման վրա, որոնք մշակվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 260 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ընդհանուր գործընթացների իրագործման համար առաջնահերթ ցանկի 35-րդ, 36-րդ եւ 38-րդ կետերով նախատեսված ընդհանուր գործընթացների՝ ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում իրականացման ժամանակ (Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում դրանց իրագործման ժամկետներով):

4.1.2.11. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը

4.1.2.11.1. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործման ապահովման համար:

4.1.2.11.2. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.11.3. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ներառի միասնականացված բաղադրիչներ, որոնք ապահովում են Հանձնաժողովի կողմից մշակվող եւ հաստատվող ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանվող պահանջներին համապատասխան ընդհանուր գործընթացների բազային իրագործումը:

4.1.2.12. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը

4.1.2.12.1. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը նախատեսված է Միության մաքսային տարածքում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների եզակի նույնականացման ապահովման համար:

4.1.2.12.2. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.12.3. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը պետք է ապահովի արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների եզակի նույնականացման համարների տեղեկատվական բազայի ձեւավորումը, վարումն ու օգտագործումը:

4.1.2.13. Ինտեգրացիոն հարթակը

4.1.2.13.1. Ինտեգրացիոն հարթակը նախատեսված է ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում լիազորված մարմինների, լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակման աջակցության, ինչպես նաեւ այդպիսի տեղեկատվական համակարգերի միջոցներով ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին հասանելիության ապահովման համար:

4.1.2.13.2. Ինտեգրացիոն հարթակը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) ինտեգրացիոն հարթակի ինտեգրացիոն անցուղիների ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացումը.

2) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ենթահամակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակման ապահովումը.

3) Միության անդամ չհանդիսացող ինտեգրացիոն միավորումների, միջազգային կազմակերպությունների եւ պետությունների (հետագայում՝ արտաքին տեղեկատվական համակարգեր) տեղեկատվական համակարգերի հետ տվյալների էլեկտրոնային փոխանակման ապահովումը:

4.1.2.14. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը

4.1.2.14.1. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգը նախատեսված է Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, դասակարգիչներ եւ ընդհանուր գործընթացների իրագործման համար օգտագործվող այլ տեղեկություններ պարունակող տվյալների բազայի վարման ապահովման, անդամ պետություններին Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների ինտեգրացիոն հարթակի միջոցներով տրամադրման, ինչպես նաեւ Միության տեղեկատվական պորտալի միջոցով շահագրգիռ անձանց եւ իրավասու մարմինների միջեւ այդպիսի տեղեկատվության տարածման համար:

4.1.2.14.2. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝

1) Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, դասակարգիչներ եւ ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ օգտագործվող այլ տեղեկատվություն պարունակող տվյալների բազաների ընդլայնումը.

2) Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների մեջ պարունակվող տվյալների որակի ապահովման գործառույթների ընդլայնումը:

4.1.2.15. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը

4.1.2.15.1. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում մշակման եւ պահպանման, ինչպես նաեւ ազգային հատվածների հետ փոխգործակցության ժամանակ կապուղիներով փոխանցման ժամանակ տվյալների գաղտնիության, ամբողջականության եւ հասանելիության ապահովման համար:

4.1.2.15.2. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) ինտեգրված համակարգից օգտվողների նույնականացման տվյալների կառավարումը.

2) տեղեկատվական անվտանգության իրադարձությունների դիտանցումը.

3) տեղեկատվության կրիպտոգրաֆիկ պաշտպանությունը:

4.1.2.16. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը

4.1.2.16.1. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը նախատեսված է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տարրերի դիտանցման եւ օպերատիվ կառավարման գործառույթներն իրականացնելու համար:

4.1.2.16.2. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված համանման ենթահամակարգի հիման վրա, դրա ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հաշվին՝ հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) դիտանցման եւ կառավարման ենթահամակարգով կարգավորվող օբյեկտների ցանկի ընդլայնումը (ապարատային ապահովումը, համակարգային եւ կիրառական ծրագրային ապահովումը).

2) դիտանցման եւ կառավարման ենթահամակարգի կողմից վերահսկվող ցուցանիշների ցանկի ընդլայնումը.

3) ինտեգրված համակարգի բաղադրիչների գործունեության վերաբերյալ ինտեգրված համակարգից օգտվողներին կոնսոլիդացված տեղեկատվության տրամադրման գործառույթների ընդլայնումը.

4) անհրաժեշտ կանոնակարգային միջոցառումների եւ բացառիկ իրավիճակների արձագանքման միջոցների մասով առաջարկությունների ձեւավորման մեխանիզմների ստեղծումը.

5) Հանձնաժողովի անդամ պետությունների ՎԵԿ-ի ծառայությունների գործունեության կենտրոնացված դիտանցման եւ դիագնոստիկայի ապահովումը:

4.1.2.17. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը

4.1.2.17.1. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը նախատեսված է էլեկտրոնային փաստաթղթերի անդրսահմանային փոխանակման ժամանակ վստահության երաշխիքի ապահովման համար:

4.1.2.17.2. Ինտեգրված համակարգի Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված ենթահամակարգերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.1.2.17.3. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը պետք է ապահովի ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության գործունեությունը (հետագայում՝ ՎԵԿ-ի ծառայություն) եւ էլէկտրոնային տեսքով ներառվի տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքում:

4.1.2.17.4. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը պետք է ստեղծվի ՎԵԿ ԱՓԱԻՏՀ-ի ծառայության կազմում Հանձնաժողովի ՎԵԿ-ի ծառայությունների

ստեղծման ժամանակ մշակված ծրագրային-տեխնիկական լուծումների օգտագործմամբ:

4.1.2.18. Ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը

4.1.2.18.1. Ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը (հետագայում՝ ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոն) նախատեսված է ԷԹՍ-ի ստուգման բանալիների սերտիֆիկատների կառավարման այն հիերարխիկ համակարգի կառուցման համար, որն ապահովում է ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության շրջանակներում անդամ պետությունների ՎԵԿ-ի ծառայությունների եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգի փոխգործակցությունը:

4.1.2.18.2. ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված տարրի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր տարր է:

4.1.2.19. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը

4.1.2.19.1. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը նախատեսված է Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ անձնակազմին էլեկտրոնային փաստաթղթերի ստորագրման համար ԷԹՍ-ի բանալիների սերտիֆիկատներով ապահովելու համար:

4.1.2.19.2. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնն ԱՓԱԻՏՀ-ի շրջանակներում մշակված տարրերի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր տարր է:

4.1.2.20. Ինտեգրված համակարգի տարրերի միջեւ տեղեկատվական փոխանակման համար կապի եղանակներին եւ միջոցներին ներկայացվող պահանջները

4.1.2.20.1. Հանձնաժողովի հատվածում բացված ինտեգրված համակարգի ենթահամակարգերի միջեւ տեղեկատվական փոխանակումը պետք է

իրականացվի ինտեգրացիոն հարթակի կազմի մեջ մտնող Հանձնաժողովի հատվածի տվյալների սինխրոնիզացման ենթահամակարգի օգտագործմամբ:

4.1.2.20.2. Ինտեգրացիոն անցուղիների եւ ՎԵԿ-ի ծառայությունների միջեւ տեղեկատվության փոխանակումը պետք է իրականացվի ՎԵԿ-ի ծառայությունների կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից մշակվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը, որոնք սահմանում են Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթավորման կանոններին եւ պահանջներին համապատասխան ձեւակերպված եւ ստորագրությամբ կամ ստորագրությամբ եւ կնիքով հաստատված՝ թղթային կրիչով համանման փաստաթղթերին իրավաբանական ուժով հավասար ճանաչվող էլեկտրոնային փաստաթղթերի փոխանցման տեխնոլոգիան, ինչպես նաեւ ՎԵԿ-ի ծառայության հետ ինտեգրացիոն հարթակի փոխգործակցության կանոնակարգերը, էլեկտրոնային հաղորդագրությունների փոխգործակցության ժամանակ օգտագործվով ձեւաչափերը եւ կառուցվածքները:

4.1.2.20.3. Ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիների եւ Հանձնաժողովի հատվածի ինտեգրացիոն անցուղու միջեւ փոխգործակցությունը պետք է կատարվի էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակման միջոցով՝ ինտեգրացիոն հարթակի կազմի մեջ մտնող տրանսպորտային ենթահամակարգի օգտագործմամբ:

4.1.2.20.4. Անդամ պետությունների միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգերի եւ ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիների միջեւ կապի եղանակները եւ միջոցները պետք է սահմանվեն անդամ պետությունների միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգերի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:

4.1.2.21. Հարակից համակարգերի հետ համատեղելիության պահանջները

4.1.2.21.1. Ինտեգրված համակարգի նկատմամբ հարակից են՝

1) իրավասու մարմինների տեղեկատվական համակարգերը.

2) արտաքին տեղեկատվական համակարգերը:

4.1.2.21.2. Ինտեգրված համակարգի հետ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի փոխգործակցությունը պետք է իրականացվի անդամ պետությունների միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգերի եւ ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիների գործառույթների օգտագործմամբ:

4.1.2.21.3. Ինտեգրված համակարգի հետ արտաքին տեղեկատվական համակարգերի փոխգործակցությունը պետք է իրականացվի ինտեգրացիոն հարթակի կազմի մեջ մտնող արտաքին համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգի կողմից տրամադրվող գործառույթների օգտագործմամբ:

4.1.3. Անձնակազմի թվին, որակավորմանը եւ աշխատանքի ռեժիմին ներկայացվող պահանջները

4.1.3.1. Անձնակազմի թվին եւ որակավորմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի եւ ազգային հատվածների նախագծման եւ մշակման փուլում:

4.1.3.2. Ինտեգրված համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի տեխնիկական-աշխատանքային նախագծի փաստաթղթերում պետք է նշվեն ինտեգրված համակարգի բաղադրիչների շահագործման համար անձնակազմի անհրաժեշտ հատուկ պատրաստվածության եւ գիտելիքների վերաբերյալ պահանջները:

4.1.4. Նշանակության ցուցանիշները

4.1.4.1. Ինտեգրված համակարգը պետք է ապահովի Միությունում ինտեգրացիոն գործընթացների զարգացման, ինչպես նաեւ ինտեգրված համակարգի ֆունկցիոնալ հնարավորություններին ներկայացվող պահանջների փոփոխության ժամանակ արդիականացման հնարավորությունը: Ինտեգրված համակարգի արդիականացման ընթացքում պետք է ապահովվի ինտեգրված

համակարգում պահպանվող տվյալների պահպանման եւ հետագա օգտագործման հնարավորությունը:

4.1.5. Հուսալիությանը ներկայացվող պահանջները

4.1.5.1. Ինտեգրված համակարգի բաղադրիչները պետք է ապահովեն շուրջօրյա ռեժիմով անընդմեջ գործունեություն պրոֆիլակտիկայի եւ վերասարքաբերման համար թույլատրելի ընդմիջումներով եւ անսարքության հետ կապված ոչ ավելի, քան տարեկան 44 ժամ պարապուրդներով՝ պարապուրդի հանգեցրած անսարքության վերացման ոչ ավելի, քան 4 ժամ միջին ժամանակով:

4.1.5.2. Ինտեգրված համակարգի հաշվիչ ռեսուրսները պետք է ապահովեն ինտեգրված համակարգի հասանելիությունը՝ օրը 24 ժամ, տարին 365 օր:

4.1.5.3. Ինտեգրված համակարգի տեխնիկական միջոցները պետք է նախատեսեն պլանային պրոֆիլակտիկ, կանոնակարգային, վերանորոգման-վերականգնման աշխատանքների կատարման, ինչպես նաեւ առանց գործունեության ընդհատման ինտեգրված համակարգի արդիականացման հնարավորությունը:

4.1.5.4. Ապարատային ապահովման խափանման ժամանակ, ներառյալ՝ ելեկտրասնուցման վթարային անջատումը, ինտեգրված համակարգի բաղադրիչները պետք է ինքնաբերաբար վերականգնեն իրենց աշխատունակությունը խափանումները վերացնելուց եւ ապարատային ապահովման ճիշտ վերագործարկումից հետո (բացառությամբ կատարվող ծրագրային ծածկագրով տեղեկատվության աշխատանքային կրիչների վնասման դեպքերի):

4.1.5.5. Ինտեգրված համակարգի բաղադրիչները պետք է ապահովեն ինտեգրված համակարգից օգտվողների սխալ գործողությունների արդյունքում ստեղծված վթարային իրավիճակների ճշգրիտ մշակումը: Այդ դեպքում ինտեգրված համակարգի բաղադրիչները ինտեգրված համակարգից օգտվողին

պետք է տրամադրեն համապատասխան վթարային հաղորդագրություններ, որից հետո վերադառնան սխալ (անթույլատրելի) հրահանգին նախորդող աշխատանքային իրավիճակին:

4.1.5.6. Ինտեգրված համակարգի բաղադրիչները պետք է ապահովեն ինտեգրված համակարգից օգտվողների սխալ գործողությունների արդյունքում ստեղծված վթարային իրավիճակների ճշգրիտ մշակումը: Այդ դեպքում ինտեգրված համակարգի բաղադրիչները պետք է ապահովեն համապատասխան մատյաններում վթարային իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության պահպանումը, որից հետո վերադառնան ոչ ճշգրիտ մուտքային տվյալների ստացմանը նախորդող աշխատանքային իրավիճակին:

4.1.5.7. Հարակից համակարգերից մեկի շարքից դուրս գալը, ինչպես նաեւ ինտեգրված համակարգ հարակից համակարգերի կողմից սխալ տվյալների փոխանցումը չպետք է հանգեցնեն ինտեգրված համակարգի գործունեության դադարեցմանը:

4.1.6. Էրգոնոմիկային եւ տեխնիկական գեղագիտությանը ներկայացվող պահանջները

4.1.6.1. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի եւ ազգային հատվածների ծրագրային բաղադրիչները, որոնց հետ ինտեգրված համակարգից օգտվողը փոխգործակցելու է օգտվողների միջերեսների միջոցով, պետք է իրագործվեն՝ հաշվի առնելով հետեւյալ պահանջները՝

1) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ծրագրային բաղադրիչների միջերեսը պետք է լինի ռուսալեզու՝ բացառությամբ միջազգային առեւտրի եւ մաքսային գործի ոլորտում օգտագործվող օտարալեզու տերմինների.

2) ազգային հատվածի ծրագրային բաղադրիչների միջերեսը կարող է իրագործվել անդամ պետության պետական լեզվով.

3) տեղեկատվական հաղորդագրությունները եւ սխալների վերաբերյալ հաղորդագրությունները պետք է լինեն կրճատ եւ առավել պարզ, ընդ որում,

սխալների վերաբերյալ հաղորդագրությունների վերջում (կլոր փակագծերում) կարող են հանդիպել օտարալեզու բառեր եւ արտահայտություններ, որոնք մանրամասն նկարագրում եմ առաջացած սխալը եւ նախատեսված են տեխնիկական աջակցության ծառայությունների անձնակազմի համար.

4) ծրագրային բաղադրիչների միջերեսը պետք է հնարավորություն ունենա հարմարեցվելու ինտեգրված համակարգից օգտվողի էկրանի ընթացիկ տարլուծմանը, ընդ որում, էկրանի նվազագույն պահպանվող տարլուծումը պետք է լինի ոչ պակաս, քան 1280 x 720 կետ.

5) դաշտերի անվանումները պետք է լինեն առավել պարզ եւ չպետք է ունենան կրճատումներ եւ հապավումներ՝ բացառությամբ միջազգային առեւտրի եւ մաքսային գործի ոլորտում ընդունվածների.

6) տեղեկատվական տվյալները պետք է ներմուծվեն միայն համապատասխան տեղեկատուների օգտագործմամբ.

7) մենյուն եւ էկրանային ձեւերը չպետք է պարունակեն այնպիսի կետեր եւ կոճակներ, որոնք ինտեգրված համակարգից օգտվողը չի կարող կիրառել համաձայն իրեն տրված դերին համապատասխան ընթացիկ իրավունքների.

8) էկրանային ձեւերը կարող են լինել միատեսակ եւ պետք է ունենան հուշումների՝ կոնտեքստից կախված ներկառուցված համակարգ, ինչպես նաեւ «տաք» ստեղների լուսավորում.

9) բոլոր միատեսակ գործառնությունները պետք է միասնականացվեն.

10) միջերեսը պետք է թույլ տա ներմուծել անհրաժեշտ տեղեկատվությունը ստեղնաշարի օգտագործմամբ, ընդ որում, «մկնիկ» տեսակի մանիպուլյատորի օգտագործումը չպետք է լինի պարտադիր:

4.1.7. Համակարգի բաղադրիչների շահագործմանը, տեխնիկական սպասարկմանը, վերանորոգմանը եւ պահպանմանը ներկայացվող պահանջները

Ինտեգրված համակարգի բաղադրիչների շահագործումը, տեխնիկական

սպասարկումը, վերանորոգումը եւ պահպանումը պետք է իրականացվեն Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

4.1.8. Չարտոնված հասանելիությունից տեղեկությունների պաշտպանությանն ուղղված պահանջները

4.1.8.1. Ինտեգրված համակարգի ստեղծման ժամանակ պետք է սահմանվեն՝

1) պաշտպանության ենթակա տեղեկատվության ցանկը.

2) պաշտպանության ենթակա տեղեկատվությանը հասանելիությունը սահմանափակելու աստիճանը.

3) պաշտպանվող ոլորտի սահմանները (ֆիզիկական եւ տրամաբանական).

4) պաշտպանվող տեղեկատվությանը չարտոնված հասանելիության եւ տեղեկատվության վրա չարտոնված ազդեցության հետ կապված տեղեկատվության անվտանգության արդիական վտանգները:

4.8.2. Ինտեգրված համակարգի ստեղծման ժամանակ պետք է ապահովվեն՝

1) տեղեկատվության պաշտպանության ապահովման կանոնների ձեւավորմանն ու իրագործմանն ուղղված կազմակերպական-կարգադրական փաստաթղթերի մշակումը եւ ներդրումը՝ լիազորված մարմինների հետ համաձայնեցված ցանկին համապատասխան.

2) տեղեկատվության պաշտպանության կանոնների կատարումն իրագործող անձնակազմի պատրաստումը.

3) տեղեկատվության պաշտպանության մեխանիզմների իրագործումը՝ տեղեկատվության պաշտպանության տեխնիկական, ծրագրային եւ ծրագրա-ապարատային միջոցների օգտագործմամբ.

4) կազմակերպական եւ տեխնիկական այն միջոցների համալիրի մշակումը եւ ներդրումը, որոնք ուղղված են պաշտպանվող տեղեկատվության անվտանգության արդիական վտանգների կանխարգելմանը եւ ապահովում են

տեղեկատվական անվտանգության ապահովման կանոնների կատարման աջակցությունն ու տեղեկատվության պաշտպանության մեխանիզմների իրագործումը:

4.1.8.3. Ինտեգրված համակարգում տեղեկատվության պաշտպանությունը պետք է ապահովվի վստահության անդրսահմանային տարածքի ստեղծման, զարգացման եւ գործունեության այն պահանջներին համապատասխան, որոնք մշակվում են Հանձնաժողովի կողմից լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ եւ հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ Պայմանագրի թիվ 3 հավելվածի 18-րդ կետի եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն:

4.1.8.4. Ազգային հատվածների ստեղծումը չպետք է պահանջի փոփոխություններ այն կիրառական տեղեկատվական համակարգերի, անդամ պետությունների տեղեկատվական փոխգործակցության միջգերատեսչական համակարգերի տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցներում, որոնք նվազեցնում են տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցներին ներկայացվող պահանջները:

4.1.8.5. Ինտեգրված համակարգում տեղեկատվության պաշտպանությունը չարտոնված հասանելիությունից պետք է ապահովվի սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան եւ հաշվի առնելով այն տեխնիկական, տեխնոլոգիական, մեթոդական եւ կազմակերպչական փաստաթղթերի դրույթները, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից ինտեգրված համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման ժամանակ կիրառվող կազմակերպչական եւ տեխնիկական լուծումների միասնականացման ապահովման եւ տեղեկատվության պաշտպանության պատշաճ մակարդակի պահպանման նպատակներով:

4.1.9. Վթարների դեպքում տեղեկատվության պաշտպանվածությանը ներկայացվող պահանջները

4.1.9.1. Տեղեկատվության պաշտպանվածությունը պետք է ապահովվի պահուստային պատճենման եւ վերականգնման միջոցների օգնությամբ

4.1.9.2. Պահուստային պատճենման եւ վերականգնման միջոցները կարող են ընդգրկվել ինտեգրված համակարգի ֆունկցիոնալ ենթահամակարգերի ապարատա-ծրագրային համալիրների կազմում կամ կառուցվել որպես տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի առանձին բաղադրիչ:

4.1.9.3. Ինտեգրված համակարգի տվյալների պահուստային պատճենման եւ վերականգնման միջոցառումներն իրականացվում են՝ հաշվի առնելով հետեւյալը՝

1) պահուստային տվյալների պահպանումը պետք է իրականացվի հեռացված հարթակում.

2) պահուստային տվյալները պետք է ապահովված լինեն չարտոնված հասանելիությունից եւ շրջակա միջավայրի ազդեցություններից ֆիզիկական պաշտպանության երաշխավորված մակարդակով.

3) պահուստային պատճենման սարքավորումները պետք է կանոնավոր կերպով թեստավորվեն.

4) վերականգնման ընթացակարգերն անհրաժեշտ է կանոնավոր արդիականացնել եւ թեստավորել դրանց արդյունավետության մեջ վստահությունն ապահովելու համար.

5) անհրաժեշտ է սահմանել տեղեկատվության պահպանման ժամանակահատվածները, ինչպես նաեւ հաշվի առնել երկարաժամկետ պահպանման պահուստային պատճեններին ներկայացվող պահանջները:

4.1.9.4. Պահուստավորման միջոցները պետք ապահովեն վթարից, սարքավորումների խափանումներից կամ տարերային աղետներից հետո ինտեգրված համակարգում պահպանվող եւ ինտեգված համակարգի միջոցներով մշակվող ծրագրային ապահովման եւ տեղեկատվության վերականգնումը:

4.1.10. Արտաքին ազդեցություններից պաշտպանության միջոցներին ներկայացվող պահանջները

4.1.10.1. Արտաքին ազդեցություններից ինտեգրված համակարգի պաշտպանությունը պետք է ապահովվի միջոցառումների համալիրի իրագործման հաշվին՝ տվյալների մշակման այն կենտրոնների նախագծմանը եւ հագեցվածությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, որոնցում տեղադրվելու են ինտեգրված համակարգի ծրագրա-ապարատային բաղադրիչները:

4.1.11. Արտոնագրային մաքրությանը ներկայացվող պահանջները

4.1.11.1. Ծրագրա-ապարատային միջոցները, տեխնոլոգիաները, տվյալների մշակման ալգորիթմները, ինտեգրված համակարգի այլ բաղկացուցիչ մասեր անդամ պետությունների տարածքներում պետք է օժտված լինեն արտոնագրային մաքրությամբ:

4.1.12. Ստանդարտացմանը եւ միասնականացմանը ներկայացվող պահանջները

4.1.12.1. Ինտեգրված համակարգի բաղադրիչների տեխնիկական եւ աշխատանքային նախագծման ժամանակ պետք է կիրառվեն տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական անվտանգության ոլորտի ստանդարտներն ու առաջարկությունները՝ ըստ Հանձնաժողովի կողմից սահմանված ցանկի:

4.1.13. Մասշտաբայնությանը ներկայացվող պահանջները

4.1.13.1. Ինտեգրված համակարգի ծրագրա-ապարատային միջոցները պետք է ապահովեն բարձր մասշտաբայնություն՝ ըստ արտադրողականության եւ մշակվող տվյալների ծավալի, առանց կիրառական ծրագրային ապահովման ձեւափոխման, այդ թվում՝ հետեւյալ դեպքերում՝

1) տեղեկատվական փոխգործակցության մասնակիցների ավելացումը.

2) ինտեգրված համակարգի միջոցներով իրագործվող ընդհանուր գործընթացների ցանկի ընդլայնումը.

3) ընդհանուր գործընթացների իրագործման եղանակի փոփոխությունը.

4) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, ազգային հատվածների եւ արտաքին տեղեկատվական համակարգերի միջեւ տեղեկատվական հոսքերի ավելացումը.

5) ինտեգրված համակարգից օգտվողների թվի ավելացումը:

4.1.14. Համակարգի զարգացման եւ արդիականացման հեռանկարները

4.1.14.1. Ինտեգրված համակարգը պետք է տրամադրի իր գործառույթների զարգացման հնարավորությունը հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) ինտեգրված համակարգի օգտագործմամբ իրագործվող ընդհանուր գործընթացների ցանկի եւ ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ընդլայնումը, այդ թվում՝ հետեւյալ ոլորտներում՝

ագրոարդյունաբերական եւ արդյունաբերական քաղաքականությունը.

ծառայությունների եւ ներդրումների միասնական շուկայի ձեւավորումը.

ֆինանսական շուկաների կարգավորումը.

էներգետիկ քաղաքականությունը.

աշխատանքային միգրացիան.

արժույթային քաղաքականությունը.

2) Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգի զարգացումը, ներառյալ՝ այդ համակարգի մեթոդաբանական եւ տեխնոլոգիական ապահովումը.

3) վստահության անդրսահմանային տարածքի զարգացումը՝

ֆիզիկական կամ իրավաբանական անձանց եւ լիազորված մարմինների միջեւ էլեկտրոնային տեսքով տեղեկատվական փոխգործակցության հնարավորության իրագործման համար.

4) անդամ պետությունների ռեզիդենտ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի կողմից տրամադրվող ծառայություններին հասանելիության ապահովումը:

4.1.14.2. Ինտեգրված համակարգը պետք է ապահովի Միությունում ինտեգրացիոն գործընթացների ժամանակ արդիականացման հնարավորությունը: Ինտեգրված համակարգի արդիականացման ընթացքում պետք է ապահովվի այդ համակարգում պահպանվող բոլոր տվյալների պահպանման եւ հետագա օգտագործման հնարավորությունը:

4.2. Գործառնություններին (խնդիրներին) առաջադրվող պահանջները

4.2.1. Միության տեղեկատվական պորտալին առաջադրվող պահանջները

4.2.1.1. Միության տեղեկատվական պորտալն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի եւ Միության մարմինների լոկալ ցանցերի ռեսուրսների ամբողջությունն է: Միության տեղեկատվական պորտալը պետք է ապահովի Միության, դրա մարմինների եւ դրանց գործունեության վերաբերյալ արդիական եւ հավաստի տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաեւ պետք է տրամադրի անդամ պետությունների պետական իշխանության մարմինների եւ ցանկացած շահագրգիռ անձանց համար հասանելիության ծառայություններ Միության ընդհանուր տեղեկատվական այն ռեսուրսներին, որոնք ձեւավորվում են ինտեգրված համակարգի միջոցներով ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ:

4.2.1.2. Միության տեղեկատվական պորտալը պետք է ստեղծվի ԱՓԱԻՏՀ-ի, Միության եւ Հանձնաժողովի պաշտոնական կայքերի շրջանակներում իրագործված Հանձնաժողովի տեղեկատվական պորտալի ինտեգրման եւ զարգացման հիման վրա:

4.2.1.3. Միության տեղեկատվական պորտալը պետք է ներառի հետեւյալ բաղադրիչները՝

1) Միության պաշտոնական կայքը.

2) Հանձնաժողովի պաշտոնական կայքը.

3) «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում Միության դատարանի պաշտոնական կայքը (հետագայում՝ Դատարանի պաշտոնական կայք).

4) պաշտոնական նորմատիվ-իրավական տեղեկատվության պորտալը.

5) Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալը.

6) Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը.

7) միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը.

8) արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը:

4.2.1.4. Միության պաշտոնական կայքին առաջադրվող պահանջները

4.2.1.4.1. Միության պաշտոնական կայքը նախատեսված է Միության գործունեության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացնելու համար:

4.2.1.4.2. Միության պաշտոնական կայքը պետք է ապահովի Միության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության հրապարակման հնարավորությունը, ներառյալ՝ անդամ պետությունների, Միության մարմինների, Միության զարգացման պատմության վերաբերյալ տեղեկատվությունը:

4.2.1.4.3. Միության պաշտոնական կայքը պետք է ապահովի շահագրգիռ անձանց հասանելիությունն ընդհանուր տեղեկատվական, այդ թվում՝ Միության տեղեկատվական պորտալի այլ բաղադրիչների շրջանակներում ձեւավորվող եւ վարվող ռեսուրսներին:

4.2.1.5. Հանձնաժողովի պաշտոնական կայքին առաջադրվող պահանջները

4.2.1.5.1. Հանձնաժողովի պաշտոնական կայքը նախատեսված է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացնելու համար:

4.2.1.5.2. Հանձնաժողովի պաշտոնական կայքը պետք է ապահովի Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվության հրապարակման հնարավորությունը, որն այդ թվում ներառում է.

1) Հանձնաժողովի կառուցվածքի եւ կոլեգիայի նախագահի, կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները.

2) Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվությունը.

3) Հանձնաժողովի կոլեգիային կից ստեղծված խոհրդատվական մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը.

4) Հանձնաժողովի մամլո հաղորդագրությունները, հաշվետվությունները, զեկույցները եւ այլ տեղեկատվական նյութեր, որոնք պատրաստվում են Հանձնաժողովի կողմից Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան.

5) Հանձնաժողովի կողմից անցկացվող ապրանքների գնման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման մրցույթների վերաբերյալ ծանուցումները.

6) թափուր աշխատատեղերի եւ Հանձնաժողովի կողմից թափուր պաշտոնների համալրման համար անցկացվող մրցույթների եւ դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

4.2.1.6. Դատարանի պաշտոնական կայքին առաջադրվող պահանջները

4.2.1.6.1. Դատարանի պաշտոնական կայքը նախատեսված է Միության դատարանի գործունեության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացնելու համար:

4.2.1.6.2. Դատարանի պաշտոնական կայքը պետք է ապահովի Միության դատարանի գործունեության վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվության հրապարակման հնարավորությունը, որն այդ թվում ներառում է՝

1) Միության դատարանի կազմի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները.

2) Միության դատարանի ակտերը.

3) Միության Դատարանի կողմից պատրաստվող հաշվետվությունները, զեկույցները եւ այլ տեղեկատվական նյութերը.

4) Միության դատարանի կողմից գործերի քննության ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը.

5) Միության դատարանի կողմից անցկացվող ապրանքների գնման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման մրցույթների վերաբերյալ ծանուցումները.

6) թափուր աշխատատեղերի եւ Միության դատարանի կողմից թափուր պաշտոնների համալրման համար անցկացվող մրցույթների եւ դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

4.2.1.7. Պաշտոնական նորմատիվ-իրավական տեղեկատվության պորտալին ներկայացվող պահանջները

4.2.1.7.1. Պաշտոնական նորմատիվ-իրավական տեղեկատվության պորտալը պետք է ապահովի Միության, Մաքսային միության Հանձնաժողովի, Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի մարմինների ակտերի միասնական պահոցի ձեւավորումը եւ վարումը, ինչպես նաեւ շահագրգիռ անձանց դրան հասանելիության տրամադրումը:

4.2.1.7.2. Պաշտոնական նորմատիվ-իրավական տեղեկատվության պորտալը պետք է ապահովի Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության հանրային քննարկման եւ գնահատման ընթացակարգերի իրականացումը (որոնց համար այդպիսի ընթացակարգերը նախատեսված են):

4.2.1.7.3. Պաշտոնական նորմատիվ-իրավական տեղեկատվության պորտալը պետք է ապահովի անդամ պետությունների՝ Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար լիազորված պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների կանոնակարգված մուտքը Միության մարմինների նիստերի օրակարգերին եւ Միության մարմինների նիստերի օրակարգերի հարցերով նյութերին:

4.2.1.8. Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալին առաջադրվող պահանջները

4.2.1.8.1. Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալը նախատեսված է Հանձնաժողովի գործունեության ապահովման գործընթացների ավտոմատացման աջակցության համար:

4.2.1.8.2. Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալը պետք է կոլեգիայի անդամներին, պաշտոնատար անձանց եւ Հանձնաժողովի աշխատակիցներին ապահովի կանոնակարգված մուտք Հանձնաժողովի ներքին լոկալ հաշվիչ ցանցում տեղադրվող տեղեկատվական ռեսուրսներին, որոնք այդ թվում ներառում են՝

1) Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունը.

2)կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կոնտակտային տվյալները.

3) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի եւ կոլեգիայի նիստերի ընթացքում քննարկման նախատեսվող հարցերի վերաբերյալ փաստաթղթերը.

4) Հանձնաժողովի ներքին կարգադրողական փաստաթղթերը.

5) փաստաթղթերի (դիմումների, նամակների, հրամանների, ծառայողական գրությունների եւ այլ) ձեւանմուշները.

6) Հանձնաժողովի աշխատանքի տարբեր հարցերով տեղեկատու տեղեկատվությունը:

4.2.1.8.3. Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալը պետք է ապահովի ազատ թեմատիկայի տեղեկատու տեղեկատվության ձեւավորման, վարման եւ հրապարակման հնարավորությունը: Տեղեկատու տեղեկատվության ձեւավորման ժամանակ պետք է նախատեսվեն հետեւյալ հնարավորությունները՝

1) առանձին թեմաներով տեղեկատվության կառուցումը.

2) թեմաների կազմակերպումը՝ հիերարխիկ կառուցվածքով:

4.2.1.8.4. Հանձնաժողովի ներքին տեղեկատվական պորտալը պետք է ապահովի թափանցիկ մուտք Միության տեղեկատվական պորտալի այլ բաղադրիչներում, ինտերգված համակարգի ենթահամակարգերում, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսներում եւ համակարգերում ձեւավորվող տեղեկատվական ռեսուրսներին:

4.2.1.9. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին եւ բաց տվյալների պորտալին ներկայացվող պահանջները

4.2.1.9.1. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը պետք է տարբեր կատեգորիաներից օգտվողներին ապահովի ավտորիզացված եւ անանուն մուտք ինտեգրված համակարգի ենթահամակարգերում կենտրոնացված վարման միջոցով կամ ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության հիման վրա ձեւավորվող ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին:

4.2.1.9.2. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը պետք է ապահովի տվյալներին հասանելիության տարբեր տեսակների տրամադրում (այդ թվում՝ մեքենաընթեռնելի ձեւաչափով):

4.2.1.9.3. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը պետք է ապահովի ինտեգրված համակարգի ենթահամակարգերից ավտոմատ ռեժիմով տեղեկատվության հրապարակումը:

4.2.1.9.4. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը պետք է ապահովի ընդհանուր գործընթացների իրագործման մեթոդական եւ տեխնոլոգիական աջակցության իրականացումը, այդ թվում հետեւյալի հաշվին՝

1) ընդհանուր գործընթացների նախագծման եւ իրագործման վերաբերյալ մեթոդական եւ տեղեկատվական նյութերի հրապարակումը.

2) առարկայական ոլորտների տվյալների մոդելների զանազան տարբերակների եւ ընդհանուր գործընթացների հետ կոլեկտիվ աշխատանքի հնարավորությունը.

3) XMI ձեւաչափով առարկայական ոլորտների տվյալների մոդելների եւ ընդհանուր գործընթացների մոդելների ներբեռնման եւ արտաբեռնման հնարավորությունը.

4) առարկայական ոլորտների եւ ընդհանուր գործընթացների տվյալների մոդելների վերլուծության գործիքների տրամադրումը՝ հայտնաբերված կախվածությունների եւ տվյալների տարրերի կրկնակի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների ձեւավորմամբ.

5) ինտեգրված համակարգի միջոցներով ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ ընդհանուր գործընթացների մոդելների հիման վրա տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի լրակազմերի ավտոմատացված ձեւավորումը՝ Հանձնաժողովի

կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ հաստատված այդպիսի փաստաթղթերի տիպային կառուցվածքին ներկայացվող պահանջներին համապատասխան:

4.2.1.9.5. Միության ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների եւ բաց տվյալների պորտալը պետք է ապահովի Հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 180 որոշմամբ նախատեսված ինտեգրված համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի վարումը:

4.2.1.10. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալին ներկայացվող պահանջները

4.2.1.10.1. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը պետք է ապահովի շահագրգիռ անձանց հասանելիությունն ինտեգրված համակարգի օգտագործմամբ տրամադրվող էլեկտրոնային ծառայություններին:

4.2.1.10.2. Միջպետական էլեկտրոնային ծառայություններին հասանելիությունը պետք է ապահովվի այն ծառայությունների օգնությամբ, որոնք իրագործվում են այդ թվում միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալում գրանցված շահագրգիռ անձանց էլեկտրոնային աշխատասենյակների շրջանակներում:

4.2.1.10.3. Միջպետական էլեկտրոնային ծառայություններին հասանելիությունը պետք է ապահովվի առնվազն հետեւյալ ծառայությունների տեսակների օգնությամբ՝

1) տեղեկատվական ծառայություններ՝ ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում ինտեգրված համակարգի ենթահամակարգերի միջոցներով ձեւավորվող կամ Միության մարմինների պատասխանատու ստորաբաժանումների կողմից պատրաստվող տեղեկատվության ավտոմատացված հրապարակում.

2) տեղեկատվության հարցման ծառայություններ՝ հարցումների ձեւավորման եւ հարցումների արդյունքների ստացման միջոցներ.

3) տեղեկատվությանը ավտոմատացված մուտքի ծառայություններ՝ մեքենաընթեռնելի ձեւաչափերով տեղեկատվության ավտոմատացված հրապարակում:

4.2.1.10.4. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը պետք է ապահովի շահագրգիռ անձանց կողմից իրենց գործառույթների իրագործումն ընդհանուր գործընթացների իրականացման շրջանակներում (եթե իրենց մասնակցությունն ընդհանուր գործընթացում նախատեսված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով):

4.2.1.10.5. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը պետք է շահագրգիռ անձանց տրամադրի անդամ պետությունների գնումների վերաբերյալ ընդհանրացված տեղեկատվության հասանելիություն, ներառյալ՝ գնման սպասվելիք եւ անցած ընթացակարգերի, պատվիրատուների եւ մատակարարների, գնումների ոլորտում անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը:

4.2.1.10.6. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը պետք է տրամադրի անդամ պետությունների էլեկտրոնային առեւտրային հարթակներին անցնելու հնարավորություն՝ էլեկտրոնային ձեւով գնումների իրականացման ծառայություններին հասանելիության նպատակով:

4.2.1.10.7. Միջպետական էլեկտրոնային ծառայությունների պորտալը պետք է նախատեսի անդամ պետությունների էլեկտրոնային առեւտրային հարթակների հետ ինտեգրման հնարավորություն՝ ավտոմատացված ռեժիմով գնումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

4.2.1.11. Արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալին ներկայացվող պահանջները

4.2.1.11.1. Արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը նախատեսված է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների տեղեկատվական աջակցության համար:

4.2.1.11.2. Արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը պետք է իրենից ներկայացնի մասնագիտացված տեղեկատվական ռեսուրս, որի տեղեկատվության տրամադրման եւ ծառայությունների մատուցման տրամաբանությունը պետք է կազմակերպված լինի արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից դրանց ստացման եւ օգտագործման հարմարավետության տեսանկյունից:

4.2.1.11.3. Արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալն այդ թվում իր մեջ պետք է ներառի հետեւյալ բաժինները՝

1) «Ընդհանուր տեղեկատվություն» բաժինը. տրամադրում է մուտք ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ, ԵԱՏՄ ՄՄՍ եւ դրանց կից օժանդակ (տեղեկատու) տեղեկատվական նյութերին, ինչպես նաեւ սակագնային եւ ոչ սակագնային միջոցների վերաբերյալ տեղեկատվությանը.

2) «Առաջարկություններ» բաժինը. պարունակում է առաջարկություններ՝ արտաքին տնտեսական գործունեության վարման վերաբերյալ, այդ թվում՝ արտադրանքի առանձին տեսակների կտրվածքով.

3) «Նորմատիվային իրավական ակտեր» բաժինը. պարունակում է մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվային իրավական ակտեր.

4) «Ծառայություններ» բաժինը. պարունակում է տեղեկատվական եւ ինտեգրացիոն ծառայություններ, որոնք հասանելիություն են ապահովում անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության ոլորտում

պաշտոնական ռեսուրսներին, վիճակագրական, լրատվական եւ այլ տեղեկատվական ծառայություններին:

4.2.1.11.4. Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը պետք է ապահովի նյութերի նախապատրաստումը՝ ավտոմատացված եւ ավտոմատ ռեժիմներով հրապարակման համար:

4.2.1.11.5. Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը պետք է բովանդակության կառավարման գործիքներ տրամադրի Հանձնաժողովի աշխատակիցների կողմից ավտոմատացված ռեժիմով նյութերի նախապատրաստման եւ հրապարակման հնարավորությունն ապահովելու համար:

4.2.1.11.6. Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը պետք է տրամադրի տեղեկատվության աղբյուրների կազմաձեւման գործիքներ՝ ինտեգրված համակարգի այլ ենթահամակարգերի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ համակարգերի հետ ինտեգրման հաշվին ավտոմատ ռեժիմով նյութերի նախապատրաստման եւ հրապարակման հնարավորությունն ապահովելու համար:

4.2.1.12. Միության տեղեկատվական պորտալի բաղադրիչները պետք է ապահովեն տեղեկատվական ռեսուրսների եւ ծառայությունների հասանելիությունը Միության տեղեկատվական պորտալից օգտվողների համար՝ անձնական համակարգիչների, պլանշետային համակարգիչների եւ բջջային սարքավորումների միջոցով:

4.2.1.13. Միության տեղեկատվական պորտալի բաղադրիչները պետք է ապահովեն տեղեկատվության ներկայացումն անդամ պետությունների պետական լեզուներով, ինչպես նաեւ անգլերենով:

4.2.1.14. Միության տեղեկատվական պորտալի բաղադրիչները պետք է հնարավորություն ընձեռեն աշխատելու օգտվողի միջերեսի հետ անդամ պետությունների պետական լեզուներով, ինչպես նաեւ անգլերենով:

4.2.1.15. Միության տեղեկատվական պորտալի բաղադրիչները պետք է ապահովեն միմյանց միջեւ, ինտեգրված համակարգի այլ ենթահամակարգերի եւ Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի ու ծառայությունների հետ ինտեգրման հնարավորությունը:

4.2.1.16. Միության տեղեկատվական պորտալը պետք է ունենա բաց եւ փակ մասեր: Բաց մասը նախատեսված է ընդհանուր (անանուն) հասանելիությունն ապահովելու համար: Հասանելիությունը փակ մասին պետք է իրականացվի տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի միջոցների օգտագործմամբ:

4.2.1.17. Միության տեղեկատվական պորտալին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.1.18. Միության տեղեկատվական պորտալին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանվեն ԱՓԱԻՏՀ Հանձնաժողովի տեղեկատվական պորտալի համար առանձին տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակվող համապատասխան առանձին տեխնիկական առաջադրանքում: Միության տեղեկատվական պորտալի բաղադրիչներին ներկայացվող մանրամասն պահանջները կարող են սահմանվել համապատասխան առանձին տեխնիկական առաջադրանքներում:

4.2.2. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.2.1. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը պետք է լինի ԱՓԱԻՏՀ տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացումը:

4.2.2.2. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) համախմբված տեղեկատվության հիման վրա վերլուծական հարցումների եւ հաշվետվական ձեւերի ձեւավորում, այդ թվում՝

անդամ պետությունների ապրանքներով արտաքին ու փոխադարձ առեւտրի կառուցվածքի մասով.

անդամ պետությունների վիճակագրական ցուցանիշների դինամիկայի մասով.

հաշվարկային վիճակագրական ցուցանիշների մասով.

անդամ պետությունների վիճակագրական ցուցանիշների համադրության մասով.

աշխարհի էլեկտրոնային քարտեզի վրա անդամ պետությունների վիճակագրական ցուցանիշների արտացոլման մասով.

տվյալների ակներեւաբար ներկայացման նպատակներով վերլուծական պանելների ձեւավորման հնարավորության մասով.

տրանսպորտային ենթակառուցվածքի, մաքսատան, նավահանգիստների, սահմանների տեղակայման տեսանելիացման մասով.

2) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տեղեկատվական ռեսուրսների կազմում վերլուծական տվյալների միասնական պահոցի ձեւավորում եւ վարում, այդ թվում՝

տվյալների աղբյուրներից (ֆայլեր, տվյալների բազաներ) ելակետային (չմշակված) տվյալների ներբեռնում.

տվյալների վերլուծական ցուցափեղկերի ձեւավորում.

մուտքային տվյալների համախմբում, ներառյալ՝ ներբեռնվող տվյալների մեջ օգտագործվող տեղեկագրքերի եւ դասակարգիչների ստուգումը եւ նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների ենթահամակարգի տվյալների հետ դրանց համաձայնեցումը.

տվյալների տարրերի չափման միավորների միասնականացում.

տվյալների ագրեգացում եւ տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի գործառման համար անհրաժեշտ ցուցանիշների ձեւավորում.

տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի վերլուծական տվյալների պահոցի ձեւավորման արձանագրությունների եւ տեխնոլոգիական վիճակագրության ձեւավորում.

վերլուծական տվյալների պահոցում տվյալների արդիականության մասին հաշվետվության ձեւավորում՝ այդ տվյալների աղբյուրների կտրվածքով:

4.2.2.3. ԱՓԱԻՏՀ-ի կազմում մշակված տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի զարգացումը պետք է ապահովվի հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) տվյալների աղբյուրների կազմի ընդլայնում՝ անդամ պետությունների տվյալների աղբյուրները լրացնելու միջոցով.

2) տվյալների վերլուծական ցուցափեղկերի կազմի ընդլայնում.

3) տվյալների մշակման լրացուցիչ ալգորիթմների իրագործում տվյալների վերլուծական ցուցափեղկեր, հարցումներ, վերլուծական հաշվետվական ձեւեր եւ հրապարակումներ ձեւավորելիս, ինչպես նաեւ տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելներ կառուցելիս.

4) տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի միջոցներով կատարվող վերլուծական խնդիրների եւ տնտեսական ոլորտում միտումների վերլուծության եւ գնահատման ու գործընթացների փոփոխության դիտանցման հետ կապված խնդիրների կազմի ընդլայնում.

5) վերլուծական խնդիրներ լուծելու եւ կանխատեսումներ անելու նպատակներով տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի միջոցների օգտագործման հիման վրա նոր տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելների կառուցում.

6) արտաքին աղբյուրներից տվյալների ավտոմատացված հավաքագրման ապահովման եւ տվյալների բաց աղբյուրների իմաստաբանական վերլուծության անցկացման հնարավորությունների իրագործման մասով տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնում:

4.2.2.4. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.2.5. Տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է ԱՓԱԻՏՀ տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.3. Վիճակագրության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.3.1. Վիճակագրության ենթահամակարգը պետք է լինի ԱՓԱԻՏՀ վիճակագրության ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացումը:

4.2.3.2. Վիճակագրության ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) վիճակագրական ցուցանիշների ցանկի համաձայն լիազորված մարմիններից այն տվյալներն ընդունելը, որոնք պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանվող կառուցվածքին եւ ձեւաչափերին.

2) ընդունված տվյալները բեռնելը վիճակագրության ենթահամակարգի տվյալների բազաներում եւ դրանց պահպանվածությունն ապահովելը.

3) ընդունված տվյալների ձեւաչափատրամաբանական հսկողությունը՝ դրանց ճշգրտման հնարավորությամբ.

4) վիճակագրական տվյալները մշակելիս կիրառվող տեղեկագրքեր եւ դասակարգիչներ վարելը.

5) վիճակագրական տվյալներ մշակելը, հաշվարկային ցուցանիշներ եւ ամփոփ տեղեկատվություն ձեւավորելը.

6) կանոնակարգված հաշվետվություններ ձեւավորելը.

7) տվյալների տարբեր ձեւաչափեր ներբեռնելու հնարավորությամբ OLAP-տեխնոլոգիաների կիրառման հիման վրա չկանոնակարգված հարցումներ ձեւավորելը եւ կատարելը.

8) դինամիկ շարքեր ձեւավորելը.

9) պատկերային տեսքով վիճակագրական տվյալներ (գրաֆիկներ, դիագրամներ, խորանարդներ եւ այլն) արտացոլելը.

10) աշխարհի էլեկտրոնային քարտեզի վրա վիճակագրական ցուցանիշներ արտացոլելը

11) տվյալների հրապարակումն ապահովելը, այդ թվում՝ Միության տեղեկատվական պորտալում.

12) տվյալներ փոխանցելն ինտեգրացիոն պլատֆորմ՝ Միության տեղեկատվական պորտալի բաց տվյալների բաժնում դրանք հրապարակելու համար.

13) ենթահամակարգի շրջանակներում վիճակագրական ցուցանիշները եւ դրանց վերլուծական հատկանիշները նկարագրող մետատվյալները ձեւավորելիս նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգի հետ փոխգործակցելը:

4.2.3.3. ԱՓԱԻՏՀ-ի կազմում մշակված վիճակագրության ենթահամակարգի զարգացումը պետք է ապահովվի հետեւյալ ուղղությունների շրջանակներում՝

1) լիազորված մարմինների կողմից տարբեր տեխնոլոգիական ձեւաչափերով եւ կառուցվածքներով վիճակագրական տվյալներ ներկայացնելիս տվյալների ավտոմատացված մշակման մեխանիզմ իրագործելը.

2) դինամիկ շարքերի ձեւավորման եւ արտացոլման մեխանիզմ իրագործելը.

3) վիճակագրության ենթահամակարգի մետատվյալները վարելիս վիճակագրության ենթահամակարգից օգտվողներին նախազգուշացնելու եւ տեղեկացնելու մեխանիզմ իրագործելը.

4) վիճակագրության ենթահամակարգի մետատվյալները ֆիլտրելու, որոնելու եւ ներկայացնելու մեխանիզմներ կատարելագործելը.

5) վիճակագրության ենթահամակարգի գործիքային միջոցների եւ օգտվողների միջերեսը կատարելագործելը եւ զարգացնելը.

6) Միություն նոր անդամ պետություններ ընդունելու առնչությամբ տվյալների վիճակագրության ենթահամակարգ կատարելագործելը եւ զարգացնելը.

7) կանոնակարգված հաշվետվության եւ հրապարակումների կազմը ընդլայնելը.

8) արտաքին տեղեկատվական համակարգերի, ինչպես նաեւ ինտեգրված համակարգի այլ ենթահամակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմներ ընդլայնելը եւ զարգացնելը:

4.2.3.4. Վիճակագրության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.3.5. Վիճակագրության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է ԱՓԱԻՏՀ

վիճակագրության ենթահամակարգի մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.4. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.4.1. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է լինի ԱՓԱԻՏՀ նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացումը:

4.2.4.2. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի միջոցառումների պլանների ձեւավորման, արդիականացման եւ կատարման հսկողության գործառույթների ավտոմատացումը՝ ընդհանուր առմամբ Հանձնաժողովի, Հանձնաժողովի կոլեգիայի եւ Հանձնաժողովի դեպարտամենտի անդամների քարտուղարությունների մակարդակներով:

4.2.4.3. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) անսահմանափակ ներդրվածության մակարդակի հիերարխիկ կառուցվածքի միջոցառումների եւ նախագծերի տարբեր պլանների ձեւավորում.

2) միջոցառումների պլանի եւ պլանի կետի, նախագծի ու նախագծային աշխատանքի վերաբերյալ տարբեր տեղեկությունների նշում (իրագործման ժամկետները, կատարման եւ (կամ) կատարման համակարգման համար պատասխանատու անձինք, ակնկալվող արդյունքը եւ այլն).

3) միջոցառումների եւ նախագծի պլանի իրագործման մասին փաստացի տվյալների հավաքագրում.

4) կատարված փոփոխությունների հիման վրա միջոցառումների պլանի եւ նախագծի ճշգրտում, միջոցառումների պլանի եւ նախագծի նոր տարբերակի ձեւավորում.

5) տարբեր մակարդակի միջոցառումների եւ նախագծերի պլանների իրականացման ժամանակ կատարողական կարգապահության հսկողություն, այդ թվում՝ կատարողների եւ պլանի կետերի, ընդհանուր առմամբ պլանի, նախագծային աշխատանքի եւ ընդհանուր առմամբ նախագծի պատասխանատուների համար ծանուցումների ձեւավորում.

6) միջոցառումների պլանի եւ նախագծերի կատարման նկատմամբ օպերատիվ հսկողություն, այդ թվում՝ պլանի տարբերակների համեմատություն եւ շեղումների հայտնաբերում.

7) տվյալների տարբեր կտրվածքներով միջոցառումների պլանի կատարման վերլուծություն.

8) միջոցառումների նախագծերի, ծրագրերի եւ պլանների իրագործման հսկողություն եւ դրանց կատարման վերլուծություն՝ տվյալների տարբեր կտրվածքներով.

9) ավտոմատացված ռեժիմով մուտքագրված տվյալների ճշգրտության ստուգում.

10) միջոցառումների տարբեր պլանների, նախագծերի եւ գործառույթների նկատմամբ այդպիսի պլանների եւ նախագծերի հետ աշխատելիս նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգից օգտվողների հասանելիության իրավունքների սահմանազատում.

11) հարմար տեսքով՝ նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգից օգտվողի միջոցառումների եւ նախագծերի պլանների իրագործմանը մասնակցելու մասին տվյալների ավտոմատացված հավաքագրում եւ ներկայացում.

12) միջոցառումների նախագծերի, ծրագրերի եւ պլանների տեսակների կազմի, ինչպես նաեւ դրանց ձեւավորման, համաձայնեցման, վարման եւ կատարման հսկողության ընթացակարգերի փոփոխության ճկուն կարգավորում.

13) կազմաձեւման միջոցով նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգի ներկառուցված միջոցներով օգտվողների միջերեսի եւ հաշվետվական ձեւերի կարգավորում.

14) ինտեգրված համակարգի տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի միջոցներով հետագա վերլուծության նպատակով վերլուծական տվյալների պահոցում վերբեռնելու համար տվյալների նախապատրաստում:

4.2.4.4. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է ներառի Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղեկատվական աջակցության համար նախատեսված ֆունկցիոնալ բաղադրիչ՝ տարբեր մակարդակների այն միջոցառումների պլանների կատարման տեսանելիացման, դիտանցման եւ հսկողության մասով, որոնք անցկացվում են նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգում, այդ թվում՝ հետեւյալ գործառույթների աջակցությամբ՝

1) հավաքած եւ մանրամասն տեսքով՝ միջոցառումների պլանների վերաբերյալ տեղեկատվության դիտում.

2) միջոցառումների պլանների կատարման հսկողություն.

3) հանձնարարականների ստեղծում եւ միջոցառումների պլանների կատարման վիճակի մասին տեղեկատվության փոփոխություն.

4) միջոցառումների պլանների կետերի հսկիչ ժամկետների լրանալու մասին ծանուցումների նախապատրաստում:

4.2.4.5. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի Միության ներքին շուկայի գործառման փոխադարձ հասանելիությունը խոչընդոտող արգելքների, ինչպես նաեւ ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի տեղաշարժի հետ կապված առգրավումների եւ սահմանափակումների հայտնաբերման ու վերացման

միջոցառումների պլանների կատարումը եւ հսկողությունը, այդ թվում՝ հետեւյալ գործառույթների աջակցությամբ՝

1) ներքին (Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումները) եւ արտաքին (պետական մարմիններ, գիտական համայնք, գործարար համայնք) աղբյուրներից խոչընդոտների մասին տեղեկատվության հավաքագրում.

2) հայտնաբերված խոչընդոտների համակարգում, առգրավումների նախնական ցանկի ձեւավորում.

3) առգրավումների նախնական ցանկում ներառված՝ արգելք, առգրավում կամ սահմանափակում հանդիսացող յուրաքանչյուր հայտնաբերված պետական տնտեսական կարգավորման միջոցի վերացման հնարավորության կամ հետագա կիրառման նպատակահարմարության վերլուծություն.

4) արգելքների, առգրավումների եւ սահմանափակումների վերացման կամ դրանց պահպանման միջոցները եւ ժամկետները հաշվի առնելը, այդ թվում՝ Միության իրավունքի մաս կազմող ակտերում ամրագրման միջոցով.

5) անդամ պետությունների մարմիններին եւ շահագրգիռ անձանց արգելքների, առգրավումների եւ սահմանափակումների համակարգման եւ վերացման արդյունքների մասին տեղեկացման ապահովում.

6) արգելքների, առգրավումների եւ սահմանափակումների համակարգման եւ վերացման դինամիկայի վերլուծության հնարավորությունն ապահովող հաշվետվական ձեւերի ձեւավորում:

4.2.4.6. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.4.7. Նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է

ԱՓԱԻՏՀ նախագծերի եւ ծրագրերի կառավարման ենթահամակարգի մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.5. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգին ներկայացվող պահանջներ

4.2.5.1. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը պետք է լինի ԱՓԱԻՏՀ ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացումը

4.2.5.2. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) առկա աղբյուրներից գոյություն ունեցող եւ հնարավոր ռիսկերի ոլորտների մասին տեղեկատվության հավաքագրում եւ կուտակում,

2) ռիսկերի ոլորտների նույնականացման, վերլուծության եւ դիտանցման գործիքի տրամադրում,

3) ռիսկերի ոլորտների սահմանման եւ փորձագիտական գնահատման համար գործիքի տրամադրում,

4) ռիսկերի առաջացման լուծման եւ (կամ) կանխարգելման միջոցառումների պլանների վարման գործիքի տրամադրում:

4.2.5.3. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.5.4. Ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է ԱՓԱԻՏՀ ռիսկերի ոլորտների վերլուծության ենթահամակարգի մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.6. Դատարանների գործավարության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.6.1. Դատարանների գործավարության ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.6.2. Դատարանների գործավարության ենթահամակարգը պետք է ապահովի վեճերի կարգավորման գործերով եւ պարզաբանման գործերով դատարանների գործավարության գործընթացների շրջանակներում կատարվող հետեւյալ խնդիրների տեխնոլոգիական աջակցությունը՝

1) տնտեսավարող սուբյեկտներից, լիազորված մարմիններից եւ անդամ պետության անունից Միության դատարան դիմելու լիազորություններով օժտված անդամ պետությունների կազմակերպություններից վեճի քննության վերաբերյալ դիմումների, պարզաբանման մասին դիմումների եւ միջնորդությունների ընդունումը,

2) Միության դատարանի կողմից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգին համապատասխան գործերի քննությունը (այսուհետ՝ Միության դատարանի կանոնակարգ).

3) Միության դատարանի կողմից գործերը քննելիս դատարանի մեծ կոլեգիայի դատական նիստի, դատարանի կոլեգիայի եւ դատարանի վերաքննիչ պալատի նիստերի անցկացումը.

4) Միության դատարանի կողմից գործերը քննելիս Միության դատարանի կողմից անդամ պետությունների փորձագետներից բաղկացած մասնագիտացված խմբերի ձեւավորումը եւ մասնագիտացված խմբերի կողմից եզրակացությունների նախապատրաստումը.

5) Միության դատարանի կողմից գործերը քննելիս տնտեսավարող սուբյեկտների, լիազորված մարմինների եւ անդամ պետությունների կազմակերպությունների, ինչպես նաեւ Միության այլ մարմինների հետ Միության դատարանի փոխգործակցությունը.

6) Միության դատարանի կանոնակարգով սահմանված ժամկետներում Միության դատարանի կողմից գործերի քննության արդյունքում դատական ակտերի նախապատրաստումը:

4.2.6.3. Դատարանների գործավարության ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) հիմնական գործառույթները՝

Միության դատարան ստացված դիմումները գրանցելը եւ հաշվառելը.

Միության դատարանի կողմից քննվող գործերը հաշվառելը.

գործին մասնակցող անձանց հաշվառելը.

Միության դատարանի կողմից գործը քննելու ընթացքում առաջացող դատական ակտերը, մասնագիտացված խմբերի եզրակացությունները եւ այլ փաստաթղթեր հաշվառելը.

դատական նիստերի անցկացման աջակցությունը,

գործերի քննության վիճակի եւ այդ վիճակների միջեւ անցումների կանոնները հաշվառելը.

Միության դատարանի կողմից վճիռների եւ որոշումների կայացման, մասնագիտացված խմբերի կողմից եզրակացությունների նախապատրաստման ժամկետների հսկողություն՝ Միության դատարանի կանոնակարգին համապատասխան.

ըստ գործերի եւ փաստաթղթերի՝ տեղեկատվության ատրիբուտիվ որոնում.

2) փաստաթղթերի հետ աշխատանքի գործառույթներ՝

ըստ ամբողջական տեքստի փաստաթղթի որոնում.

փաստաթղթի տարբերակայնության աջակցություն.

Միության դատարանի կողմից գործը քննելու արդյունքում հաշվետվության ձեւավորում.

3) վարչարարության գործառույթները՝

դատարանների գործավարության ենթահամակարգի տվյալների եւ գործառույթների նկատմամբ դատարանների գործավարության ենթահամակարգից օգտվողների հասանելիության իրավունքի սահմանազատում.

անդամ պետությունների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա մասնագիտացված խմբերի ձեւավորման համար փորձագետների ցուցակը վարելը:

4.2.6.4. Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ համակարգերի, ինչպես նաեւ ինտեգրված ենթահամակարգերի հետ դատարանների գործավարության ենթահամակարգի փոխգործակցությունը պետք է ապահովվի ինտեգրված հարթակի միջոցներով:

4.2.6.5. Միության դատարանի եւ լիազորված մարմինների միջեւ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների փոխանակումը պետք է իրականացվի ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում՝ ինտեգրված պլատֆորմի օգտագործմամբ:

4.2.6.6. Դատավարության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.6.7. Դատարանների գործավարության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.7. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.7.1. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.7.2.Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին ստացված դիմումների գրանցումը եւ պահպանումը.

2) ստացված դիմումի քննության արդյունքում կամ Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ սկսված քննության անցկացման գործընթացում առաջացող փաստաթղթերի եւ նյութերի հաշվառումը եւ կանոնակարգված պահպանումը.

3) դիմումների (քննություն սկսելու, դրա անցկացնելը մերժելու կամ դիմումը մերժելու մասին), փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում կայացվող որոշումների տեքստերի նախապատրաստում, որոնց համապատասխան ավարտվում է քննության անցկացումը (վերջնական եզրակացություններով զեկույց, միջոցներ կիրառելու կամ միջոցներ չկիրառելու մասին որոշում) եւ այլն.

4) քննություն անցկացնելու ընթացքում շահագրգիռ կողմերի հետ Հանձնաժողովի՝ էլեկտրոնային տեսքով տեղեկատվական փոխգործակցության ապահովումը.

5) Միության պաշտոնական կայքում քննությունը սկսելու մասին ծանուցումների եւ անցկացվող քննությունների վերաբերյալ այլ տեղեկությունների ավտոմատացված հրապարակումը.

6) դիմումների ուսումնասիրության եւ դրանց մասով որոշումների կայացման ժամկետների հսկողությունը:

4.2.7.3. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) փաստաթղթերի տարբեր տեսակների եւ տվյալների այլ տարրերի հաշվառումը եւ պահպանումը,

2) կամայական ձեւաչափերի ֆայլերի պահպանումը եւ դրանց հետ աշխատելը,

3) փաստաթղթերի տարբերակայնացման աջակցությունը,

4) փաստաթղթերի եւ տվյալների այլ տարրերի կենսական պարբերաշրջանները փոխդասավորելը եւ իրագործելը,

5) փաստաթղթերի եւ տվյալների այլ տարրերի հետ աշխատանքի բիզնես-գործընթացները փոխդասավորելը եւ իրագործելը,

6) փաստաթղթերի, ֆայլերի եւ տվյալների այլ տարրերի հետ օգտվողների կոլեկտիվ աշխատանքը կազմակերպելը,

7) տպագիր ձեւի փաստաթղթերի եւ տվյալների այլ տարրեր ձեւավորելը,

8) փաստաթղթերի եւ տվյալների այլ տարրեր ատրիբուտիվ եւ ամբողջական որոնելը,

9) հաշվետվություն ձեւավորելը,

10) մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգի տվյալների եւ գործառույթների նկատմամբ մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգից օգտվողների հասանելիության իրավունքները սահմանազատելը,

11) անձնական թղթապանակների, բաժանորդագրումների, անձնական որոնման հարցումների եւ այլ մեխանիզմների ստեղծման կամ օգտագործման միջոցով մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգի օգտվողի անձնական աշխատասենյակը կազմակերպելը,

12) ռուբրիկատորների եւ տվյալների միջեւ կապերի օգտագործմամբ տվյալների կանոնակարգված պահպանություն կազմակերպելը,

13) մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգից օգտվողներին մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգի իրադարձությունների եւ փաստաթղթերի վերաբերյալ կատարված գործողությունների մասին ծանուցելը, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով տեղեկացնելը:

4.2.7.4. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը պետք է ապահովի ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում առաջացող գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջների կատարումը:

4.2.7.5. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգը նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել Միության գործունեության այլ ոլորտներում անցկացվող քննությունների, այդ թվում՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման գործերով քննությունների մասով ավտոմատացված փաստաթղթաշրջանառության հետ կապված նույնանման խնդիրները:

4.2.7.6. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.7.7. Մասնագիտացված փաստաթղթաշրջանառության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.8. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.8.1. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.8.2. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ի, այդ թվում՝ դրանց ծանոթագրությունները եւ պարզաբանումներն էլեկտրոնային տեսքով պահպանելը եւ վարելը,

2) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ում փոփոխություններ կատարելու մասին լիազորված մարմինների հարցումները հաշվառելը, այդպիսի փոփոխություններ կատարելու տեխնիկական հնարավորությունները վերլուծելը,

3) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ում կատարվող փոփոխությունների պատմության եւ այն փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության պահպանումը, որոնց հիման վրա այդ փոփոխությունները կատարվել են,

4) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունն օպերատիվ ներկայացնելը՝ հաշվի առնելով բոլոր փոփոխությունների պատմությունը,

5) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի հետ կապված հետեւյալ տեղեկատվությունը պահպանելը եւ օգտագործելը՝

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի միջազգային բազայի փոփոխությունները,

Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը,

Համաշխարհային առեւտրային կազմակերպության շրջանակներում անդամ պետությունների սակագնային պարտավորությունները,

ապրանքային անվանացանկերի զանազան տարբերակների միջեւ անցումային աղյուսակները,

6) ապրանքների դասակարգման մասով որոշումների ժողովածուների, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից ընդունված՝ նորմատիվ փաստաթղթերին

հղումներով՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի համաձայն ապրանքների դասակարգման մասով որոշումների ժողովածուի եւ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ընդունված՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի համաձայն ապրանքների դասակարգման մասով նախնական որոշումների ժողովածուի վարումը.

7) մաքսասակագնային կարգավորման միջոցների հաշվառումը, ներառյալ՝

ԵԱՏՄ ՄՄՍ-ն.

ներմուծվող մաքսատուրքերի դրույքաչափերի վրա ազդեցություն գործող ապրանքային դիրքերի ցանկերը.

ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնք ազատվում են ներմուծման մաքսատուրքերի գանձումից.

ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնք ազատվում են ներմուծման մաքսատուրքերի գանձումից՝ նշելով ժամանակահատվածը, որի ընթացքում ապրանքը ազատվում է տուրքերի գանձումից.

ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնց նկատմամբ Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի սահմանում է սակագնային քվոտաներ, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածք ներմուծելու համար սակագնային քվոտաների ծավալներ.

զարգացող եւ առավել թույլ զարգացած երկրներից ծագած եւ ներմուծվող ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են սակագնային առանձնաշնորհումներ.

ապրանքային այն դիրքերի եւ դրույքաչափերի ցանկը, որոնց նկատմամբ անցումային շրջանի ընթացքում անդամ պետություններից մեկի կողմից կիրառվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դրույքաչափերից տարբերվող՝ ներմուծվող մաքսատուրքերի դրույքաչափեր.

«Զգայուն» ապրանքային դիրքերի ցանկը, որոնց համար ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխության մասին որոշումն ընդունում է Հանձնաժողովի խորհուրդը.

Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող զարգացող երկրների ցանկը,

Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող առավել թույլ զարգացած երկրների ցանկը,

Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող այն երկրների կազմակերպությունների ցանկը, որոնք լիազորված են տալու եւ վավերացնելու ապրանքի ծագման մասին սերտիֆիկատները,

8) ոչ սակագնային կարգավորման միջոցների հաշվառումը եւ վարումը, ներառյալ՝

ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ անդամ պետությունների առեւտրում կիրառվում են ներմուծման եւ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ,

Միության ներքին շուկայի համար էապես կարեւոր ապրանքային այն դիրքերի ցանկը, որոնց նկատմամբ բացառիկ դեպքերում կարող են սահմանվել արտահանման ժամանակավոր արգելքներ կամ սահմանափակումներ,

այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ Հանձնաժողովի կողմից ընդունված է լիցենզիա տալու մասին որոշում,

արտաքին առեւտրային գործունեության այն մասնակիցների ցանկը, որոնց տրված է ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք,

9) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում փոփոխություններ կատարելու մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի նախապատրաստումը,

10) արտաքին առեւտրային գործունեության մասնակիցներին տրված այն ապրանքների համար ներմուծման եւ (կամ) արտահանման լիցենզիաների ցանկի ձեւավորումը, որոնց նկատմամբ սահմանվել են ոչ սակագնային կարգավորման միջոցներ,

11) Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ տեղեկատվական համակարգերի, ինչպես նաեւ ինտեգրված համակարգի ենթահամակարգերի հետ փոխգործակցությունը, որը պետք է ապահովվի ինտեգրացիոն հարթակի օգտագործմամբ՝

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի հետ փոխգործակցության մեջ սակագնային եւ ոչ սակագնային միջոցների մասին ամբողջական եւ արդիական տեղեկատվությունն օպերատիվ տրամադրելու նպատակով,

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում կատարվող փոփոխությունների առնչությամբ՝ ապրանքների նկատմամբ սահմանված արգելքներում եւ սահմանափակումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվությունն օպերատիվ ստանալու նպատակով,

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում կատարված փոփոխությունների մասին անդամ պետությունների շահագրգիռ մարմիններին օպերատիվ տեղեկացնելու նպատակով,

շահագրգիռ անձանց հարցումներով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ի՝ արտաքին ձեւաչափերով ներբեռնելու հնարավորությամբ էլեկտրոնային տեսքով ճշգրտումները եւ արդիական տարբերակները տրամադրելու նպատակով,

12) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ի ձեւավորումը՝ տպարանական հրատարակման համար պատրաստի տեսքով:

4.2.8.3. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում փոփոխություններ կատարելիս մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը պետք է ապահովի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ այն ծածկագրերով դասակարգվող ապրանքների նկատմամբ պետական հսկողության տարբեր տեսակների կատարումը կանոնակարգող՝ Հանձնաժողովի փոփոխման ենթակա որոշումների վրա

հղումների ավտոմատացված հայտնաբերումը, որոնց համապատասխան պետք է ապահովվի այդպիսի որոշումների նոր խմբագրությունների ձեւավորման հնարավորությունը:

4.2.8.4. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգը պետք է ապահովի կատարվող փոփոխությունների պատմության պահպանմամբ տեղեկատվության վարումը, այդ թվում պետք է ապահովվի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ի զանազան տարբերակների աջակցությունը դրանց խմբագրման ընթացքում:

4.2.8.5. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգում պետք է իրագործվի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում եւ ԵԱՏՄ ՄՄՍ-ում տեղեկատվության որոնման համար միջերեսը:

4.2.8.6. ԵԱՏՄ ՄՄՍ-ում որոնելու համար միջերեսում պետք է արտացոլվի ԵԱՏՄ ՄՄՍ-ի վերջին թարմացման ամսաթիվը, ինչպես նաեւ պետք է ապահովվի նախկին ժամանակահատվածներում մաքսային սակագների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

4.2.8.7. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգում պետք է ապահովվի տվյալների հասանելիությունը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի կոնկրետ ապրանքային դիրքերի կտրվածքով:

4.2.8.8. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.8.9. Մաքսասակագնային եւ ոչ սակագնային ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.9. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.9.1. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգը ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.9.2. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգը պետք է ապահովի տվյալների բազաների, այդ թվում՝ հետեւյալ տեղեկատվական օբյեկտների հաշվառումը եւ վարումը՝

1) արտադրանք, որի նկատմամբ Միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ,

2) միասնական ձեւով համապատասխանության սերտիֆիկատների ու համապատասխանության հայտարարագրերի տրամադրմամբ՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանք,

3) արտադրանք, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատմանն առնչվող փաստաթղթի տրամադրմամբ,

4) տրված կամ ընդունված համապատասխանության գնահատման փաստաթղթերը (այդ թվում՝ տրված համապատասխանության սերտիֆիկատները, համապատասխանության գրանցված հայտարարագրերը, արտադրանքի գրանցման (պետական գրանցման) վկայականները),

5) Միության՝ համապատասխանության գնահատման մարմինների տվյալների բազաներ (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)),

6) Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման պլաններ,

7) Միության տեխնիկական կանոնակարգերը (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգեր), այդ թվում՝ Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերը,

8) Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերին առնչվող արձագանքներ,

9)Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակման եւ դրանց մեջ փոփոխությունների կատարման աշխատանքային խմբերի կազմերը,

10) միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների , իսկ դրանց բացակայության դեպքում՝ անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտների ցանկերը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջների պահպանումը,

11) Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջների կիրառման եւ կատարման եւ Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատման իրականացման համար անհրաժեշտ՝ միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները պարունակող անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտների ցանկերը, այդ թվում՝ նմուշառման կանոնները,

12) Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորների ցանկերը, ներառյալ՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) հետ դրանց հարաբերակցությունը,

13) Միության տեխնիկական կանոնակարգերը (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը) իրագործելու համար անհրաժեշտ միջոցառումների պլաններ,

14) միջպետական ստանդարտների մշակման ծրագրերը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի), ինչպես նաեւ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները պարունակող միջազգային ստանդարտների պահանջների պահպանումը, այդ թվում՝ նմուշառման կանոնները, որոնք անհրաժեշտ են Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջները կիրառելու եւ կատարելու եւ տեխնիակական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատականը (հաստատումը) իրականացնելու համար:

4.2.9.3. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում փոփոխություններ կատարելիս Տեխնիկական կարգավորման ենթահամակարգում պետք է ապահովվի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի օգտագործման հետ կապված նորմատիվ իրավական ակտերի (նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների) նախագծերի ավտոմատացված նախապատրաստման, վերլուծության, տեխնիկական կարգավորման ոլորտի հետ կապված նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության պլանավորման հնարավորությունը:

4.2.9.4. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգում պետք է իրագործվի որոնման գործառույթը բոլոր այն օբյեկտներում, որոնք ներառված են ենթահամակարգում:

4.2.9.5. Տեխնիկական կարգավորման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.9.6. Տեխնիակական կարգավորման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.10. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.10.1. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.10.2. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ներառի, Հանձնաժողովի կողմից մշակվող եւ հաստատվող համապատասխան տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանվող պահանջներին համապատասխան, Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործումն ապահովող ծառայությունների համալիր (այսուհետ՝ ընդհանուր գործընթացների ծառայություններ):

4.2.10.3. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ներառի կիրառական մակարդակով ինտեգրված համակարգի ընդհանուր գործընթացների իրագործման դիտանցումը եւ հսկողությունն ապահովող բաղադրիչները:

4.2.10.4. Ընդհանուր գործընթացների գործառումն ապահովելու նպատակով ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի այլ ենթահամակարգերի հետ փոխգործակցությունը՝ տեղեկատվություն ստանալու եւ (կամ) փոխանցելու, ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին հասանելիությունն ապահովելու համար:

4.2.10.5. Ընդհանուր գործընթացների ծառայությունները պետք է ապահովեն այդ թվում հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի համար նախատեսված՝ ազգային հատվածներից էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունումը.

2) ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանվող պահանջներին համապատասխան հետագայում մշակելու համար

նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների վարման ենթահամակարգ նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը.

3) ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանվող պահանջներին համապատասխան հրապարակելու համար Միության տեղեկատվական պորտալ նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը.

4) ազգային հատվածներում նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների, ռեեստրների եւ ռեգիստրների տարածումը.

5) ազգային հատվածների կողմից հարցմամբ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ենթահամակարգերից տեղեկատվության ստացումը:

4.2.10.6. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ներառի Հանձնաժողովի կողմից մշակվող եւ հաստատվող ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանվող պահանջներին համապատասխան ընդհանուր գործընթացների գործառնությունների բազային իրագործումն ապահովող միասնականացված բաղադրիչները (այսուհետ՝ ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչներ):

4.2.10.7. Ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչները նախատեսված են ինտեգրված համակարգի համալիր եւ միջպետական թեստավորման եւ փորձարկումների ժամանակ օգտագործման համար եւ անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել ազգային հատվածներում ընդհանուր գործընթացների ծառայություններն իրագործելիս:

4.2.10.8. Ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչներն ընդհանուր գործընթացների իրագործման համար պետք է ապահովեն գործառույթների անհրաժեշտ հավաքածու, ներառյալ՝

1) ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան տեղեկատվության մուտքագրում, խմբագրում եւ դիտում.

2) ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան մուտքագրվող տեղեկատվության ձեւաչափատրամաբանական հսկողության կատարում.

3) մուտքագրված տեղեկատվության երկարաժամկետ պահում.

4) պահվող տեղեկատվության հիման վրա՝ տպագրական ձեւերի նախապես սահմանված հավաքածուի ձեւավորման հնարավորություն.

5) ինտեգրացիոն հարթակի միջոցներով ընդհանուր գործընթացների ծառայությունների հետ փոխգործակցություն:

4.2.10.9. Ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչներից օգտվողների միջերեսները պետք է ապահովեն ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հնարավորությունը՝ ազգային հատվածներում ընդհանուր գործընթացների ծառայությունների իրագործման համար դրանք որպես հիմք օգտագործելու դեպքում:

4.2.10.10. Ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչները պետք է ապահովեն ինտեգրացիոն հարթակի միջոցներով էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունման եւ ուղարկման հնարավորությունը՝ ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4.2.10.11. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի օգտվողների միջերեսի օգնությամբ մուտքագրված կամ ընդհանուր գործընթացների ծառայություններից ստացված տեղեկատվության որոնման եւ դիտման հնարավորությունը:

4.2.10.12. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի օգտվողների միջերեսի օգնությամբ մուտքագրված կամ

ընդհանուր գործընթացների ծառայություններից ստացված տվյալների հիման վրա էլեկտրոնային փաստաթղթերի տպագրական ձեւերի ձեւավորման հնարավորությունը:

4.2.10.13. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի այդ ենթահամակարգի կողմից մշակվող տվյալների վրա ՎԵԿ-ի տեղադրման եւ ստուգման գործառույթն իրականացնող արտաքին բաղադրիչների միացման հնարավորությունը:

4.2.10.14. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի ընդհանուր գործընթացների ծառայություններից (ընդհանուր գործընթացների ծառայություններ) հաղորդագրությունների ստացման եւ ուղարկման համար ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղուն միանալը՝ ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան:

4.2.10.15. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգը պետք է օգտագործի նորմատիվ-տեղեկատվական եւ այլ տեղեկություններ, որոնք ստացվում են ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներից ինտեգրացիոն պլատֆորմի միջոցներով:

4.2.10.16. Այն ընդհանուր գործընթացների ցանկը, որոնց համար ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգում մշակվում են ընդհանուր գործընթացների բազային իրագործման բաղադրիչները, պետք է սահմանվի ինտեգրված համակարգի ընդհանուր համակարգային նախագծման փուլում:

4.2.10.17. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.10.18. Ընդհանուր գործընթացների կառավարման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.11. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.11.1. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը ԱՓԱԻՏՀ ենթահամակարգի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.11.2. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը նախատեսված է Միության մաքսային տարածքում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների՝ ստեղծվող նույնականացման միասնական համակարգի տեղեկատվական-տեխնոլոգիական աջակցության համար:

4.2.11.3. Միության մաքսային տարածքում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների նույնականացման միասնական համակարգը ստեղծվում է հետեւյալ նպատակներով՝

1) Միության շրջանակներում շահագրգիռ անձանց եզակի նույնականացման ապահովում (այդ թվում՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիների).

2) արտադրանքի մատակարարման ամբողջ շղթայի վերլուծության հնարավորություն ստեղծելու հաշվին ալգորիթմների օպտիմալացում եւ անդամ պետություններում կիրառվող ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացում.

3) մաքսային նպատակներով օգտագործվող փաստաթղթերի ձեւերի, դրանց էլեկտրոնային պատճենների կառուցվածքների եւ ձեւաչափերի պարզեցում, ինչպես նաեւ դրանցում պարունակվող տեղեկությունների հավաստիության բարձրացում.

4) անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջեւ տեղեկատվական փոխգործակցության օպտիմալացում:

4.2.11.4. Միության մաքսային տարածքում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների նույնականացման միասնական համակարգը ստեղծվում է՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները՝

1) արտաքին տնտեսական գործունեության յուրաքանչյուր մասնակցի պետք է տրամադրվի արտաքին տնտեսական գործունեության մասնակցի եզակի նույնականացման համար (այսուհետ՝ նույնականացման համար),

2) նույնականացման համարի տրամադրումը, նույնականացման համարների տվյալների բազայի հաշվառումը եւ վարումն իրականացնում են անդամ պետությունների լիազորված մարմինները,

3) տրված, կասեցված եւ չեղարկված նույնականացման համարների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ինտեգրված տեղեկատվական ռեսուրսի վարումն իրականացնում է Հանձնաժողովը,

4) տրամադրված նույնականացման համարը պետք է օգտագործվի մաքսային այն փաստաթղթերի բոլոր ձեւերում, որոնք օգտագործվում են անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության ժամանակ:

4.2.11.5. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգը պետք է կառուցվի որպես անդամ պետությունների ազգային բաղադրիչների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն բաղադրիչի փոխգործակցող ամբողջություն:

4.2.11.6. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգի անդամ պետությունների ազգային բաղադրիչները պետք է ապահովեն արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտներին միասնականացված ձեւաչափով նույնականացման համարների տրամադրումը, այդպիսի նույնականացման համարների բազաների տվյալների հաշվառումը եւ վարումը:

4.2.11.7. Հանձնաժողովի՝ արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգի ինտեգրացիոն բաղադրիչը պետք է ապահովի արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտներին տրամադրված (կասեցված, չեղարկված) նույնականացման համարների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ընդհանուր տեղեկատվական ռեսուրսի վարումը եւ լիազորված մարմիններին ու շահագրգիռ անձանց նշված ընդհանուր տեղեկատվական ռեսուրսին կանոնակարգված հասանելիությունը:

4.2.11.8. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.11.9. Արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.12. Ինտեգրացիոն հարթակին ներկայացվող պահանջները

4.2.12.1. Ինտեգրացիոն անցուղիներին ներկայացվող պահանջները

4.2.12.1.1. Ինտեգրացիոն անցուղին պետք է ապահովի Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միջեւ տվյալների էլեկտրոնային փոխանակությունը:

4.2.12.1.2 Ինտեգրացիոն անցուղին պետք է հնարավորություն ընձեռի Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերին՝ միանալու ինտեգրացիոն հարթակին, եւ ապահովի էլեկտրոնային հաղորդագրությունների հաղորդակարգերի եւ ձեւաչափերի վերափոխումը (անհրաժեշտության դեպքում):

4.2.12.1.3. Ինտեգրացիոն անցուղին պետք է ապահովի Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացվող էլեկտրոնային հաղորդագրությունների՝ հարակից հատվածների ինտեգրացիոն անցուղիներում մարշրուտիզացիան:

4.2.12.1.4. Հանձնաժողովի եւ ազգային հատվածի ինտեգրացիոն հատվածի ինտեգրացիոն անցուղին պետք է ապահովի հարակից հատվածների ինտեգրացիոն անցուղիների հետ տեղեկատվական փոխգործակցությունը:

4.2.12.1.5. Ինտեգրացիոն անցուղին պետք է ապահովի հարակից հատվածների ինտեգրացիոն անցուղիներից ստացվող էլեկտրոնային հաղորդագրությունների մարշրուտիզացիան Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերում:

4.2.12.1.6. Էլեկտրոնային փաստաթղթերում ԷԹՍ-ի իսկությունը հաստատելու համար ինտեգրացիոն անցուղին պետք է ապահովի ՎԵԿ ծառայությունների հետ ՎԵԿ ստորաբաժանման փոխգործակցությունը:

4.2.12.1.7. Ինտեգրացիոն անցուղին պետք է իրականացնի այդ անցուղու կողմից կատարվող գործառնությունների գրանցամատյանների վարումը:

4.2.12.1.8. Ինտեգրացիոն անցուղուն ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.12.2. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.12.2.1. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում զետեղված՝ Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի տեղեկատվական փոխգործակցությունը:

4.2.12.2.2. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի կողմից տրամադրվող գործառույթների կանչի կամ Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերում պարունակվող տվյալներին հասանելիության հնարավորությունն ապահովող ծրագրային միջերեսների (ծառայությունների) տրամադրումը:

4.2.12.2.3. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերում դեպի ծառայությունների դիմումների մարշրուտիզացիան:

4.2.12.2.4. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգը պետք է իրականացնի այդ ենթահամակարգի միջոցներով կատարվող գործառնությունների գրանցամատյանների վարումը:

4.2.12.2.5. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգը պետք է ապահովի դիմելու համար հասանելի ծառայությունների ցանկի վարումը՝ այդ ծառայություններում տեղեկատվության որոնման եւ դիտման հնարավորությամբ:

4.2.12.2.6. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.12.2.7. Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տվյալների սինխրոնացման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.12.3. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.12.3.1. Ինտեգրացիոն հարթակը պետք է ապահովի արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգի օգտագործմամբ արտաքին տեղեկատվական համակարգերի միացման հնարավորությունը:

4.2.12.3.2. Ինտեգրացիոն համակարգի ենթահամակարգերին դիմելու համար արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է ապահովի ծառայությունների տրամադրումը:

4.2.12.3.3. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերի կողմից տրամադրվող գործառույթների համալիրի ընդլայնման ժամանակ ինտեգրված համակարգի ենթահամակարգերին դիմելու համար արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է ապահովի ծառայությունների ցանկի ընդլայնման հնարավորություն:

4.2.12.3.4. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերին դիմելու համար արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է ապահովի հասանելի ծառայությունների ցանկի վարումը՝ այդ ծառայություններում տեղեկատվության որոնման եւ դիտման հնարավորությամբ:

4.2.12.3.5. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է ապահովի ծառայություններին հասանելիության իրավունքների սահմանազատումը:

4.2.12.3.6. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է իրականացնի արտաքին տեղեկատվական համակարգերից ստացվող հարցումների ճգգրտության հսկողություն, ներառյալ՝ ստացվող հարցումների ձեւաչափատրամաբանական հսկողությունը:

4.2.12.3.7. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է իրականացնի ստացվող հարցումների մարշրուտիզացիան ինտեգրացիոն հարթակի համապատասխան ծառայություններին:

4.2.12.3.8. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը պետք է իրականացնի ինտեգրացիոն հարթակի ծառայություններ կատարվող հարցումների գրանցամատյանների վարումը:

4.2.12.3.9. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են հստակեցվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.12.3.10. Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.12.4. Տրանսպորտային ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.12.4.1. Տրանսպորտային ենթահամակարգը պետք է ապահովի ինտեգրացիոն հարթակի բաղադրիչների միջեւ էլեկտրոնային հաղորդագրությունների երաշխավորված առաքումը՝ օգտագործելով հաղորդագրությունների հերթերը:

4.2.12.4.2. Տրանսպորտային ենթահամակարգը պետք է տրամադրի հաղորդագրությունների հերթերի հավաքածու՝ ինտեգրացիոն հարթակի, հարակից համակարգերի եւ ինտեգրված համակարգի ենթահամակարգերի բաղադրիչներից յուրաքանչյուրի համար, որոնք միանում են ինտեգրացիոն հարթակին՝ օգտագործելով հաղորդագրությունների հերթերը:

4.2.12.4.3. Տրանսպորտային ենթահամակարգը պետք է տրամադրի հաղորդագրությունների, ինչպես նաեւ էլեկտրոնային հաղորդագրությունների երաշխավորված առաքումն ապահովող տրանսպորտային ենթահամակարգի այլ օբյեկտների հերթեր ստեղծելու, ձեւափոխելու եւ ջնջելու հնարավորություն:

4.2.12.4.4. Տրանսպորտային ենթահամակարգը պետք է ապահովի տրանսպորտային մակարդակով ինտեգրացիոն հարթակի բաղադրիչների միջեւ էլեկտրոնային հաղորդագրությունների մարշրուտիզացիան:

4.2.12.4.5. Տրանսպորտային ենթահամակարգը պետք է ապահովի փոխանցվող էլեկտրոնային հաղորդագրությունների սեղմվածությունը՝ տվյալների փոխանցման կապուղիների օգտագործումն օպտիմալացնելու համար:

4.2.12.4.6. Տրանսպորտային ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.12.4.7. Տրանսպորտային ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.13. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.13.1. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է լինի որպես ԱՓԱԻՏՀ նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացում:

4.2.13.2. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի Միության այն նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունները, դասակարգիչները, ռեեստրները եւ ռեգիստրները պարունակող օբյեկտների վարումը, որոնք օգտագործվում են ընդհանուր գործընթացների նախագծման փուլում սահմանվող՝ ընդհանուր գործընթացների ցանկի իրագործման շրջանակներում (այսուհետ՝ նորմատիվ-տեղեկատվական տեղեկության օբյեկտներ):

4.2.13.3. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտները կենտրոնացված եւ ապակենտրոնացված վարելու եւ տարածելու հնարավորությունը:

4.2.13.4. Ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ համատեղ օգտագործվող նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտը կենտրոնացված վարելու դեպքում նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է լինի այդ օբյեկտի

տեղեկատու տվյալների սկզբնաղբյուրը Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի համար:

4.2.13.5. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտները կենտրոնացված վարելու դեպքում նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտների նոր գրառումների ստեղծում եւ գոյություն ունեցող գրառումների փոփոխություն.

2) նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտների գրառումների ամբողջականության, լիարժեքության եւ ճշգրտության հսկողություն.

3) նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտների նոր տարբերակների թողարկման եւ նախորդող ժամանակահատվածում դրանց պահուստային պահպանման գործընթացի կառավարում:

4.2.13.6. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտները ապակենտրոնացված վարելու դեպքում նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի նորմատիվ-տեղեկատվական տեղեկության օբյեկտների անջատ տեղեկագրքերի միավորման գործառույթի իրականացումը՝ իրագործելով այն տվյալների միաձուլման համալիր ընթացակարգերը, որոնք ստացվում են լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից:

4.2.13.7. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտների տվյալների տարածումը՝ ինտեգրված համակարգի այլ ենթահամակարգերում եւ ազգային հատվածում ինտեգրացիոն հարթակի օգտագործմամբ:

4.2.13.8. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը պետք է ապահովի Միության

տեղեկատվական պորտալում նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների օբյեկտների հրապարակման հնարավորությունը:

4.2.13.9. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.13.10. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է ԱՓԱԻՏՀ նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգի համար մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.14. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.14.1. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը պետք է լինի որպես ԱՓԱԻՏՀ տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացում:

4.2.14.2. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը, կախված տեղեկատվության անվտանգության վտանգներից, տեղեկատվության անվտանգությունը խախտողի մոդելից, պաշտպանության օբյեկտների կազմից, տեղեկատվական տեխնոլոգիաներից եւ ինտեգրված համակարգի կառուցվածքային-գործառական բնութագրերից, պետք է ապահովի հետեւյալ խնդիրների կատարումը՝

1) հասանելիության սուբյեկտների եւ հասանելիության օբյեկտների նույնականացում եւ իսկորոշում.

2) հասանելիության օբյեկտներին հասանելիության սուբյեկտների հասանելիության կառավարում.

3) նույնացուցիչների եւ իսկորոշման միջոցների կառավարում.

4) տեղեկատվության հակավիրուսային պաշտպանություն.

5) տեղեկատվության մեքենայական կրիչների պաշտպանություն.

6) անվտանգության իրադարձությունների գրանցում.

7) ցանցային մակարդակով եւ սերվերների ու աշխատակայանների մակարդակով ներխուժումների բացահայտում (կանխում).

8) տեղեկատվության պաշտպանվածության հսկողություն (վերլուծություն).

9) սահմանափակ տարածման տեղեկատվության եւ տեղեկատվության պաշտպանության միջոցների՝ չարտոնված մուտքից պաշտպանություն.

10) ինտեգրված համակարգի եւ այդ համակարգում ընդգրկված տեղեկատվության ամբողջականության ապահովում.

11) տեղեկատվության հասանելիության ապահովում.

12) վիրտուալացման միջավայրերի պաշտպանություն.

13) վեբ-հավելումների պաշտպանություն.

14) տեխնիկական միջոցների պաշտպանություն.

15) ինտեգրված համակարգի եւ դրա միջոցների պաշտպանություն.

16) կապի եւ տվյալների փոխանցման համակարգերի պաշտպանություն.

17) տվյալների բազաների կառավարման միջոցների պաշտպանություն:

4.2.14.3. Ինտեգրված համակարգի ստեղծման աշխատանքների շրջանակներում պետք է կատարվի ԱՓԱԻՏՀ շրջանակներում իրագործված տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի հետեւյալ բաղադրիչների կազմաձեւում՝

1) հասանելիության սուբյեկտների եւ հասանելիության օբյեկտների նույնականացման եւ իսկորոշման ենթահամակարգ.

2) հասանելիության օբյեկտներին հասանելիության սուբյեկտների հասանելիության կառավարման ենթահամակարգ.

3) ծրագրային միջավայրի սահմանափակման ենթահամակարգ.

4) տեղեկատվության մեքենայական կրիչների պաշտպանության ենթահամակարգ.

5) տեղեկատվական անվտանգության իրադարձությունների գրանցման ենթահամակարգ.

6) հակավիրուսային պաշտանության ենթակամակարգ.

7) ներխուժումների բացահայտման ենթահամակարգ.

8) տեղեկատվության պաշտպանվածության հսկողության (վերլուծության) ենթահամակարգ.

9) տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվության ամբողջականության ապահովման ենթահամակարգ.

10) տեղեկատվության հասանելիության ապահովման ենթահամակարգ.

11) տեխնիկական միջոցների պաշտպանության ենթահամակարգ.

12) տեղեկատվական համակարգի, դրա միջոցների, կապի եւ տվյալների փոխանցման համակարգերի պաշտպանության ենթահամակարգ.

13) անձնակազմի հետ աշխատանքի ենթահամակարգ:

4.2.14.4. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի շրջանակներում պետք է իրագործվի հասանելիության սուբյեկտների եւ հասանելիության օբյեկտների նույնականացման եւ իսկորոշման ենթահամակարգի տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնում՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ֆունկցիոնալ ենթահամակարգերից օգտվողների նույնականացման տվյալների կառավարման մասով, ներառյալ՝

1) օգտվողների բազայի կենտրոնացված վարումը.

2) օգտվողների նույնականացուցիչների կենսական ցիկլի կառավարման ավտոմատացումը, այդ թվում՝ տեղեկատվության հաշվառման եւ Հանձնաժողովի հաստիքային կազմի կառավարման իրադարձությունների հիման վրա.

3) օգտվողների հասանելիության իրավունքների կենտրոնացված կառավարումը.

4) օգտվողների հայտերի համաձայնեցման ավտոմատացումը՝ հասանելիության իրավունքների տրամադրման համար.

5) օգտվողների հասանելիության լիազորությունների աուդիտը կանոնավոր ժամանակահատվածներ անց.

6) օգտվողներին հասանելիություն տրամադրելու իրադարձությունների աուդիտը:

4.2.14.5. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի շրջանակներում պետք է իրագործվի տեղեկատվական անվտանգության իրադարձությունների գրանցման ենթահամակարգի տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնում՝ ինտեգրացիոն հարթակի բոլոր բաղադրիչների (այդ թվում՝ ազգային հատվածների ինտեգրացիոն անցուղիների) տեղեկատվական անվտանգության իրադարձությունների վերաբերյալ տվյալների ավտոմատ հավաքման ապահովման մասով, ներառյալ՝ չընդհատվող կենտրոնացված դիտանցումը, հավաքված տվյալների համահարաբերակցությունը եւ տեղեկատվական անվտանգության միջադեպերի բացահայտումը:

4.2.14.6. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի շրջանակներում պետք է իրագործվի տեղեկատվության գաղտնագրային պաշտպանության ենթահամակարգը:

4.2.14.7. Տեղեկատվության գաղտնագրային պաշտպանության ենթահամակարգը պետք է ապահովի գաղտնագրային գործառնությունների կատարումը, առանցքային տեղեկատվության, բաց բանալիների սերտիֆիկատների եւ առանցքային կրիչների կառավարումը:

4.2.14.8. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգի շրջանակներում պետք է մշակվեն փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են ինտեգրված համակարգի տեղեկատվական անվտանգության կառավարումը, ներառյալ՝

1) տեղեկատվական անվտանգության ոլորտում կազմակերպչական կառուցվածքի, գործառույթների, պարտականությունների եւ լիազորությունների սահմանումը.

2) տեղեկատվական անվտանգության ռիսկերի կանոնավոր վերլուծության անցկացումը.

3) տեղեկատվական անվտանգության շտկող գործողությունների կառավարումը.

4) տեղեկատվական անվտանգության միջադեպերի կառավարումը.

5) տեղեկատվական անվտանգության ներքին աուդիտի կառավարումը.

6) տեղեկատվական անվտանգության գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը (արդյունավետության գնահատմամբ).

7) տեղեկատվական անվտանգության վիճակի կանոնավոր վերլուծությունը:

4.2.14.9. Ինտեգրված համակարգում տեղեկատվության պաշտպանությունը պետք է ապահովվի վստահության անդրսահմանային տարածքի ստեղծման, զարգացման եւ գործունեության այն պահանջներին համապատասխան, որոնք մշակվում են Հանձնաժողովի կողմից լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ եւ հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ Պայմանագրի թիվ 3 հավելվածի 18-րդ կետի եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն:

4.2.14.10. Անդամ պետությունների ՎԵԿ-ի՝ միմյանց միջեւ եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի հետ այն փոխգործակցության ժամանակ, որն

իրականացվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված եւ ստորագրությամբ կամ ստորագրությամբ եւ կնիքով վավերացված՝ թղթային կրիչով համանման փաստաթղթերին ըստ իրավաբանական ուժի հավասարազոր ճանաչվող էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակումն ապահովելու համար, անհրաժեշտ է օգտագործել ԷԹՍ-ի միջոցները եւ ծածկագրման գաղտնագրային միջոցները, որոնք համաձայնեցվել են լիազորված մարմինների կողմից եւ հաստատվում են այդ նպատակների համար Հանձնաժողովի կողմից: Սույն տեխնիկական առաջադրանքին համապատասխան՝ աշխատանքների կատարման ժամանակ պետք է դիտարկվի անդամ պետությունների կողմից ԷԹՍ-ի միջոցների եւ ծածկագրման գաղտնագրային միջոցների համատեղ մշակման կազմակերպման հնարավորությունը:

4.2.14.11. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.14.12. Տեղեկատվական անվտանգության ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.15. Հանձնաժողովի ՎԵԿ ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.15.1. ՎԵԿ-ի ենթահամակարգն ԱՓԱԻՏՀ ենթահամակարգերի կազմի նկատմամբ ինտեգրված համակարգի նոր ենթահամակարգ է:

4.2.15.2. Հանձնաժողովի ՎԵԿ ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը, այդ թվում՝ վստահության անդրսահմանային տարածքի ստեղծման, զարգացման եւ գործունեության այն պահանջներին համապատասխան, որոնք մշակվում են Հանձնաժողովի կողմից լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ եւ հաստատվում են

Հանձնաժողովի կողմից՝ Պայմանագրի թիվ 3 հավելվածի 18-րդ կետի եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն՝

1) էլեկտրոնային փաստաթղթի եւ ԷԹՍ-ի իսկության ստուգումը.

2) էլեկտրոնային փաստաթղթի ամբողջականության ստուգումը.

3) ԷԹՍ-ի վավերականության ճանաչումը, որով ստորագրված է էլեկտրոնային փաստաթուղթը, որը ծագում է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում, այդ թվում՝ այդ էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրելուց հետո դրա մեջ ներառված փոփոխությունների բացակայության հաստատումը եւ ԷԹՍ-ի ստուգման բանալու համապատասխան՝ սերտիֆիկատը տիրապետողին այն ԷԹՍ-ի պատկանելիության հաստատումը, որով ստորագրված է այդ էլեկտրոնային փաստաթուղթը.

4) անդամ պետության ազգային հատվածի ՎԵԿ-ի ԷԹՍ-ի վավերականության ճանաչումը, որով ստորագրված է Հանձնաժողովի ազգային հատվածում ներառվող էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքը, այդ թվում՝ ստուգման այդ արդյունքը ստորագրելուց հետո դրա մեջ ներառված փոփոխությունների բացակայության հաստատումը եւ ԷԹՍ-ի ստուգման բանալու համապատասխան՝ սերտիֆիկատը տիրապետողին այն ԷԹՍ-ի պատկանելիության հաստատումը, որով ստորագրված է ստուգման այդ արդյունքը.

5) Հանձնաժողովի ՎԵԿ-ի կողմից Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում ծագող էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքի այն ԷԹՍ-ով ստորագրումը, որը հիմնված է ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից Հանձնաժողովի ՎԵԿ-ին տրված ԷԹՍ-ի ստուգման բանալու սերտիֆիկատի վրա.

6) Հանձնաժողովի ՎԵԿ-ի կողմից Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում ներառված էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքի

այն ԷԹՍ-ով ստորագրումը, որը հիմնված է Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից Հանձնաժողովի ՎԵԿ-ին տրված ԷԹՍ-ի ստուգման բանալու սերտիֆիկատի վրա.

7) ԷԹՍ-ի կիրառման իրավաչափության ստուգումը.

8) այն անդորրագրերի ձեւավորումը, որոնք պարունակում են էլեկտրոնային փաստաթղթերի եւ ԷԹՍ-ի ստուգման արդյունքները.

9) Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգի կողմից կատարվող գործառնությունների փաստաթղթավորումը.

10) Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ տեղեկատվական անվտանգության ոլորտում լիազորված մարմինների պահանջով Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգի գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

11) այլ գործառույթներ, որոնք սահմանվում են ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում՝ սույն տեխնիկական առաջադրանքի 4.2.15.4 կետին համապատասխան:

Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգի կողմից անցկացվող ստուգումները, ինչպես նաեւ այդ ստուգումների արդյունքներն արտացոլող անդորրագրերի ձեւավորումն իրականացվում են «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ ու Եվրասիական տնտեսական հաձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ընթացքում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման մասին» հիմնադրույթին համապատասխան:

4.2.15.3. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգը պետք է նախագծված լինի այնպես, որ ապահովվի դրա զարգացման եւ որպես ազգային հատվածի ՎԵԿ-ի հիմնական բաղադրիչի օգտագործման հնարավորությունը (անհրաժեշտության դեպքում):

4.2.15.4. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.15.5. Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ:

4.2.16. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.16.1. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է լինի որպես ԱՓԱԻՏՀ դիտանցման եւ կառավարման ենթահամակարգի ֆունկցիոնալ զարգացում:

4.2.16.2. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում բացված ենթահամակարգերի ապարատի ապահովման գործունեության հիմնական ցուցանիշների հավաքագրումը, պահպանումը եւ հսկողությունը, ներառյալ՝ արտադրողականության ցուցանիշները, առաջացող բացառիկ իրավիճակները եւ այլ տեղեկատվություն.

2) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում բացված ենթահամակարգերի համակարգային եւ կիրառական ծրագրային ապահովման գործունեության հիմնական ցուցանիշների հավաքագրումը, պահպանումը եւ հսկողությունը, ներառյալ՝ արտադրողականության ցուցանիշները, առաջացող բացառիկ իրավիճակները եւ այլ տեղեկատվություն.

3) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում բացված ենթահամակարգերի ապարատի ապահովումից, համակարգային եւ կիրառական ծրագրային ապահովումից ախտորոշիչ տեղեկատվության հավաքագրումը եւ համախմբումը.

4) այն իրադարձությունների եւ բացառիկ իրավիճակների մշակումը, որոնք առաջանում են Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում բացված ենթահամակարգերի ապարատի ապահովման, համակարգային եւ կիրառական ծրագրային ապահովման մեջ՝ կարգավորվող կանոններին համապատասխան:

5) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շահագործման համար պատասխանատու անձնակազմի համար բացառիկ իրավիճակներին արձագանքելու անհրաժեշտ կանոնակարգման միջոցառումների եւ հակազդման միջոցների մասով առաջարկությունների ձեւավորումը.

6) ինտեգրված համակարգի բաղադրիչների փոխդասավորության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը եւ փաստաթղթավորումը.

7) ինտեգրված համակարգի բաղադրիչների վերաբերյալ կոնսոլիդացված տեղեկատվության արտացոլումը.

8) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում բացված ենթահամակարգերի ապարատի ապահովման, համակարգային եւ կիրառական ծրագրային ապահովման փոխդասավորության կենտրոնացված կառավարումը:

4.2.16.3. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.16.4. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքի մեջ, որը մշակվում է ԱՓԱԻՏՀ դիտանցման եւ կառավարման ենթահամակարգի մասնավոր տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

4.2.17. ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնին ներկայացվող պահանջները

4.2.17.1. ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը նախատեսված է ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների կառավարման այն հիերարխիկ համակարգի կառուցման համար, որն ապահովում է անդամ պետությունների ՎԵԿ-ի ծառայությունների եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի ենթահամակարգի փոխգործակցությունն ինտեգրված համակարգի ՎԵԿ ծառայության շրջանակներում:

4.2.17.2. ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) անդամ պետությունների ՎԵԿ-ի եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի գրանցումը.

2) անդամ պետությունների ՎԵԿ-ի եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի ԷԹՍ բանալիների սերտիֆիկատների թողարկումը (ստեղծումը).

3) անդամ պետությունների ՎԵԿ-ի եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի ԷԹՍ բանալիների սերտիֆիկատների տարածումը (տրամադրումը).

4) անդամ պետությունների ՎԵԿ-ի, Հանձնաժողովի ՎԵԿ-ի կողմից ԷԹՍ այն բանալու տիրապետման հաստատումը, որը համապատասխանում է ԷԹՍ-ի ստուգման բանալու սերտիֆիկատը ստանալու համար նշված ԷԹՍ ստուգման բանալուն:

5) ԷԹՍ բանալիների թողարկված սերտիֆիկատների հետկանչի կառավարումը.

6) ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների գործողության ժամկետի սահմանումը.

7) ԷԹՍ-ի ստուգման բանալիների տրված սերտիֆիկատների չեղյալ ճանաչումը.

8) ԷԹՍ բանալիների թողարկված սերտիֆիկատների պահպանումը.

9) ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրի վարումը, այդ թվում՝ ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատներում ներառվող տեղեկատվությունն ու ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների գործողությունը դադարեցնելու կամ չեղյալ համարելու ամսաթվի եւ նման դադարեցման կամ չեղյալ ճանաչելու հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունն ընդգրկող ռեեստրի վարումը.

10) ԷԹՍ բանալիների արդիական սերտիֆիկատների, ԷԹՍ բանալիների հետ կանչված սերտիֆիկատների ռեեստրների վարումը.

11) անդամ պետությունների ՎԵԿ-ի եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի օպերատորներին ԷԹՍ միջոցների տրամադրումը.

12) ցանկացած ժամանակ ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրի անհատույց հասանելիության ապահովումը՝ անդամ պետությունների ՎԵԿ-ի եւ Հանձնաժողովի ՎԵԿ-ի ինտեգրված համակարգի օգտագործմամբ.

13) ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրում ԷԹՍ ստուգման բանալիների եզակիության ստուգումը.

14) տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների կառավարման հետ կապված այլ գործունեության իրականացումը:

4.2.17.3. ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնը պետք է ստեղծված լինի բաց բանալիների ենթակառուցվածքի (Public Key Infrastructure) հիման վրա՝ X.509 Public Key Infrastructure-ի առաջարկություններին համապատասխան, եւ օգտագործի այդ նպատակների համար Հանձնաժողովի կողմից հաստատվող ԷԹՍ համաձայնեցված գաղտնագրային ստանդարտները եւ հեշավորման գործառույթի համաձայնեցված գաղտնագրային ստանդարտները:

4.2.17.4. ՎԵԿ ծառայության հավաստագրման կենտրոնը պետք է օգտագործի միայն լիազորված մարմինների հետ համաձայնեցված եւ այդ նպատակների համար Հանձնաժողովի կողմից հաստատված ԷԹՍ միջոցները եւ հավաստագրման կենտրոնի միջոցները: Սույն տեխնիկական առաջադրանքին համապատասխան աշխատանքների կատարման ժամանակ պետք է քննարկվի անդամ պետությունների կողմից ԷԹՍ միջոցների եւ հավաստագրման կենտրոնի միջոցների համատեղ մշակման կազմակերպման հնարավորությունը՝ ինտեգրված համակարգի ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնում հետագա օգտագործման համար:

4.2.18. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնին ներկայացվող պահանջները

4.2.18.1. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը նախատեսված է Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին, պաշտոնատար անձանց եւ Հանձնաժողովի անձնակազմին էլեկտրոնային փաստաթղթերի ստորագրման համար ԷԹՍ բանալիների սերտիֆիկատներով ապահովելու համար:

4.2.18.2. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ստեղծումը եւ այն ստանալու համար դիմած Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին, պաշտոնատար անձանց եւ Հանձնաժողովի աշխատակիցներին նման սերտիֆիկատների տրամադրումը (այսուհետ սույն կետում՝ հայտատուներ).

2) հայտատուի կողմից ԷԹՍ այն բանալու տիրապետման հաստատումը, որը համապատասխանում է ԷԹՍ ստուգման բանալու սերտիֆիկատը ստանալու համար նշված ԷԹՍ ստուգման բանալուն.

3) ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների գործողության ժամկետի սահմանումը.

4) ԷԹՍ ստուգման բանալիների տրված սերտիֆիկատների չեղյալ ճանաչումը.

5) հայտատուի դիմումով ԷԹՍ այն միջոցների տրամադրում, որոնք ընդգրկում են ԷԹՍ բանալի եւ ԷԹՍ ստուգման բանալի (այդ թվում՝ Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից ստեղծված) կամ ապահովում են հայտատուի կողմից ԷԹՍ բանալու եւ ԷԹՍ ստուգման բանալու ստեղծման հնարավորությունը.

6) Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրի վարումը, այդ թվում՝ Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատներում ներառվող տեղեկատվությունն ու ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների գործողությունը դադարեցնելու կամ չեղյալ համարելու ամսաթվի եւ նման դադարեցման կամ չեղյալ համարելու հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունն ընդգրկող ռեեստրի վարումը.

7) ցանկացած ժամանակ ցանկացած անձին Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրի անհատույց հասանելիության ապահովումը՝ օգտագործելով տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցերը, այդ թվում՝ օգտագործելով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցը.

8) հայտատուների դիմումներով ԷԹՍ բանալիների եւ ԷԹՍ ստուգման բանալիների ստեղծումը.

9) Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնի կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների ռեեստրում ԷԹՍ ստուգման բանալիների եզակիության ստուգումը.

10) Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, ԷԹՍ Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների դիմումներով ստուգումը.

11) իր կողմից տրված ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների կառավարման հետ կապված այլ գործունեության իրականացումը:

4.2.18.3. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը պետք է ստեղծված լինի բաց բանալիների ենթակառուցվածքի (Public Key Infrastructure) հիման վրա՝ X.509 Public Key Infrastructure-ի առաջարկություններին համապատասխան, եւ օգտագործի այդ նպատակների համար Հանձնաժողովի կողմից հաստատվող ԷԹՍ համաձայնեցված գաղտնագրային ստանդարտները եւ հեշավորման գործառույթի համաձայնեցված գաղտնագրային ստանդարտները:

4.2.18.4. Հանձնաժողովի հավաստագրման կենտրոնը պետք է օգտագործի միայն ԷԹՍ միջոցները եւ հավաստագրման կենտրոնի միջոցները, որոնք համաձայնեցվել են լիազորված մարմինների հետ եւ այդ նպատակների համար հաստատվել են Հանձնաժողովի կողմից:

4.2.19. Ազգային հատվածին ներկայացվող պահանջները

4.2.19.1. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգին ներկայացվող պահանջները

4.2.19.1.1. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը պետք է ապահովի լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միացումն ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղուն՝ ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության ապահովման համար:

4.2.19.1.2. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը պետք է ապահովի կիրառական տեղեկատվական համակարգերով ձեւավորվող էլեկտրոնային փաստաթղթերը մինչեւ ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղի հասցնելը:

4.2.19.1.3. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը պետք է ապահովի ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղուց ստացված էլեկտրոնային փաստաթղթերը մինչեւ կիրառական տեղեկատվական համակարգեր հասցնելը:

4.2.19.1.4. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը պետք է ապահովի ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղուց էլեկտրոնային փաստաթղթերի մարշրուտիզացիան մինչեւ հաղորդագրություն ստացողի կիրառական տեղեկատվական համակարգ:

4.2.19.1.5. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգը պետք է ապահովի էլեկտրոնային փաստաթղթի մարշրուտիզացիայի եւ մշակման գործառույթի իրականացման համար անհրաժեշտ տեխնոլոգիական տեղեկատվության փոխանցումը կիրառական տեղեկատվական համակարգի եւ ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու միջեւ: Նշված տեխնոլոգիական տեղեկատվության կառուցվածքը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

4.2.19.1.6. Միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.19.2. Ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.19.2.1. Ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը, այդ թվում՝ վստահության անդրսահմանային տարածքի ստեղծման, զարգացման եւ գործունեության այն պահանջներին համապատասխան, որոնք մշակվում են Հանձնաժողովի կողմից լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ եւ հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ Պայմանագրի թիվ 3 հավելվածի 18-րդ կետի եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն՝

1) էլեկտրոնային փաստաթղթի եւ ԷԹՍ-ի իսկության ստուգումը.

2) էլեկտրոնային փաստաթղթի ամբողջականության ստուգումը.

3) ԷԹՍ վավերականության ճանաչումը, որով ստորագրված է ազգային հատվածում ծագող էլեկտրոնային փաստաթուղթը, այդ թվում՝ այդ էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրելուց հետո դրա մեջ ներառված փոփոխությունների բացակայության հաստատումը եւ ԷԹՍ ստուգման բանալու համապատասխան՝ սերտիֆիկատը տիրապետողին այն ԷԹՍ պատկանելիության հաստատումը, որով ստորագրված է այդ էլեկտրոնային փաստաթուղթը.

4) Հանձնաժողովի ՎԵԿ-ի, այլ անդամ պետության ազգային հատվածի ՎԵԿ-ի էլեկտրոնային ստորագրության վավերականության ճանաչումը, որով ստորագրված է ազգային հատվածում ներառված էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքը, այդ թվում՝ ստուգման այդ արդյունքը ստորագրելուց հետո դրա մեջ ներառված փոփոխությունների բացակայության հաստատումը եւ ԷԹՍ ստուգման բանալու համապատասխան՝ սերտիֆիկատը տիրապետողին այն ԷԹՍ պատկանելիության հաստատումը, որով ստորագրված է ստուգման այդ արդյունքը.

5) ազգային հատվածի ՎԵԿ-ի կողմից ազգային հատվածում ծագող էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքի այն ԷԹՍ-ով ստորագրումը, որը հիմնված է ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի կողմից ազգային հատվածի ՎԵԿ-ին տրված ԷԹՍ-ի ստուգման բանալու սերտիֆիկատի վրա.

6) ազգային հատվածի ՎԵԿ-ի կողմից ազգային հատվածում ներառվող էլեկտրոնային փաստաթղթի ԷԹՍ-ի ստուգման արդյունքի այն ԷԹՍ-ով ստորագրումը, որը հիմնված է, անդամ պետության օրենսդրությանը եւ Միության իրավունքին համապատասխան, ազգային հատվածի ՎԵԿ-ին տրված ԷԹՍ-ի ստուգման բանալու սերտիֆիկատի վրա.

7) ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի կողմից կատարվող գործառնությունների փաստաթղթավորումը.

8) Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների պահանջներով ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

9) ԷԹՍ-ի կիրառման իրավաչափության ստուգումը.

10)այն անդորրագրերի ձեւավորումը, որոնք պարունակում են էլեկտրոնային փաստաթղթերի եւ ԷԹՍ-ի ստուգման արդյունքները.

11) այլ գործառույթներ, որոնք սահմանվում են ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում՝ սույն տեխնիկական առաջադրանքի 4.2.19.2.2 կետին համապատասխան:

Ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի կողմից անցկացվող ստուգումները, ինչպես նաեւ այդ ստուգումների արդյունքներն արտացոլող անդորրագրերի ձեւավորումն իրականացվում են «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հաձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ընթացքում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման մասին» հիմնադրույթին համապատասխան:

4.2.19.2.2. Ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.19.3. Ազգային հատվածի դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.19.3.1. Ազգային հատվածի դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի հսկվող պարամետրերի այն շեղումների մասին իրադարձությունները դիտանցման մատյանում գրանցելու գործառույթի իրականացումը, որոնք ազդում են ազգային հատվածի ինտեգացիոն անցուղու աշխատունակության եւ ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի վրա:

4.2.19.3.2. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի հասանելիության հսկողությունը՝

1) այն ծառայությունների, որոնք ապահովում են ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու գործունեությունը.

2) այն ծառայությունների, որոնք ապահովում են ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի գործունեությունը.

3) ինտեգրված համակարգի հետ ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու փոխգործակցության միջերեսների:

4.2.19.3.3. Դիտանցման եւ կառավարման ենթահամակարգը պետք է ապահովի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ինտեգացիոն անցուղու եւ ազգային հատվածի ՎԵԿ-ի ենթահամակարգի աշխատունակության վրա ազդող կրիտիկական իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացումը՝ իրադարձության առաջացման հիման վրա:

4.2.19.3.4. Ազգային հատվածի դիտանցման եւ կառավարման ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.19.4. Ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգին ներկայացվող պահանջները

4.2.19.4.1. Ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգը, կախված տեղեկատվության անվտանգության վտանգներից, տեղեկատվության անվտանգությունը խախտողի մոդելից, պաշտպանության օբյեկտների կազմից, տեղեկատվական տեխնոլոգիաներից եւ ազգային հատվածի կառուցվածքային-գործառական բնութագրերից, պետք է ապահովի հետեւյալ խնդիրների կատարումը՝

1) հասանելիության սուբյեկտների եւ հասանելիության օբյեկտների նույնականացում եւ իսկորոշում.

2) հասանելիության օբյեկտներին հասանելիության սուբյեկտների հասանելիության կառավարում.

3) նույնականացուցիչների եւ իսկորոշման միջոցների կառավարում.

4) տեղեկատվության հակավիրուսային պաշտպանություն.

5) տեղեկատվության մեքենայական կրիչների պաշտպանություն.

6)անվտանգության իրադարձությունների գրանցում.

7) ցանցային մակարդակով եւ սերվերների ու աշխատակայանների մակարդակով ներխուժումների բացահայտում (կանխում).

8) տեղեկատվության պաշտպանվածության հսկողություն (վերլուծություն).

9) սահմանափակ տարածման տեղեկատվության եւ տեղեկատվության պաշտպանության միջոցների՝ չարտոնված մուտքից պաշտպանություն.

10) ազգային հատվածի եւ ազգային հատվածում ընդգրկված տեղեկատվության ամբողջականության ապահովում.

11) տեղեկատվության հասանելիության ապահովում.

14) տեխնիկական միջոցների պաշտպանություն.

16) կապի եւ տվյալների փոխանցման համակարգերի պաշտպանություն:

4.2.19.4.2. Ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգը պետք է ապահովի տեղեկատվական անվտանգության բացահայտված միջադեպերի վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տեղեկատվական անվտանգության ենթահամակարգ՝ նման միջադեպի առաջացման հիման վրա:

4.2.19.4.3. Ազգային հատվածի պաշտպանության ենթահամակարգին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.19.5. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերին ներկայացվող պահանջները

4.2.19.5.1. Գործառութային առումով ազգային հատվածում չներառված լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերը պետք է ապահովեն իրենց անդամ պետության տարածքում ընդհանուր գործընթացների իրագործումը:

4.2.19.5.2. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի փոխգործակցությունն ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու հետ պետք է իրականացվի միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգի օգտագործմամբ:

4.2.19.5.3. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերը պետք է ապահովեն միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգից ստացված էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային տեսքով տեղեկությունների մշակման կիրառական տրամաբանության իրագործումը՝ ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան:

4.2.19.5.4. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերը պետք է ապահովեն միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգի հետ փոխգործակցություն՝ ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում:

4.2.19.5.5. Էլեկտրոնային փաստաթղթերը եւ էլեկտրոնային տեսքով տեղեկությունները, որոնք ձեւավորվում են ընդհանուր գործընթացների իրականացմանը մասնակցող լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերով, պետք է համապատասխանեն ընդհանուր գործընթացների տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված պահանջներին:

4.2.19.5.6. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերը պետք է օգտագործեն միասնական նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ՝ ընդհանուր գործընթացների իրագործման շրջանակներում:

4.2.19.5.7. Լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերին ներկայացվող պահանջները կարող են ճշգրտվել ինտեգրված համակարգի իրագործման ընթացքում:

4.2.20. Ինտեգրված համակարգի լրացուցիչ գործառույթներին ներկայացվող պահանջները

4.2.20.1. «Մեկ պատուհանի» ազգային մեխանիզմի գործունեության շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության ապահովմանը ներկայացվող պահանջները

4.2.20.1.1. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի մայիսի 29-ի թիվ 68 որոշմամբ հավանության արժանացած՝ Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան՝ նախատեսված է արտաքին տնտեսական գործունեությունը կարգավորող պետական մարմինների՝ միմյանց միջեւ եւ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների հետ փոխգործակցության ընթացակարգերի օպտիմալացում: Պետական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաեւ անհրաժեշտ փաստաթղթեր եւ տեղեկություններ ստանալը դյուրացնելու համար արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին անհրաժեշտ է ապահովել պատշաճ տեղեկատվական փոխգործակցություն՝ ինտեգրված համակարգի միջոցներով:

4.2.20.1.2. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 19 որոշմամբ հաստատված՝ Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրագործման միջոցառումների պլանին համապատասխան՝ պետք է կազմակերպվի «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների միջեւ տեղեկատվական փոխգործակցություն: Ընդ որում, տեղեկատվական փոխգործակցությունը

«միասնական պատուհանի» ազգային մեխանիզմների գործունեության շրջանակներում պետք է հիմնվի հետեւյալ սկզբունքների վրա՝

1) մի անդամ պետության «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմի միջոցով շահագրգիռ անձանցից ստացված տեղեկատվությունն այլ անդամ պետությունների շահագրգիռ պետական մարմինների կողմից իրենց իրավասություններին համապատասխան օգտագործելու հնարավորությունը.

2) վստահության անդրսահմանային տարածության օգտագործմամբ արդիական, միասնականացված եւ ներդաշնակեցված այնպիսի տեղեկություններ պարունակող էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման կազմակերպումը, որոնք բավարար են արտահանման, ներմուծման եւ տարանցման գործառնություններ կատարելու համար.

3) «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների աշխատանքի շրջանակներում նոր անդամ պետությունների՝ տեղեկատվական փոխգործակցությանը հավասար պայմաններով միացնելու հնարավորությունը.

4) «մի պետության արտահանումն այլ պետությունում ներմուծում է» սկզբունքով՝ «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների գործունեության շրջանակներում Միության անդամ չհանդիսացող պետությունների տեղեկատվական փոխգործակցություն կազմակերպելու հնարավորությունը։

4.2.20.1.3. «Մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների միջեւ տեղեկատվական փոխգործակցության զարգացումը պետք է իրականացվի «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների գործունեության ապահովման ընթացքում գործողության մեջ դրված ընդհանուր գործընթացների օպտիմալացման եւ իրագործման միջոցով՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ։

4.2.20.1.4. Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղություններով նախատեսված տեղեկատվական փոխգործակցության

ապահովումը պետք է իրականացվի նաեւ ինտեգրված համակարգի հետեւյալ ենթահամակարգերի օգտագործմամբ՝

1) նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգը.

2) Միության տեղեկատվական պորտալը, ներառյալ՝ միջպետական ծառայությունների պորտալը եւ արտաքին տնտեսական գործունեության հարցերով տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվական աջակցության պորտալը.

3) ինտեգրացիոն հարթակը, այդ թվում՝ արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության ենթահամակարգը:

4.2.20.2. Թեթեւ արդյունաբերության ապրանքների դրոշմավորման համակարգի գործառույթների աջակցության ապահովմանը ներկայացվող պահանջները

4.2.20.2.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2014 թվականի ապրիլի 28-ի թիվ 28 որոշմանը համապատասխան՝ ստեղծվում է թեթեւ արդյունաբերության արտադրանքի առանձին տեսակների դրոշմավորման համակարգ՝ անդամ պետությունների տարածքներում ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողության եւ ապրանքների ներմուծման ու արտադրման օրինականության ապահովման նպատակներով:

4.2.20.2.2. Դրոշմավորման համակարգի տեղեկատվական-տեխնոլոգիական աջակցության ապահովման համար պետք է ստեղծվի ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգ, որը պետք է բաղկացած լինի անդամ պետությունների փոխգործակցող ազգային բաղադրիչներից եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն բաղադրիչից:

4.2.20.2.3. Հանձնաժողովի ինտեգրացիոն բաղադրիչը պետք է իրականացվի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի կազմում եւ նախատեսված լինի՝

1) թեթեւ արդյունաբերության ապրանքների դրոշմավորման համակարգի աջակցության համար անհրաժեշտ ընդհանուր ռեեստրների, տեղեկագրքերի եւ դասակարգիչների վարման համար.

2) թեթեւ արդյունաբերության ապրանքների դրոշմավորման ոլորտում վերլուծական հաշվետվությունների հավաքման եւ ձեւավորման համար.

3) լիազորված մարմինների եւ շահագրգիռ անձանց համար թեթեւ արդյունաբերության ապրանքների դրոշմավորման ոլորտում ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին հասանելիության տրամադրման համար:

4.2.20.2.4. Հանձնաժողովի ինտեգրացիոն բաղադրիչի գործառույթների ապահովումը պետք է իրականացվի ինտեգրված համակարգի ենթահամակարգերի օգտագործմամբ, այդ թվում՝

1) նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգի.

2) տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի.

3) Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ:

4.2.20.3. Մաքսային ենթակառուցվածքի դիտանցման գործառույթների աջակցության ապահովմանը ներկայացվող պահանջները

4.2.20.3.1. Ինտերգված համակարգը պետք է ապահովի մաքսային ենթակառուցվածքի ոլորտում հետեւյալ գործառույթների տեղեկատվական-տեխնոլոգիական աջակցությունը՝

1) Միության տրանսպորտա-տարանցիկ ներուժի գնահատումը՝ ըստ մաքսային ենթակառուցվածքի զարգացման.

2) մաքսային ենթակառուցվածքի ոլորտում Հանձնաժողովի որոշումների կիրառման եւ մաքսային նպատակներով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման պրակտիկայի արդյունավետության բազմագործոն վերլուծությունը եւ դիտանցումը.

3) տեղեկատվական հոսքերի վերլուծությունը եւ ուսումնասիրությունը թույլատրման փաստաթղթերի անդրսահմանային օգտագործման դեպքում.

4.2.20.3.2. Մաքսային ենթակառուցվածքի դիտանցման նպատակով պետք է իրականացվեն հետեւյալ գործառույթները՝

Արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշների կազմի եւ վիճակագրության ձեւավորում եւ անցկացում՝ ըստ Միության տրանսպորտա-տարանցիկ ներուժի.

2) մաքսային ենթակառուցվածքի զարգացման գնահատման համար ցուցանիշների կազմի ձեւավորում, հաշվարկ եւ վարում.

3) մակրոտնտեսական ցուցանիշների եւ մաքսային վիճակագրության ցուցանիշների վերլուծություն, ինչպես նաեւ մաքսային ենթակառուցվածքի զարգացման մակարդակից նման ցուցանիշների կախվածության մոդելավորում.

4) տարանցիկ հոսքերի փոփոխությունների գնահատում՝ կախված տրված գործոնների ազդեցության ժամանակ մաքսային ենթակառուցվածքի վիճակից.

5) մաքսային ենթակառուցվածքի ոլորտում մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկի աջակցություն.

6) թույլատրման փաստաթղթերի անդրսահմանային օգտագործման վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծություն.

7) տեղեկատվության փոխանակման վիճակագրական տվյալների դիտանցում:

4.2.20.3.3. Մաքսային ենթակառուցվածքի դիտանցման գործառույթների ապահովումը պետք է իրականացվի՝ տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի օգտագործմամբ:

4.2.20.4. Դեղամիջոցների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի գործառույթների աջակցության ապահովմանը ներկայացվող պահանջները

4.2.20.4.1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23–ի համաձայնագրով նախատեսված է բժշկական դեղամիջոցների շրջանառության ոլորտում Հանձնաժողովի կողմից տեղեկատվական համակարգ ստեղծելը եւ դրա գործունեությունն ապահովելը:

4.2.20.4.2. Դեղամիջոցների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգը պետք է իրագործվի Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի կազմում եւ նախատեսված լինի Միության շրջանակներում գործող՝ դեղամիջոցների շրջանառության ոլորտում պահանջների վերաբերյալ տեղեկատվության, Միության դեղամիջոցների միասնական ռեեստրում պարունակվող տեղեկատվության, դեղազգոնության տվյալների, ինչպես նաեւ տվյալների հետեւյալ բազաներում պարունակվող տեղեկատվության տրամադրման համար՝

1) որակի պահանջներին չհամապատասխանող դեղամիջոցների, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածքներում հայտնաբերված կեղծված եւ (կամ) կոնտրաֆակտ դեղամիջոցների տվյալների միասնական տեղեկատվական բազան.

2) դեղամիջոցների նկատմամբ հայտնաբերված անցանկալի ռեակցիաների (գործողությունների) տվյալների միասնական տեղեկատվական բազան, որը ներառում է դեղամիջոցների անարդյունավետության մասին հաղորդագրություններ.

3) բժշկական կիրառման համար կասեցված, չեղարկված եւ արգելված դեղամիջոցների վերաբերյալ տվյալների միասնական տեղեկատվական բազան:

4.2.20.4.3. Դեղամիջոցների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի գործառույթների ապահովումը պետք է իրականացվի ինտեգրված համակարգի ենթահամակարգերի օգտագործմամբ, այդ թվում՝

1) նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգի.

2) տեխնիկական կանոնակարգման ենթահամակարգի.

3) տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի.

4) Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ:

4.2.20.4.4. Այն տվյալների փոխանակումը, որոնք անհրաժեշտ են լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ 4.2.20.4.2 կետում նշված ռեեստրների եւ տվյալների բազաների ձեւավորման եւ վարման համար, իրականացվում է ընդհանուր ընթացակարգերի իրականացման շրջանակներում:

4.2.20.5. Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի գործառույթների աջակցության ապահովմանը ներկայացվող պահանջները

4.2.20.5.1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23–ի համաձայնագրով նախատեսված է բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում Հանձնաժողովի կողմից տեղեկատվական համակարգի ձեւավորում եւ վարում:

4.2.20.5.2. Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգը նախատեսված է Միության շրջանակներում անվտանգ, որակյալ եւ արդյունավետ բժշկական ապրանքատեսակների շրջանառության համար պայմանների ապահովման նպատակով եւ ներառում է՝

1) Միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրը.

2) լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրը.

3) բժշկական արտադրատեսակների անվտանգության, որակի եւ արդյունավետության դիտանցման տվյալների միասնական տեղեկատվական բազան։

4.2.20.5.3. Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի գործառույթների ապահովումը պետք է իրականացվի ինտեգրված համակարգի ենթահամակարգերի օգտագործմամբ, այդ թվում՝

1) նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, ռեեստրներ եւ ռեգիստրներ վարելու ենթահամակարգի.

2) տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի.

3) Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ։

4.2.20.5.4. Այն տվյալների փոխանակումը, որոնք անհրաժեշտ են լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ 4.2.20.5.2 կետում նշված ռեեստրների եւ տվյալների բազաների ձեւավորման եւ վարման համար, իրականացվում է ընդհանուր ընթացակարգերի իրականացման շրջանակներում։

4.3. Ապահովման տեսակներին ներկայացվող պահանջները

4.3.1. Լեզվաբանական ապահովմանը ներկայացվող պահանջները

4.3.1.1. Լեզվաբանական ապահովմանը ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքների մեջ։

4.3.1.2. Ինտեգրված համակարգը պետք է ստեղծվի առարկայական ոլորտի նկարագրման ժամանակակից լեզուների եւ միջոցների, ծրագրային

ապահովման նախագծման եւ մշակման կիրառմամբ՝ հաշվի առնելով միջազգային փորձը եւ լավագույն պրակտիկան:

4.3.2. Ծրագրային ապահովմանը ներկայացվող պահանջները

4.3.2.1. Այն ծրագրային ապահովումը, որն օգտագործվում է ինտեգրված համակարգի գործունեության համար, պետք է համատեղելի լինի ԱՓԱԻՏՀ գործունեության համար օգտագործվող ծրագրային ապահովման հետ:

4.3.2.2. Ծրագրային ապահովմանը ներկայացվող մանրամասն պահանջները պետք է սահմանված լինեն համապատասխան մասնավոր տեխնիկական առաջադրանքների մեջ:

4.3.3. Տեխնիկական ապահովմանը ներկայացվող պահանջները

4.3.3.1. Ինտեգրված համակարգի տեխնիկական ապահովմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

4.3.3.1.1. Ինտեգրված համակարգի տեխնիկական ապահովումը պետք է ապահովի ինտեգրված համակարգի ստեղծման, զարգացման եւ շահագործման, ինչպես նաեւ անձնակազմի ուսուցման ամբողջ շրջանը:

4.3.3.1.2. Ինտեգրված համակարգի տեխնիկական ապահովությունը պետք է ներառի առնվազն հետեւյալ հաղորդաշղթաները՝

1) աշխատանքային հաղորդաշղթա. օգտագործվում է ինտեգրված համակարգի փորձնական եւ արդյունաբերական շահագործման ժամանակ ինտեգրված համակարգի բաղադրիչների գործունեության համար.

2) թեստային հաղորդաշղթա. օգտագործվում է թեստավորման նպատակների, այդ թվում՝ ինտեգրված համակարգի բաղադրիչների միջպետական թեստավորման համար.

3) ուսուցողական հաղորդաշղթա. օգտագործվում է մասնագետների ուսուցման համար:

4.3.3.1.3. Թեստային եւ ուսուցողական հաղորդաշղթաները կարող են միավորված լինել, ընդ որում, հաղորդաշղթաների միավորումը չպետք է հանգեցնի թեստավորման եւ ուսուցման անցկացման գործընթացների վատթարացմանը:

4.3.3.1.4. Ինտեգրված համակարգի տեխնիկական ապահովությունը պետք է ապահովի սույն տեխնիկական առաջադրանքի 4.1.5 կետում նշված հուսալիության պահանջների կատարումը:

4.3.3.2. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքին ներկայացվող պահանջները

4.3.3.2.1. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքը պետք է ունենա լիովին կապակցված IP տոպոլոգիա ինտեգրված համակարգի սահմաններում:

4.3.3.2.2. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքը պետք է ապահովի ինտեգրված համակարգի բաղադրիչների միացման խափանումների նկատմամբ կայուն սխեման՝ հիմնական եւ պահուստային տվյալների փոխանցման կապուղիների տրամադրմամբ:

4.3.3.2.3. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքը պետք է ապահովի ինտեգրված համակարգի հատվածների միջեւ ոչ պակաս, քան 1 024 Մբ/վ թողունակություն:

4.3.3.3. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքի բազային ծառայություններին ներկայացվող պահանջները

4.3.3.3.1. Ինտեգրված համակարգի ցանցային ենթակառուցվածքի բազային ծառայություններն են՝

1) կատալոգի ծառայությունը.

2) դոմենային անվանումները թույլատրելու ծառայությունը.

3) ժամանակի ծառայությունը.

4) փոստային հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունը.

5) պահուստային պատճենման ծառայությունը:

4.3.3.3.2. Կատալոգի ծառայությունը պետք է ապահովի հաշվառման գրառումների կատալոգի վարումը եւ պահպանումը ու ինտեգրված համակարգի գործառական եւ ապահովող ենթահամակարգերում իսկորոշման հնարավորությունը՝ ինտեգրված համակարգից օգտվողների հետեւյալ կատեգորիաների համար՝

1) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի վարիչներ.

2) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի օգտվողներ:

4.3.3.3.3. Դոմենային անվանումները թույլատրելու ծառայությունը պետք է ապահովի դեպի IP-հասցեներ մնեմոնիկ անվանումների թույլտվությունը եւ հակառակը՝ IP-հասցեներից մնեմոնիկ անվանումներ:

4.3.3.3.4. Ժամանակի ծառայությունը պետք է ապահովի ինտեգրված համակարգի սերվերների վրա ժամանակի սինխրոնացման գործառույթները եւ պահպանի միասնական ժամանակ ինտեգրված համակարգի բոլոր ենթահամակարգերի շրջանակներում:

4.3.3.3.5. Փոստային հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունը պետք է ապահովի ինտեգրված համակարգի ենթահամակարգից ինտեգրված համակարգից օգտվողների հետեւյալ կատեգորիաներին փոստային հաղորդագրությունների առաքման ծառայությունը՝

1) ինտեգրված համակարգի ենթահահամակարգերի վարիչներ.

2) ինտեգրված համակարգի ենթահահամակարգերից օգտվողներ.

3) անանուն օգտվողներ («Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցից օգտվողները, որոնք ունեն Միության տեղեկատվական պորտալի միջոցներով ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին հասանելիություն):

4.3.3.3.6. Պահուստային պատճենման ծառայությունը պետք է ապահովի հետեւյալ գործառույթների իրականացումը՝

1) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի տվյալների եւ փոխդասավորության ամբողջական եւ աճողական պահուստային պատճենում.

2) պահուստային օրինակների եւ պարունակության ցուցակի դիտում եւ ընտրված պահուստային օրինակների վերականգնում.

3) վիրտուալ մեքենաների մակարդակով սերվերների պահուստային պատճենում.

4) ինտեգրված համակարգի ենթահամակարգերում օգտագործվող գործառնական համակարգի եւ հավելումների տվյալների եւ փոխդասավորության պահուստային պատճենում.

5) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի տվյալների եւ փոխդասավորության վերականգնման հնարավորություն.

6) ժապավենային կրիչների վրա տվյալների պահուստային օրինակների պահպանման հնարավորություն.

7) հեռացված հրապարակում տվյալների լրացուցիչ պահուստային օրինակի պահպանման հնարավորություն.

8) սկավառակային եւ ժապավենային կուտակիչների վրա տվյալների պահպանման ընդհանուր ծավալի փոքրացման համար տվյալների սեղմում եւ դեդուպլիկացիա.

9) պահուստային պատճենման ֆունկցիոնալության կենտրոնացված կառավարման եւ ինտեգրված համակարգի բաղադրիչների համար տվյալների վերականգնման նպատակով միասնական միջերեսի տրամադրում:

4.3.4. Կազմակերպական ապահովմանը ներկայացվող պահանջները

4.3.4.1. Ինտեգրված համակարգի ստեղծումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից, որն ապահովում է դրա գործունեությունը եւ զարգացումն ազգային հատվածների պատվիրատուների հետ փոխգործակցությամբ:

4.3.4.2. Հանձնաժողովը կազմակերպում է Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, տեղեկատվական ռեսուրսների եւ Հանձնաժողովի համակարգերի նախագծումը, մշակումը, ներդրումը, աշխատանքների արդյունքների ընդունումն ու հետագա ուղեկցումը:

4.3.4.3. Անդամ պետությունը սահմանում է ազգային հատվածի պատվիրատուին, որը կատարում է ազգային հատվածի գործունեության ստեղծման, ապահովման եւ զարգացման պարտականությունները:

4.3.5. Մեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջները

4.3.5.1. Ինտեգրված համակարգի մեթոդական ապահովման խնդիրները պետք է կատարվեն ինտեգրված համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման ժամանակ Հանձնաժողովի կողմից մշակվող տեխնիկական, տեխնոլոգիական եւ մեթոդական փաստաթղթերի, ինչպես նաեւ ազգային մակարդակով մշակվող, դրանք ճշգրտող եւ մանրամասնող փաստաթղթերի օգտագործման հաշվին:

4.3.5.2. Ազգային հատվածի ստեղծման աշխատանքների կատարման շրջանակներում պետք է նախատեսված լինի ազգային մակարդակով այն մեթոդական փաստաթղթերի լրակազմը, որոնք հաշվի են առնում ազգային հատվածի իրագործման առանձնահատկությունները:

4.3.5.3. Ազգային մակարդակով մեթոդական փաստաթղթերի լրակազմը կարող է ներառել՝

1) յուրաքանչյուր ընդհանուր գործընթացի համար ազգային կանոնակարգերը, որոնք ճշգրտում եւ լրացնում են ընդհանուր գործընթացների համապատասխան տեխնոլոգիական փաստաթղթերն ազգային հատվածում ընդհանուր գործընթացների իրագործման մասով.

2) ընդհանուր գործընթացներին համապատասխան տեխնոլոգիական փաստաթղթերի կիրառման միասնական կանոնները՝ հաշվի առնելով ազգային հատվածի իրագործման առանձնահատկությունը:

5. Ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման աշխատանքների կառուցվածքն ու բովանդակությունը

5.1. Ինտեգրված համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման աշխատանքներն իրականացվում են Հանձնաժողովի կողմից լիազորված մարմինների հետ փոխգործակցությամբ մշակվող եւ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող պլանների հիման վրա:

6. Համակարգի նկատմամբ հսկողության եւ դրա ընդունման կարգը

6.1. Համակարգի փորձարկումների տեսակները, կառուցվածքը, ծավալը եւ մեթոդները

6.1.1. Ինտեգրված համակարգի բաղադրիչների փորձարկումների տեսակները եւ կազմը պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 34.603–ին: Փորձարկումների ծավալն ու մեթոդը պետք է սահմանվեն փորձարկումների ծրագրով եւ մեթոդիկայով:

6.1.2. Փորձարկումները պետք է անցկացվեն հաշվողական տեխնիկայի օգնությամբ, որի վրա տեղադրված են փորձարկումների ենթակա ինտեգրված համակարգի բաղադրիչները:

6.1.3. Տեխնիկական, ծրագրային եւ մեթոդական ապահովումը պետք է նախապատրաստվի աշխատանքի համար եւ կարգավորվի՝ նախագծային եւ շահագործման փաստաթղթերին համապատասխան:

6.1.4. Փորձարկումները պետք է անցկացվեն շահագործման իրական պայմաններին առավելագույնս մոտեցված պայմաններում:

6.2. Աշխատանքների ընդունմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

6.2.1. Աշխատանքների հանձնում-ընդունումն իրականացվում է փուլերով՝ սույն տեխնիկական առաջադրանքի 5-րդ բաժնին համապատասխան:

6.2.2. Փորձարկումները պետք է անցկացվեն սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին ինտեգրված համակարգի համապատասխանության ստուգման նպատակով:

6.2.3. Ինտեգրված համակարգի տրված գործառույթների իրականացման ստուգման համար սահմանվում են փորձարկումների հետեւյալ տեսակները՝

1) ինտեգրված համակարգի ենթահահամակարգերի նախնական ավտոնոմ փորձարկումներ.

2) ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումներ:

6.2.4. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերի նախնական ավտոնոմ փորձարկումներն իրենցից ներկայացնում են ինտեգրված համակարգի ենթահամակարգերի տրված գործառույթների իրականացման ստուգման գործընթաց:

6.2.5. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերի նախնական ավտոնոմ փորձարկումների անցկացման պլանավորման համար մշակվում է ծրագիր եւ մեթոդիկա, որոնց համապատասխան անցկացվում է ինտեգրված համակարգի ենթահամակարգերի տրված գործառույթների իրականացման ստուգում՝ ստուգիչ օրինակի վրա:

6.2.6. Ինտեգրված համակարգի ենթահամակարգերի նախնական ավտոնոմ փորձարկումների անցկացման արդյունքում ձեւավորվում է համապատասխան արձանագրություն, որի մեջ ամրագրվում է ինտեգրված համակարգի ենթահամակարգի՝ սույն տեխնիկական առաջադրանքի

պահանջներին համապատասխանելու մասին որոշումը, եւ որոշում է ընդունվում ինտեգրված համակարգի ենթահամակարգի՝ միջպետական թեստավորմանը եւ միջպետական փորձարկումներին պատրաստ լինելու մասին: Նշված պահանջներից շեղումների հայտնաբերման դեպքում ձեւավորվում է անհրաժեշտ բարելավումների ցանկ եւ այդ շեղումները վերացնելու առաջարկվող ժամկետներ:

6.2.7. Ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումներն իրենցից ներկայացնում են ընդհանուր առմամբ ինտեգրված համակարգի տրված գործառույթների իրականացման ստուգման գործընթաց:

6.2.8. Ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումների անցկացման պլանավորման համար մշակվում է ծրագիր եւ մեթոդիկա, որոնց համապատասխան անցկացվում է ընդհանուր առմամբ ինտեգրված համակարգի տրված գործառույթների իրականացման ստուգում:

6.2.9. Ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումներն անցկացվում են ընդունող հանձնաժողովի կողմից, որի կազմը եւ կարգավիճակը սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Ընդունող հանձնաժողովի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների եւ Հանձնաժողովի ներկայացուցիչները:

6.2.10. Ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումները կարող են անցկացվել մի քանի փուլով՝ ըստ ազգային հատվածների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի պատրաստվածության:

6.2.11. Ինտեգրված համակարգի միջպետական փորձարկումների անցկացման արդյունքում ձեւավորվում է համապատասխան արձանագրություն, որի մեջ ամրագրվում է ինտեգրված համակարգի՝ ընդհանուր առմամբ սույն տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխանելու մասին որոշումը, եւ որոշում է ընդունվում ինտեգրված համակարգի՝ շահագործմանը պատրաստ լինելու մասին: Պահանջներից շեղումների հայտնաբերման դեպքում ձեւավորվում է անհրաժեշտ բարելավումների ցանկ եւ այդ շեղումները վերացնելու առաջարկվող ժամկետներ:

7. Ավտոմատացման օբյեկտը համակարգի գործարկմանը նախապատրաստելուն ուղղված աշխատանքների կառուցվածքին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները

7.1. Ավտոմատացման օբյեկտն ինտեգրված համակարգի գործարկմանը նախապատրաստելու համար պետք է անցկացվի տեխնիկական եւ կազմակերպչական համալիր միջոցառումներ, որոնք ներառում են հետեւյալ աշխատանքների կատարումը՝

1) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի տեխնիկական ապահովման արդիականացում՝ ինտեգրված համակարգի կրկին ստեղծվող ենթահամակարգերի զարգացման համար.

2) լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի լրամշակում՝ դրանց՝ անդամ պետությունների միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության համակարգերին միացման ապահովման եւ ընդհանուր գործընթացների իրագործման համար (ըստ անհրաժեշտության).

3) ինտեգրված համակարգի ստեղծման ընթացքում ստեղծված կամ արդիականացված ինտեգրված համակարգի ֆունկցիոնալ եւ ապահովող ենթահամակարգերի զարգացում.

4) սկզբնական բեռնման համար տվյալների պատրաստում, ներառյալ այն տվյալները, որոնք պահվում են դատարանների գործավարության, տեխնիկական կարգավորման, մասնագիտացված փաստաթղթաշրջանառության եւ մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ենթահամակարգերում.

5) այն աղբյուրներից տվյալների տեղափոխում, որոնք կրկին միանում են տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգին եւ վիճակագրության ենթահամակարգին.

6) իրավաբանական նշանակության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման համար օգտագործվող ԷԹՍ ստուգման բանալիների սերտիֆիկատների թողարկում եւ տարածում.

7) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի օգտվողների նույնականացման տվյալների գրանցում նույնականացման տվյալների կառավարման համակարգում.

8) ինտեգրված համակարգի գործառության ապահովման կազմակերպման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների սահմանում.

9) օգտվողների խմբերի՝ ինտեգրված համակարգի տեղեկատվական-ծրագրային միջոցներով աշխատանքների ուսուցման անցկացում:

8. Փաստաթղթավորմանը ներկայացվող պահանջները

8.1. Ինտեգրված համակարգի համար մշակվում են փաստաթղթեր՝ ԳՕՍՏ 34.201-89 եւ ԳՕՍՏ 34.601-90 պահանջներին համապատասխան:

8.2. Շահագործման փաստաթղթերի մատակարարվող լրակազմերի անհրաժեշտ քանակությունը սահմանվում է ինտեգրված համակարգի ստեղծման աշխատանքների պատվիրատու-համակարգողի կողմից:

8.3. Ինտեգրված համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման շրջանակներում մշակվում են հետեւյալ փաստաթղթերը՝

1) ինտեգրված համակարգի ենթահամակարգերի եւ բաղադրիչների համար մասնավոր տեխնիկական առաջադրանքներ.

2) նորմատիվ իրավական եւ տեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաեւ ինտեգրված համակարգի շահագործումը եւ զարգացումն ապահովող մեթոդական նյութերը.

3) Միության տվյալների մոդելի փաստաթղթեր՝ ընդհանուր գործընթացների իրագործման առարկայական տիրույթների շրջանակներում.

4) տեխնոլոգիական փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են տեղեկատվական փոխգործակցությունը՝ ընդհանուր գործընթացներն ինտեգրված համակարգի միջոցներով իրագործելու ժամանակ.

5) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ենթահամակարգերի համար տեխնիկական-աշխատանքային նախագծի փաստաթղթեր, այդ թվում՝

տեխնիկական-աշխատանքային նախագծի ամփոփագիր.

տեխնիկական-աշխատանքային նախագծի բացատրագիր.

սարքավորման եւ նյութերի ամփոփագիր.

ծրագրային ապահովման նկարագրություն.

օգտատիրոջ ձեռնարկ.

վարիչի ձեռնարկ.

փորձարկումների ծրագիր եւ մեթոդիկա, տեխնիկական սպասարկման ձեռնարկ, տեխնիկական ապահովման վերաբերյալ որոշումներ՝ տեխնիկական միջոցների համալիրի նկարագրություն, սարքավորումների մասնագիր.

6) ընդհանուր գործընթացների իրագործման համար Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի կազմում ծառայությունների ծրագրային ապահովման տեխնիկական-աշխատանքային նախագծի փաստաթղթեր, այդ թվում՝

տեխնիկական նախագծի բացատրագիր, փորձարկումների ծրագիր եւ մեթոդիկա, վարիչի ձեռնարկ, օգտագործողի ձեռնարկ:

8.4. Ինտեգրացիոն հարթակի եւ ՎԵԿ-ի ծառայության հավաստագրման կենտրոնի մասնավոր տեխնիկական առաջադրանքները համաձայնեցվում են ազգային հատվածի պատվիրատուների հետ:

8.5. Միության շրջանակներում ինտեգրված համակարգի միջոցներով իրագործվող ընդհանուր գործընթացների ցանկը հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի առանձին որոշմամբ:

9. Փոփոխություններ կատարելը

9.1. Սույն տեխնիկական առաջադրանքի մեջ փոփոխություններն իրականացվում են ԳOUS 34.602-89–ին համապատասխան՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշման հիման վրա: